

ሀላጊነት

ሥራ

مارزق

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهولمتن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

السنة الثالثة والاربعون - العدد ٤٣٠ - Vol. XXXXIII N° 430 - 43-٢٧- SUCU ١٩٩١





ԳՐԻԳՈՐ ՄԱԼԷՉԵԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԹԱՆԳԱՐԱՆԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԷ ԱՂԵՔՍԱՆԳՐԻՈՅ Հ.Մ.Ը.Մ.-«ԿԱՄՔ»Ի 2000 ՆԿԱՐՆԵՐՈՒ ԻՐ ՄԵԾԱՐԺԷՔ ՀԱՒԱՔԱԾՈՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչությունը ուրախութեամբ կը տեղեկացնէ, թէ վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Գրիգոր Մալէզեան, Թորոնթոյէն, Գանատա, միութեան «Վարդէս Տէր Կարապետեան» բանգարանին նուիրած է Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի 100 տարուան պատմութիւնը վաւերագրող (1912-2012) երկու հազար նկարներու իր մեծարժէք հաւաքածոն:

Նկարները դասաւորուած են կաշեպատ երեք մեծ ալ-

պոմներու մէջ: Բոլորը կը գտնուին լաւ վիճակի մէջ, ժամանակագրական կարգով, թուականներու եւ համապատասխան բացատրութիւններու արձանագրութեամբ: Ալպոմները կ'ընդգրկեն նաեւ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի կարգ մը հրատարակութիւնները, ինչպէս՝ եգիպտահայ Ժ., ԺԱ., ԺԲ. եւ ԺԵ. արլեթիկ մրցումներու (1956, 1957, 1958, 1962) պոռչիւրները:

Եղբ. Գրիգոր Մալէզեան 1964-1965 թուականներուն եղած է Աղեքսանդրիոյ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի սկաւտական պատասխանատուն: Հետագային ան հաստատուած է Թորոնթո, Գանատա: Հ.Մ.Ը.Մ.-«Կամք»ի 100-ամեակին առիթով, եղբայրներ Հրաչ Տէր Մարգիսեանի եւ Յարութիւն Մաթէոսեանի հետ ան մաս կազմած է յոբելեար մասնաճիւղի Յուշամատենի Յանձնախումբին: Յուշամատենը հրատարակուած է 286 էջով եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան առաջնորդող խօսքով:

Պատմական լուսանկարներու հաւաքածոյին ըստանձնման առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը եղբ. Գրիգոր Մալէզեանը պատուեց գնահատագիրով մը:

Վարձքը կատար եղբ. Մալէզեանին՝ երկար տարիներու երախտաշատ աշխատանքին համար: Շնորհակալութիւն Լիբանանի Շրջանէն եղբ. Հրանդ Պետրոսեանին, որ իբրեւ կապ, կարելոր ներդրում ունեցաւ նկարներու յայտնաբերման, Հ.Մ.Ը.Մ.ի բանգարանին նուիրման եւ Լիբանան փոխադրութեան աշխատանքին մէջ:



**«Մարգիկ»ի յաջորդ թիւը նուիրուած՝
համա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումին
եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական
13-րդ Ընդհանուր Ժողովին**

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ի՞նչ ըսել, ի՞նչպես ըսել... 2

ՄԵՐ ԿՈՐՈՒՍՏՆԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական 2

Վարչութեան անդամ եղբ. Գարլոս 3

Սէֆերեանի կորուստը 4

Առաջին պատկերդ եւ վերջինը 5

Մեծ պայքարողը՝ եղբ. Գարլոս 6

Սէֆերեան 6

Նկար մը եւ երեք կորուստ... 7

Եղբ. Գարլոս Սէֆերեանի մահուան 8

առիթով ցաւակցագիրներ 8

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի քարոզչական քատրերու 9

պատրաստութեան դասընթացը 10

իրագործուեցաւ յաջողութեամբ 10

ԱԿՆԱՐԿ

Չեռքդ վա՛ր Հ.Մ.Ը.Մ.էն 12

Հ.Մ.Ը.Մ.ը ո՛չ մէկ ձեռով մեղաւոր... 14



Խմբապետիս՝ եղբ. Ժիրայր Սարգիսեանի Հ.Մ.Ը.Մ.ական 15
թանգարանը 23
Հայ ոգիի պահապանը 23

ՅՈՒՇԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի ինքնաշարժով 16
հետախուզական արկածախնդրական մրցումը՝ «ռէլի 16
փէլփըր»ը 1976-ին 16

Վկայութիւններ Հ.Մ.Ը.Մ.ի 18
ֆութպոլի փառաւոր անցեալէն 18

Հ.Մ.Ը.Մ.Ը ՇՐՋԱՓՎԱԿՈՒՄԸ 24
ԱՐՑԱՆԻ ՄԵՋ 24

ՄԱՍՆԱՃԻՂԷ ՄԱՍՆԱՃԻՂ 26



Marzig sports magazine is published by Homenetmen Central Committee-Sevan Building, Rue 77, Sector 4, Bourj Hammoud, Beirut, Lebanon. Tel: 961 1 248043, 961 1 260117, E-mail: marzig@Homenetmen.org, P.O.Box: 80486 Bourj Hammoud, Lebanon, www. Homenetmen.org

Խմբագիր: Վիգէն Աւագեան (vicken.avakian@homenetmen.org)

Խմբագրական կազմ: Գրիգորիս Պողարեան, Սեւան Նազարեան, Յոլեր Փանոսեան, Բաֆֆի Սիւլահեան, Սիւզի Օհանեան, Շանթ Ժամկոչեան եւ Սիլվա Ալավերսեան:

Վարչական կազմ: Աբօ Մոսիկեան, Սիլվա Սաղրեան, Վարդուկ Չըռնզլեան, Վարդան Քսանիկեան, Տիրան Շահինեան եւ Եղիա Քիլիկեան:

Էջադրում եւ ընդհանուր ձեւաւորում: Աբօ Պալեան, Կողբի պատրաստութիւն: Y Concept International, Գրաշարութիւն: Շողիկ Պոյանեան, Տպագրութեան պատրաստութիւն: Photogravure Paklayan, Տպագրութիւն: Համազգայինի «Վահէ Արթեան» տպարան, Պէյրութ, Լիբանան:

Բաժանորդագրութիւն: «Մարզիկ» կը հասնի աշխարհի 25 երկիրներու բաժանորդներու: Տարեկան բաժանորդագրութեան սակ ներդրած է՝ Լիբանան 150,000 Լ.Ս. Միջին Արեւելեան եւ Եւրոպական երկիրներ 65 \$, Մ. Նահանգներ եւ Աւստրալիա 75 \$: Լիբանանի մէջ թերթին հաստատման սակն է 25,000 Լ.Ս.: Ցրում: «Մարզիկ»ի ցրումը Լիբանանի մէջ կը կատարուի յատուկ ցրուիչով (հեռ. 71/239209): Թերթը կարելի է ստանալ նաեւ «Համազգային»ի գրախանութէն: Լիբանանէն դուրս թերթը կը ստացուի «Liban post»ի միջոցով:

«Մարզիկ» կը հրատարակուի Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ - Հասցէ: «Սեան» շէնք, թիւ 77 փողոց, թիւ 4 հատուած, Պուրճ Համուտ, Պէյրութ, Լիբանան 9611248043, 9611260117 marzig@Homenetmen.org Homenetmen - Հ.Մ.Ը.Մ. www.Homenetmen.org

Ի՞ՆՉ ԸՍԵԼ, Ի՞ՆՉՊԷՍ ԸՍԵԼ...

Տէն Քլարք կը նկատուի աշխարհի մեր օրերու ամենէն լայն ժողովրդրականութիւն ունեցող դասախօսներէն մէկը. այլեւայլ նիւթերու մասին ան խօսած է շուրջ երկու միլիոն ունկնդիրներու:

68-ամեայ Տէն Քլարքի դասախօսական արուեստին հիմքը կը կազմեն այնպիսի նիւթեր, որոնք սերտօրէն առնչուած են մարդ արարածի հոգեմտաւոր աշխարհին հետ, ինչպէս՝ մարդկային յարաբերութիւններու ընթացքը, յաջողութեան գաղտնիքը, կամքի զօրութիւնը, իրերօգնութեան եւ ծառայութեան ոգին, ուսումն ու զարգացումը:

Քայց Քլարք ի՞նչպէս յաջողած է այդքան լաւ եւ փրկտրուած դասախօս մը ըլլալ: Ի՞նչ բանի մէջ կը կայանայ անոր յաջողութեան գաղտնիքը:

Ըստ երեւոյթին, ան շատ լաւ գիտէ, թէ ի՞նչ կը խօսի, որո՞ւ կը խօսի եւ ի՞նչպէս կը խօսի: Քլարք գտած է ճամբան հասնելու իր ունկնդիրներու միտքերուն եւ հոգիներուն:

Քլարքի յաջողութեան գաղտնիքը կը թուի շատ պարզ ըլլալ: Որեւէ դասախօսութեան ներկայանալէ առաջ, որեւէ հաւաքականութեան առջեւ խօսելէ առաջ, ան կ'ուսումնասիրէ իր դասախօսութեան միջավայրը, մարդիկը, անոնց հոգեմտաւոր պատրաստութիւնը, տրամադրութիւնները, ակնկալութիւնները եւ ապա միայն կ'որոշէ իր ըսելիքները: Այլապէս յաջողութիւն չի կրնար գտնել ան:

Երեւոյթը անպայման մտածել կու տայ իր մասին, որովհետեւ մեր մօտ խօսողները ընդհանրապէս նկատի չեն ունենար խօսքի ընդունուած կանոնները, այն՝ որ խօսք մը, յատկապէս մեր օրերուն, պէտք է ըլլայ յստակ, կարճ եւ կուռ:

Մարդիկ այլեւս համբերութիւնը եւ ժամանակը չունին 15 վայրկեան տեւող բացման խօսք մը լսելու, ոչ ալ՝ 45 վայրկեան տեւողութեամբ եկեղեցական քարոզ մը մտիկ ընելու: Անտիք Իսահակեան պիտի ըսէր. «Կարճ խօսքը նման է երկար խելքի, երկարը՝ կարճ խելքի»:

Արագութեան այս դարուն, մարդիկ սովորաբար հակիրճ եւ շինիչ խօսքեր կ'արտասանեն, առանց ձանձրացնելու ունկնդիրները: Մարդիկ կը տիրապետեն խօսելու



արուեստին: Գիտեն ընդհանրապէս ի՞նչ չըսել, որովհետեւ ըսուելիք խօսքերէն աւելի կարելոր են չըսուելիք խօսքերը: Անտեղի ու անկապ խօսքերը:

Գիտեն նաեւ, որ երբեք խօսելու սիրոյն պէտք չէ խօսիլ, որպէսզի կարելի ըլլայ ազդել եւ տպաւորել, հաճելի եւ ախորժելի թրփի ունկնդիրներու:

Աշխարհի մեծագոյն երկիրներու նախագահներուն ելոյթները այսօր հազիւ 10-15 վայրկեան կը տեւեն, մինչդեռ մենք մեր

հանդիսութիւններուն տակաւին 35-45 վայրկեաննոց խօսքեր մտիկ ընելու կը պարտաւորուինք:

Փոխուած են օրերը: Փոխուած է նաեւ մարդոց ժամանակի հասկացողութիւնը: Այսօր որեւէ հանդիսութիւն 1-1.5 ժամէն աւելի չի կրնար տեւել, հետեւաբար՝ որեւէ խօսք 10-15 վայրկեանէն աւելի չի կրնար ըլլալ: Մարդոց համբերութիւնը կարելի չէ չարաչար օգտագործել եւ ժամերով զիրենք աթոռներուն զամուած պահել:

Այսքանը ձեւին մասին: Հապա բովանդակութիւնը:

Տէն Քլարք իր արծարծած բոլոր նիւթերը կը ներկայացնէ պերճախօսութեամբ՝ արամտութիւններով, երգիծանքով եւ կենդանի օրինակներով:

Իսկ ի՞նչպէս կ'արտայայտուին մեր բանախօսներն ու դասախօսները: Մեծ մասամբ անոնք կը խօսին պաշտօնական, չափազանց լուրջ եւ երբեմն ալ բարդ ոճով մը, որ յաճախ քիչերու միայն կրնայ հասկնալի թուիլ:

Քլարքի օրինակը թելադրական է. դասախօսներ նախապէս պէտք է գիտնան, թէ ո՞ր եւ որո՞ւ կը խօսին: Մարգական փառատօնի արտասանուած խօսք մը չի նմանիր գիտաժողովի մը արտասանուած ակադեմական խօսքին, ոչ ալ՝ ընկերային հանդիպումի խօսք մը կրնայ սկաւառական հաւաքի մը ընթացքին արտասանուիլ: Անէն տեղ, ամէն ժամանակ եւ ամէն լսարան ունի իր պահանջները:

Հայաստանի մէջ կարելի է ձեռով մը արտայայտուիլ, Մ. Նահանգներու մէջ՝ այլ ձեռով, իսկ Պէլորոսի մէջ՝ բոլորովին այլ: Մարդոց հայերէնի իմացութեան մակարդակը, տարիքը եւ հետաքրքրութիւնները պէտք է մտածել տայ դասախօսներու՝ յարմարելու իրենց ունկնդիրներուն եւ ոչ թէ ունկնդիրները իրենց յարմարեցնելու:



Շատ պատահած է, որ հեռուներն հրաւիրուած են անուանի դասախօսներ, որոնք սակայն չեն յաջողած գոհացնել իրենց ունկնդիրները: Ինչո՞ւ: Պարզ այն պատճառով, որ անոնք չեն պատրաստուած, իրենց ունկնդիրներուն մասին տուեալներ չեն հաւաքած եւ իրենց գիտցածը նոյնութեամբ խօսած են իրարմէ տարբեր միջավայրերու եւ իրարմէ տարբեր ընկալման եղանակ ունեցող մարդոց:

Պատահած է աւելին: Եղած են դասախօսներ, որոնք իրենց ունկնդիրները արհամարհած, բոլորովին անտեղեակ մարդիկ կարծած են եւ անոնց խօսած են այնպիսի պարզունակ ձեւով մը, որ ո՛չ թէ ձանձրոյթ, այլ՝ վիրաւորանք պատճառած են:

Վերջին հաշուով, դասախօսութիւն ունկնդրելու գացողները նոր եւ հետաքրքրական բաներ կ'ուզեն իմանալ, իրենց գիտելիքներուն պաշարը հարստացնելու հա-

մար եւ ո՛չ թէ հազար անգամ ծամծմուած բաները վերըստին ծամելու համար:

Մարդիկ կը փափաքին լսել վարպետօրէն կառուցուած գրաւոր կամ բանաւոր խօսքեր, որոնք ըլլան ազդեցիկ, վայելուչ եւ պատկերաւոր: Անոնք երբեք չեն փափաքիր արուեստական, անխնամ, բարդ կամ բառարանէ հանուած բառերով խօսքեր լսել: Յղկուած եւ բովանդակալից խօսքը միշտ փնտռուած է:

Մեր հիները խօսք մը ունէին. «Տաշուած քարը գետին չի մնար... եթէ խօսիլ գիտնայ»: Անոնք ըսել կ'ուզէին, որ լաւ խօսքը նոյնիսկ քարերը իրենց տեղէն կը շարժէ: Այ ո՞ր մնաց մարդիկը:

Իսկ նման խօսք խօսողներ ինչո՞ւ չունինք եւ ի՞նչպէս կրնանք ունենալ արդէօք:

Հ.Մ.Ը.Մ.Ի 26 ՇՐՋԱՆՆԵՐ, 111 ՄԱՆՆԱՃԻՒՂԵՐ ԵՒ ՄԻԱՌՈՐՆԵՐ

Հայաստան: «Գ. Յակոբեան» (Երեւան), «Յ. Հինդլեան» (Երեւան), «Վ. Չաքարեան» (Երեւան), Արովեան (Արովեան), «Հ. Առուստամեան» (Չարենցաւան), «Վ. Չերազ» (Կիւմրի), «Շ. Բրիսեան» (Երեւան), «Վ. Չերազ» (Երեւան), «Վ. Բախշեան» (Արմատիր), «Հրազդան» (Հրազդան), «Վ. Ռոստոմեան» (Էջմիածին), Մարտունի (Մարտունի), «Ա. Չոհրապեան» (Վետի), «Տ. Խոյեան» (Երեւան), «Գ. Վարդան» (Երեւան). **Արցախ:** Ստեփանակերտ. **Վրաստան:** Ախալքալաք, Ախալցխա, Թիֆլիս. **Ռուսիա:** Մոսկուա. **Լիբանան:** Պէյրութ, Չահլէ, Թրիփոլի, Պ. Համուտ, Այնճար, Դիմի, Անթիլիաս, Շրտէյտէ, Պաուլիէ, Ռատուտա. **Սուրիա:** Հալէպ, Գամասկոս, Լաթաքիա, Գամիշլի, Քեսապ. **Յորդանան:** Ամման. **Պաղեստին:** Երուսաղէմ, Հայֆա, Եաֆա. **Եգիպտոս:** Գահիրէ, Աղեքսանդրիա. **Իրաք:** Պաղատատ. **Քուէյթ:** Քուէյթ. **Կիպրոս:** Նիկոսիա. **Յունաստան:** Աթէնք, Գոթիմիա, Սելանիկ. **Անգլիա:** Լոնտոն. **Աստրիա:** Վիեննա. **Ֆրանսա:** Փարիզ, Վալանս, Մարսէյ. **Հոլանտա:** Այմօլ, Արքմար, Առնհեմ. **Գերմանիա:** Միւնիխ. **Շուէտ:** Սթոքհոլմ, Վեսթերոս, Սոտերթելիա, Օրեսայրո. **Պուլկարիա:** Սոֆիա, Ռոստ, Փրովտիվ, Վառնա, Շումէն, Պուրկաս. **Գանատա:** Մոնթրէալ, Համիլթըն, Թորոնթօ, Քէմպրիձ, Սէնթ Գաթրիմզ, Լաւալ, Վանքուվըր. **Արեւմտեան Մ. Նահանգներ:** Լոս Անձելըս, Սան Ֆրանսիսքօ, «Մատուն» (Ֆրեզնօ), Մոնթեպելլօ, «Ազատամարտ» (Փասատինա), «Արարատ» (Կլենտէյլ), Օրէնձ Քաունթի, «Մասիս» (Սան Ֆեռնանտօ), «Մեյան» (Սան Տիէկօ), «Արազ» (Ինըրնոտ Էմփայր), «Անի» (Սանթա Գլարա), «Շանք» (Քրեստէնթա Հովիտ), «Միփան» (Պրրայէնք), «Արցախ» (Լաս Վեկաս), Ֆինիքս, «Կարս» (Ուոլնաթ Քրիք) «Չաւախք» (Նորթ Հոլիվուտ), «Լոռի» (Մաքրամենթօ), «Կիլիկիա» (Սանթա Զարիթա), «Հրաշք». **Արեւելեան Մ. Նահանգներ:** Ուաշինկթըն, Պոսթըն, Նիւ Եորք, Նիւ Դըրզի, Շիքալօ, Ֆիլատելֆիա, Տիքոնթօ, Փրովիտընս, Ֆլորիտա, Ալպընի, Շարլոթ, Մերիմաք Հովիտ. **Հարաւային Ամերիկա:** Պուէնոս Այրէս, Գորտուպա, Մոնթեվիտէօ. **Աստրալիա:** «Անդրանիկ» (Միտնի), «Արաքս» (Մելբուռն), «Կամք» (Միտնի), «Նաւասարդ» (Միտնի), «Արարատ» (Միտնի).

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ ԵՂԲ. ԳԱՐԼՈՍ ՍԷՖԵՐԵԱՆԻ ԿՈՐՈՒՄՏԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը Շաբաթ, 5 Օգոստոս 2023-ին, խոր կսկիծով գուժեց մահը իր կազմի անդամներէն, Հարաւային Ամերիկայի շրջանէն եղբ. Գարլոս Սէֆէրեանին:

Եղբ. Գարլոս Սէֆէրեան ծնած է 16 Յուլիս 1954-ին, Պուէնոս Այրէս, Արժանիքին: Նախակրթութիւնը ստացած է Հ.Յ.Դ. «Խրիմեան» վարժարանը: Փոքր տարիքէն ան անդամակցած է Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի սկաուտական շարքերուն եւ տարիներու ընթացքին տիրացած է պատասխանատու զանազան պաշտօններու:

1971-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի պատւիրակութեան հետ, եղբ. Գարլոս Սէֆէրեան մասնակցած է սկաուտական միջազգային 13-րդ Ճամպորիին, Ճափոն: 1978-ին ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան: 1981-1984 ան եղած է մասնաճիւղի «Արարատ» սկաուտական խումբի Խորհուրդի անդամ, իսկ 1984-1988՝ սկաուտական խումբի խմբապետ: 1986-ին, եղբ.



Գարլոս Սէֆէրեան գլխաւորած է շրջանի սկաուտական պատուիրակութիւնը՝ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Բ. Բանակումին, Լոնտոն: 1986-1990 ան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան:

1988-ին եղբ. Գարլոս Սէֆէրեան մասնակցած է համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտական խմբապետական երկրորդ համագումարին, Լոս Անճելըս: 1992-ին, իբրեւ Պուէնոս Այրէսի մասնաճիւղի սկաուտական խումբի Խորհուրդի անդամ, ան ստացած է «Wood badge»-ի աստիճան:

Հ.Մ.Ը.Մ.ական գործունէութեան աւելնթեր, եղբ. Գարլոս Սէֆէրեան ունեցած է ազգային-կուսակցական բեղուն ծառայու-

թիւն: Ան մաս կազմած է Հ.Յ.Դ. «Արմենիա» երիտասարդական միութեան, որուն շարքերուն մէջ գաղափարական իր կազմաւորումը ստանալէ ետք՝ ան կատարած է դաշնակցականի իր երդումը եւ նետուած է կուսակցական կեանքի գործադաշտ: Եղած է Հ.Յ.Դ. «Ռոստոմ» կոմիտէի ներկայացուցիչ, իսկ աւելի ուշ՝ Հ.Յ.Դ. «Զաւարեան» կոմիտէի անդամ: Բազմիցս մաս կազմած է Հ.Յ.Դ. Հարաւային Ամերիկայի «Ահարոնեան» Կեդրոնական Կոմիտէի կազմերուն: Այս տարի ան վերընտրուած է Կեդրոնական Կոմիտէի անդամ:

Եղբ. Գարլոս Սէֆէրեան 2008-ին եղած է Հ.Յ.Դ. «Արմենիա» Մշակութային Ընկերակցութեան ատենապետ: Մաս կազմած է «Արմենիա» թերթի եւ ՀՕՄ-ի «Օննիկ Պոտուրեան-Յովհաննէս Տիրապէջիւրեան» Հանգստեան Տան յանձնախումբերուն: Հ.Մ.Ը.Մ.Ի 9-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, 2007-ին, ան կ'ընտրուի Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ՝ քառամեայ շրջանի մը համար: 10-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին, 2011-ին, ան կը վերընտրուի քառամեայ երկրորդ շրջանի մը համար:

14 Հոկտեմբեր 2019-ին, Հ.Մ.Ը.Մ.Ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի բացման պաշտօնական հանդիսութեան (Երեւան, Հայաստան), ի բացակայութեան, եղբ. Գարլոս Սէֆէրեան կը պարգեւատրուի միութեան բարձրագոյն՝ «Արժանեաց» շքանշանով: Շքանշանը կը ստանձնէ զաւակը՝ եղբ. Կարո Սէֆէրեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի 12-րդ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովէն ընտրուած Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Արմանո Թորգոմեանի անակնկալ մահէն ետք, 26 Նոյեմբեր 2021-ին, եղբ. Գարլոս Սէֆէրեան կը նշանակուի Կեդրոնական Վարչութեան անդամ, Հարաւային Ամերիկայի ներկայացուցիչի հանգամանքով:



ԳՈՅԺ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւնը խոր կսկիծով կը գուժէ իր կազմի անդամներէն, միութեան «Արժանեաց» շքանշանակիր, վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական

ԵՂԲ. ԳԱՐԼՈՍ ՍԷՖԵՐԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ 5 Օգոստոս 2023-ին, Պուէնոս Այրէսի մէջ, Արժանիքին:

Եղբ. Գարրոս Սէֆէրեան ամուսնացած է եւ բախտաւորաւ չորս զաւակով՝ Մելինէ, Կարօ, Վիգէն եւ Արի: Անողորհ հիւանդութեան դէմ կարճատեւ շրջան մը պայքարելէ ետք, Գարրոս Սէֆէրեան 69 տարեկանին կեանքէն անդարձ հեռացաւ, խոր սուգի մատնելով Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը եւ յատկապէս Հարաւային Ամերիկայի շրջանը, որուն վերջին քառորդ դարու պատմութեան մէջ ան ձգեց իր անջնջելի հետքն ու դրոշմը:

Եղբ. Գարրոս Սէֆէրեանի յուղարկաւորութիւնը տեղի ունեցաւ Կիրակի, 6 Օգոստոս 2023-ի երեկոյեան, Պուէնոս Այրէսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, ուր յանուն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան, դամբանական խօսք արտասանեց Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Աբրահամ Ահարոնեան (խօսքը տեսնել էջ 6): Թաղման կարգը կատարուեցաւ Երկուշաբթի, 7 Օգոստոսի կէսօրէ առաջ ժամը 11-ին, բրիտանական գերեզմանատան մէջ:



**Խաչիկ Տէր Դուկասեան
ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ**

Առաջինը Արժանթինի էսէյսայի օդակայանն էր, ուր եկած էիք զիս առնելու:

- Դո՞ւն ես Խաչիկը:

- ...

- Բարի՛ եկար, ես Գարրոս Սէֆէրեանն եմ, ինքը Ռուբէնն է, Գոճայեան:

ԱՌԱՋԻՆ ՊԱՏԿԵՐԴ ԵՒ ՎԵՐՁԻՆԸ

(ԳԱՐԼՈՍ ՍԷՖԷՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Առաջին հայերէն բառերն էին այն ժամանակ ինծի համար բոլորովին անծանօթ այս տարածաշրջանի, հայաչխարհի հարաւային ծայրամասի այս երկրի սահմանէն ներս, տարբեր հնչիւնով, բայց այնքա՛ն հարագատ:

Վերջին պատկերը Պուէնոս Այրէսի իտալական հիւանդանոցին մէջն էր, ընդունարանի պաշտօնեային ճշուագրով թուղթի կտորի մը վրայ արձանագրուած թիւ 417 սենեակին մէջ: Եւ յիշեցինք, վերջին անգամ ըլլալով, մեր առաջին հանդիպումը, առաջին պատկերը...

Այդ երկու պատկերներուն միջեւ հիմա այլեւս երեսունվեց տարիներու յիշատակներն են՝ հոս, հոն, միւս տեղը, աւելի հեռու, հեռաձայնով, պաստառին վրայ... ամէն տեղ, ուր եղար, չկաս եւ մնացիր ընդմիշտ այն վայրը, ուր պիտի շարունակենք գրուցել, թէ եւ լուռ, թէ եւ՝ միայն ես եւ դուն:

Վա՛րձքդ կատար, ընկեր, յիշատակդ անթառամ:



ՄԵԾ ՊԱՅՔԱՐՈՂԸ՝ ԵՂՖ. ԳԱՐԼՈՍ ՍԷՖԷՐԵԱՆ

(ՅԱՆՈՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ՝
ԵՂՖ. ԱԲՐԱՀԱՄ ԱՀԱՐՈՆԵԱՆԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆԸ ԽՕՍԲԸ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
ԵՂՖ. ԳԱՐԼՈՍ ՍԷՖԷՐԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԵԱՆ)

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անունով պարտականութիւնը ունիմ հրաժեշտ տալու Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայր Գարլոս Սէֆէրեանին, որ ճամբայ ելաւ դէպի անմահ հուշարձան:

Այսպէս կը նշէ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերդը՝ «Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահները»:

Այսպիսի պարագաներուն է, որ մեր մտածումներուն մէջ կը փնտռենք յատկանիշներ՝ փորձելով ներկայացընել եղբայր Գարլոս Սէֆէրեանին նկարագիրը, որ թէեւ Ֆիզիքսապէս ա՛լ չի գտնուիր մեր մօտ, սակայն իր անմոռանալի յիշատակներով վստահաբար ներկայ պիտի մնայ ընդմիշտ:

Կը համարձակիմ եղբայր Գարլոս Սէֆէրեանը որակել «մեծ պայքարող» մը:

Մեծ պայքարող՝ իր տիկնոջ եւ չորս զաւակներուն հետ կազմելու ընտանիք մը:

Մեծ պայքարող՝ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադիրներէն մեզի հասած գաղափարականին եւ սկզբունքներուն պահպանման եւ փոխանցման ի խնդիր:

Մեծ պայքարող՝ Հայ Յեղափոխական Դաշնակցութեան գաղափարակից իր ընկերներուն կողքին, հաւատքով պաշտպանելու Հայ Դատը եւ Հայոց Յեղասպանութեան ճանաչումը, ինչպէս նաեւ՝ հայ ազգի արդար իրաւունքները:

Մէկ խօսքով՝ կեանքի պայքարող մը:

Վերջին հաշուով, ի՞նչ է կեանքը, եթէ ոչ՝ շարունակ պայքար մը մեր ծննդեան առաջին օրէն մինչեւ մեր կեանքին վերջին շունչը:

Իբրեւ մարդ արարած, բոլորս կը հետեւինք պայքարի այս ճամբուն, ոմանք՝ աներեւելի ձեւով, ուրիշներ՝ գերազանցելով: Այս ճամբուն ընթացքին եղբայր Գարլոս Սէֆէրեանը գերազանցեց բոլորս եւ առանձնացաւ իր համոզումներով եւ կեանքի մնայուն մարտահրաշխաններուն դիմաց իր կեցուածքներով:

Անոնք որոնք աներեւելի են, այս աշխարհէն ֆիզիքսապէս եւ հոգեպէս կը հեռանան՝ առանց մաս կազմելու այն հրաշալի գանձին, որուն մաս կը կազմեն յիշողութիւնները: Սակայն անոնք որոնք գերազանց են, ինչպէս եղած է եղբայր Գարլոս Սէֆէրեանը, մեր յիշողութիւններուն մէջ պիտի մնան իբրեւ



օրինակ: Իր յիշատակը պէտք է դառնայ հայելի, ուր Հ.Մ.Ը.Մ.Ի երիտասարդ սերունդները իրենք զիրենք տեսնեն եւ, անշուշտ, իր յիշատակը յաւիտեան պիտի մնայ իր ընտանիքին համար:

Եղբայր Գարլոս երիտասարդ տարիքէն մոտեք գործեց Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի «Արարատ» սկառտական խումբի շարքեր, որուն խմբապետութիւնը ստանձնեց 1984 թուականէն մինչեւ 1988: Ան մաս կազմեց 1971-ին Ճափոնի մէջ տեղի

ունեցած սկառտական միջազգային ճամպորիին մասնակցող արժանիքներէն-հայկական պատուիրակութեան:

1978-ին եւ 1986-էն մինչեւ 1990, եղբայր Գարլոս մաս կազմեց Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի վարչութեան: 1986-ին ան գլխաւորեց Լոնտոնի մէջ տեղի ունեցած համահայկական երկրորդ բանակումին մասնակցող Հարաւային Ամերիկայի սկառտական պատուիրակութիւնը:

1988-ին ան մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի սկառտական խմբապետական երկրորդ համագումարին, որ տեղի ունեցաւ Լոս Անճելըսի մէջ:

Եղբայր Գարլոս երկու շրջան՝ 2007-2011 եւ 2011- 2015 մաս կազմեց Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան: Վերջերս, ան դարձեալ մաս կը կազմէր Կեդրոնական Վարչութեան, ներկայացնելով Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջանը: Այդ պաշտօնին նշանակուեցաւ 26 Նոյեմբեր 2021 թուականին, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայր Արմանո Թորգոմեանի մահէն ետք:

Իր վարքին եւ տիպար օրինակին համար, եղբայր Գարլոս 2015 թուականին Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեանէն ստացաւ «Մառայութեան» շքանշան, իսկ 2019 թուականին արժանացաւ Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան «Արժանեաց» շքանշանին:

Եղբայր Գարլոս Սէֆէրեանի տարած աշխատանքը ցոյց կու տայ ո՛չ միայն հայ ժողովուրդի եւ Հայաստանի ի նպաստ գոհողութեան իր ոգիին, այլեւ՝ յստակ ապացոյց մըն է Հ.Մ.Ը.Մ.Ի համահայկական կառոյցին մէջ Հարաւային Ամերիկայի Շրջանին ներկայացուցած նշանակութեան եւ կարեւորութեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջանը, որուն մաս կը

կազմեն Պոլժնոս Այրժսի, Գորտոպայի եւ Մոնթէվիտէոյի մասնաճիւղերը, դարձած է Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառույցի հիմնական սիւներէն մէկը: Եղբայր Գարլոս Սէֆէրեան արժանի հետեւորդը եղած է Կեդրոնական Վարչութեան կազմին մէջ Հարաւային Ամերիկան ներկայացնող իր նախորդներուն: Ան եղաւ մեր շրջանի եւ աշխարհի Հ.Մ.Ը.Մ.ական ընտանիքին մաս կազմող հազարաւոր «կամաւոր զինուոր»ներէն մէկը, բոլորը՝ հաւատարիմ պահպանողներ բարոյական այն սկզբունքներուն, որոնք մեզի պատգամ ձգած են Շաւարշ Գրիսեան, Յովհաննէս Հինգլեան եւ Գրիգոր Յակոբեան:

Վարձքդ կատար, եղբայր Գարլոս Սէֆէրեան:
Հողը թեթեւ գայ վրադ:



ՆԿԱՐ ՄԸ ԵՒ ԵՐԵՔ ԿՈՐՈՒՄՏ...

(ԵՂԲ. ԳԱՐԼՈՍ ՍԷՖԷՐԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

Վ. Ասագեան ՊՈՒՐՈՒՆ ՀԱՄՈՒՏ

Հագիւ չորս տարուան կեանք ունի այս նկարը. նկարուած է 14 Հոկտեմբեր 2019-ին, Հ.Մ.Ը.Մ.ի ԺԲ. Պատգամաւորական Ժողովի բացման պաշտօնական հանդիսութեան, Երեւան:

Հ.Մ.Ը.Մ.ի օրուան Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Հարաւային Ամերիկայի ներկայացուցիչ եղբ. Արմանտո Թորգոմեանի հետ միութեան «Արժանեաց» շքանշանով կը պարգեւատրէ Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Գարլոս Սէֆէրեանը, որուն բացակայութեան, շքանշանը կը ստանձնէ գաւազը՝ եղբ. Կարո Սէֆէրեան:

Չկա՛յ այլեւս շքանշան յանձնողը՝ աննման եղբ. Գառնիկը: Քորոնայի զոհն է ան: Չկայ նաեւ սիրելի եղբ. Արմանտոն, որ վաղաժամ կերպով մեզմէ հեռացաւ երկու տարի առաջ, գրեթէ այս օրերուն, ուղեղային անակնկալ կաթուածով: Չկա՛յ եւ այսուհետեւ պիտի չըլլայ նաեւ այս շքանշանին արժանաւորը՝ նուիրեալ Հ.Մ.Ը.Մ.ական, հաւատաւոր Դաշնակցական եղբ. Գարլոսը, որուն հետ երկար տարիներ ընկերանայութեամբ ու պատիւը ունեցանք: Կը մնայ Կարօն, որ շարունակողը պիտի ըլլայ երեքին աւանդին, ժառանգին ու ԳՈՐԾ-ին:

Գառնիկ, Արմանտո, Գարլոս Հ.Մ.Ը.Մ.ական ԳՈՐԾ-ի ակոյտներն էին: Հետք ու դրոշմ ունէին: Տեսիլք ու երազ ունէին: Թէեւ իւրաքանչիւրը գործեց իրեն յատուկ ոճով, սակայն երեքն ալ գործեցին հայութեան նորահաս սերունդներուն համար: Հայը հայ պահելու համար: Երիտասարդութիւնը ազգային-միութեական արժէքներով զինելու համար:

Եղբ. Գարլոս Հ.Մ.Ը.Մ.ական ԳՈՐԾ-ի մերօրեայ «խենթ»երէն էր: Բազմապատակ եւ փորձառու միութենա-



կան: Շուք եւ հեղինակութիւն ունեցող մարդ: Մինչեւ կեանքին վերջին շունչը ան տաղանապեցաւ Հ.Մ.Ը.Մ.ով, քաջալերեց բոլորս՝ աննկուն շարունակելու Հ.Մ.Ը.Մ.ի գործը: Գործի մէջ եղաւ խստապահանջ, գործէն դուրս՝ հաճելի եւ փնտուռած ժողովական: Ջերմ, հաղորդական, ընկերական, սրբտամօտ ու սրտակից: 2015-ին, Արժանութիւն այցելութիւնս առիթ մը եղաւ, որպէսզի աւելի մօտէն ճանչնամ զինք եւ մեր մտերմութիւնը աւելի ամրանայ

ու խորանայ: Հոն էր, որ իմացայ, թէ ինչպէս, լիբանանեան պատերազմի սկիզբը ան գտնուած էր Պէյրութ: Լիբանանեան փորձառութեան մասին խօսած ժամանակ ամէն անգամ աչքերը կը բոցավառէին: Տեւական կարօտը ունէր «Սարդարապատ» ակումբին եւ Պուրճ Համուտի պահակ տղոց: Գիտէր, տեսած ու ճանչցած էր Լիբանանի «լաւագոյն տղերքը»: Առիթը չէր փախցներ իր բարեկները փոխանցելու բոլորին:

Կուսակցական շրջանակներու ծանօթ Քարլիթոն արժանի չէր նման վերջաւորութեան: Կենսուրախ, շէնչող եւ միշտ լաւատես եղբ. Գարլոսը շատ տառապեցաւ կեանքի վերջին հանգրուանին: Ցաւեցաւ մանաւանդ եղբայրներ Գառնիկի եւ Արմանտոյի անժամանակ կորուստով: Աչքերը փակեց հայութեան եւ Հայաստանին, պաշտած կուսակցութեան եւ սիրելի միութեան հանդէպ իր պարտքը լիուրի կատարած ըլլալու գոհունակութեամբ:

Շատ պիտի փնտռենք քեզ, եղբ. Գարլո՛ս:

Գառնիկին, Արմանտոյին եւ միւսներուն՝ ժիրայրին, Պատրիկին, Միհրանին, Բիւզանդին եւ բոլոր, բոլոր արժանաւորներուն հետ հսկէ մեզի, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ի ԳՈՐԾ-ը յառաջ տանինք այնպէս ինչպէս պիտի փափաքէիք տեսնել՝ պինդ, ամուր, կազմակերպ, անթերի՝ օրէ օր աւելի մեծցող, տարածուող եւ հայացնող:



ԵՂԲ. ԳԱՐԼՈՍ ՍԷՓԷՐԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ ՑԱԲԱԿՑԱԳԻՐՆԵՐ

Ներու ձեզի, մեր սիրելի եղբոր՝ Գարլոս Սէֆէրեանի կանխա-
հաս մահուան տխուր առիթով:

Եղբայր Գարլոսին լուսաւոր յիշատակը փարոս պիտի ը-
լայ մեր ապագայ սերունդներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.ական
բարձր ոգիով պիտի շարունակեն իր սկսած գործը, աւելի
հաստատ ու վճռակամ:

Տէրը իր Սուրբ Հոգիով մխիթարէ ձեզ, հանգուցեալին հո-
գին լուսաւորէ եւ արժանացնէ յաւիտենական կեանքի:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,
Յարգելի քոյր եւ եղբայրներ,

Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի մեծ ընտանիքը իր Շրջանային
Վարչութեան, մասնաճիւղերու վարչութիւններուն եւ բոլոր
անդամներուն անունով, իր խորազգաց ցաւակցութիւնները
կը յայտնէ սիրելի եղբայր Գարլոս Սէֆէրեանի մահուան
տխուր առիթով:

Ազգային եւ միութենական կեանքին նուիրուած երկարամ-
եայ վաստակաւոր մեր երէց եղբոր՝ Գարլոս Սէֆէրեանի մա-
հը մեծ կորուստ է Հ.Մ.Ը.Մ.ին:

Աստուած մխիթարէ ձեզ եւ եղբոր ընտանեկան բոլոր պա-
րագաները:

Թող Բարձրեալն Աստուած եղբայր Սէֆէրեանի յիշատա-

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան,
Սիրելի քոյր եւ եղբայրներ,
Սրտի խոր կսկիծով իմացանք Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական
Վարչութեան անդամ եղբ. Գարլոս Սէֆէրեանի կանխահաս
մահուան լուրը:

Այս տխուր առիթով, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգ-
ներու Շրջանային Վարչութիւնը իր խորազգաց ցաւակցու-
թիւնը կը յայտնէ ձեզի եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, անփո-
խարինելի կորուստին համար:

Կը գիտակցինք, թէ որքան դժուար է Հ.Մ.Ը.Մ.ականի մը
մահը, ի մասնաւորի հանգուցեալ եղբ. Սէֆէրեանի նման ան-
դամի մը կորուստը Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիքին համար:

Ընդունեցէք մեր անսահման մխիթարութիւններն ու համ-
բերութեան կամքը: Թող ամենակարողն Աստուած հանգուց-
եալի հոգին լուսաւորէ եւ երկինքի արքայութեան արժանացը-
նէ:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ**

Պատուարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,
Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ. Նահանգներու Շրջանային Վար-
չութիւնը իր եւ Արեւելեան Շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի համայն ընտա-
նիքին անունով կու գայ իր խորին ցաւակցութիւնները յայտ-



կը անթառամ պահէ եւ օրհնութիւն դարձնէ բոլորին համար:
Հողը թեթեւ գայ վրադ, սիրելի եղբայր Գարլոս:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՆԱՏԱՅԻ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ**

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւն,
Եղբայր Գարլոս Սէֆէրեանի մահուան բոթը անակնկալի մատնեց բոլորս: Եղբայր Գարլոսը մարմնապէս հեռացաւ մեզմէ, սակայն ան իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի մէջ պիտի շարունակէ ապրիլ, երկար տարիներ իր ծաւալած գործունէութեամբ եւ իր խորհուրդներով: Ան իր օրինակելի եւ պայծառ Հ.Մ.Ը.Մ.ականի տիպարով պիտի ճառագայթէ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի գործունէութեան մէջ:

Արդ, Հ.Մ.Ը.Մ.Ի Միւնիսթր Մեկուսի Շրջանի վարչութեան անունով կու գանք մեր խորին ցաւակցութիւնները յայտնելու հանգուցեալի ընտանիքին, հարազատներուն եւ Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի մեծ ընտանիքին:

Աստուած հոգին լուսաւորէ եւ երկինքի արքայութեան արժանացնէ:

Հողը թեթեւ իր աճիւններուն:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ՄԻՒՆԻՍԻ
ՄԵԿՈՒՍԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ**

Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութիւն,
Ընդունեցէք մեր խորին ցաւակցութիւնները եղբ. Գարլոս Սէֆէրեանի մահուան առիթով:

Շատ տխուր էինք ցաւալի լուրը լսելով: Մեր շրջանի անդամներից շատերը պատիւ ունեցան իր հետ աշխատելու բանակումներում եւ համագումարներում:

Կը խնդրենք փոխանցել նաեւ մեր ցաւակցութիւնները հանգուցեալի ընտանիքին:

Աստուած հոգին լուսաւորի:

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԼՈՆՏՈՆԻ
ՄԵԿՈՒՍԻ ՇՐՋԱՆԻ ՎԱՐՁՈՒԹԻՒՆ**

Սգակիր Սէֆէրեան ընտանիք,

Սրտի խոր կսկիծով տեղեկացանք մեր սիրելի եղբայր Գար-

լոս Սէֆէրեանի մահուան ցաւալի եւ անհաւատալի լուրը:

Եղբայր Գարլոսը իր վաստակով, ազգային ոգիով եւ բծախնդրութեամբ կատարած աշխատանքներով կարողացած էր գրաւել Հարաւային Ամերիկայի հայկական գաղութներու հազարաւոր հայորդիներուն սիրտը:

Եղբայր Գարլոսի ֆիզիքական բացակայութիւնը խիստ զգալի պիտի ըլլայ եւ մեծագոյն կորուստը՝ ներկայ եւ յաջորդ սերունդներուն, սակայն իր բծախնդիր, բարեխնամ ու կորովի առաջնորդի պատրաստած հունտերը կենդանի վիճակները պիտի մնան Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի ընտանիքի անդամներու հոգիներուն մէջ:

Բիւր յարգանք, խունկ ու աղօթք իր բազմավաստակ յիշատակին:

Այս տխուր առիթով մեր խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնենք եղբայր Գարլոսի ընտանեկան պարագաներուն, հանգուցեալի հարազատներուն, ազգականներուն եւ Հ.Մ.Ը.Մ.Ի համայն ընտանիքին:

Աստուած հոգին լուսաւորէ եւ յիշատակը անթառամ մնայ: Թող անունը անմահանայ Հ.Մ.Ը.Մ.Ի պատմութեան մէջ:

**Քեզ միշտ յիշող՝
ՏԻՐԱՆ ՎԱՀՐԱՏԵԱՆ**

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ Սիտնի, Աւստրալիա

Յարգելի եղբայրներ,

Զիլիի հայկական համայնքի, համայնքի վարչութեան եւ հայ երիտասարդութեան անունով կը յայտնեմ իմ խորին ցաւակցութիւններս Գարլոս Սէֆէրեանի ընտանիքին եւ Հ.Մ.Ը.Մ.Ի-ին: Մենք առիթը ունեցանք Գարլոսին հանդիպելու տարբեր առիթներով եւ միշտ ակնատեսը եղանք իր խանդավառութեան, իր պատկանելիութեան եւ նուիրումին՝ հանդէպ հայութեան:

Համոզուած ենք, որ իր օրինակը վառ պիտի մնայ ու միշտ պիտի յիշուի իբրեւ տիպար հայ:

**Յարգանք՝
ԿԱՐՕ ՔՈՍԹԱՆԹԻՆԻՏԻՍ ԼՈԹԻՔԵԱՆ**

Զիլիի հայ համայնքի ներկայացուցիչ



Հ.Մ.Ը.Մ.Ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղ Պրն. Խուան Անթոնիո Պէրպէրեան- Ատենապետ
Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւն

Պրն. Տիէկօ Զագեան- Ատենապետ
Յայտնի եւ գործօն ղեկավար, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան Հարաւային Ամերիկայի Կեդրոնական Կոմիտէի եւ «Արարատ» սկաւտական միութեան ղեկավար Գարլոս Սէֆէրեանի մահուան առիթով, Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւնը ցաւակցութիւն կը յայտնէ այն միութիւններուն, որոնց մէջ ծառայած է ան նուիրումով եւ հայրենասիրութեամբ:

Ցալակցութիւն կը յայտնենք իր կնոջը՝ Ժազլինին, գալակներուն՝ Մելինէին, Կարոյին, Վիգէնին եւ Արիին, ու իր հարազատներուն: Այս տողերով մեր յարգանքի տուրքը կը մատուցանենք իր օրինակելի կեանքին, զոր վստահաբար յաջորդող սերունդները պիտի յիշեն ու պատուեն:

Աստուած հոգին լուսաւորէ:

Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Վարչութեան եւ յանձնախումբերուն կողմէ կը յայտնենք մեր յարգանքները:

Քարտուղար
ԽՈՐԽԷ ՄԻՀՐԱՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ
Ատենապետ
ԱՆԹՈՆԻՕ ՍԱՐԱՅԵԱՆ
Հայ Բարեգործական Ընդհանուր Միութիւն
Պուէնոս Այրէս- Արժանութիւն

Ռոսարիոյի Հայ գաղութի եւ իր ատենապետ պրն. Խուան Դանիէլ Դանիէլեանի անունով, Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան կը յայտնենք մեր խորին ցալակցութիւնները եղբ. Գարլոս Սէֆէրէանի մահուան տխուր առիթով:

Վշտակից ենք իր ընտանիքին, բարեկամներուն եւ միութեան քոյր-եղբայրներուն:

Յարգանք՝
Քարտուղար
ՍԱՐԹԻՆ ԵՈՒՃԵԱՆ
Ատենապետ
ԽՈՒԱՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Յարգելի
Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,
Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւն,

Հ.Մ.Ը.Մ.ի Պուէնոս Այրէսի վարչութիւն,
Գորտոպահայ գաղութային միութիւնն ու գորտոպահայ համայնքը իրենց խորին ցալակցութիւնները կը յայտնեն Սփիւռքի վաստակաշատ անձերէն Գարլոս Սէֆէրէանի մահուան տխուր առիթով: Իր օրինակը միշտ վառ պիտի մնայ համայնքին, միութիւններուն եւ իր ընտանիքին մէջ:

Մեր ցալակցութիւնները ընտանիքին եւ բարեկամներուն:
Աստուած հոգին լուսաւորէ:

Ջերմ բարեւերով
Ատենապետ
ՍԵՐԽԻՕ ՎԱՐԳԱՆԵԱՆ
Ատենապետուհի
ԼԻԼԻԱՆ ՊԱԼԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին կազմակերպութեամբ, 10, 17, 24 Յունիս եւ 1 Յուլիս 2023-ին, տեղի ունեցաւ միութեան քարոզչական քատրերու պատրաստութեան առցանց դասընթացը, մասնակցութեամբ Շրջանային եւ Մեկուսի շրջաններէ 60 մասնակիցներու:

ԳԱՍԸՆԹԱՅՔԻՆ ԲԱՅՈՒՄԸ
Շաբաթ, 10 Յունիսին, դասընթացքին բացումը կատարեց եւ նպատակը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եւ քարոզչական աշխատանքներու պատասխանատու եղբ. Վիգէն Աւագեան: Ան ըսաւ, որ քարոզչութիւնը լայն տեղ եւ դեր ունի մեր կեանքին մէջ: Քարոզչութիւնը կարեւոր է միութեան կողմէ աշխատանքները ճիշդ ձեւով ճիշդ քերական հասցնելու համար: Այդ նպատակին համար, Կեդրոնական Վարչութիւնը անցնող քառամեակին, առաջին անգամ ըլլալով, յառաջացուց քարոզչական յանձնախումբ մը, որ մշակեց եւ գործադրեց զանազան ծրագիրներ: Յանձնախումբը ձեռնարկեց նաեւ այս դասընթացքին՝ պատրաստելու համար քարոզչական աշխատանքներու երիտասարդ ու մասնագէտ քատրեր:

Շարունակելով, եղբ. Աւագեան յայտնեց, որ դասընթացքը պիտի ըլլայ խտացեալ, պիտի երկարի չորս շաբթուան վրայ եւ դասընթացքի աւարտին մասնակիցները պիտի արժանանան յատուկ հաստատագրի: Այնուհետեւ, եղբայրը հրաւիրեց օրուան զեկուցաբեր, Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբի անդամ եղբ. Նժդեհ Մկրտիչեանը, որպէսզի ներկայացնէ իր նիւթը՝ «Լուսանկար եւ տեսանիւթ նկարելու ձեւերը եւ զանոնք լաւագոյն միջոցներով օգտագործելու կարելիութիւնները»:

ԱՌԱՋԻՆ ՆԻԻԹԸ
Եղբ. Նժդեհ Մկրտիչեան իրեն վստահուած նիւթը ներկայացուց փառլոր փոյնքով: Ան նախ ծանօթացուց լուսանկարչութեան գլխաւոր սկզբունքները, տե-



Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԱՐՈՉՉԱԿԱՆ ՔԱՏՐԵՐՈՒ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԱՌՅԱՆՅ ԴԱՍԸՆԹԱՅՔԸ ԻՐԱԳՈՐԾՈՒԵՅԱԲ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՄԲ

սակները, յաջող նկար մը ունենալու թերնիք պահանջները, ապա օրինակներով բացատրեց, թէ ի՞նչպէս Հ.Մ.Ը.Մ.ի քարոզչութեան ծառայող նկարներ եւ տեսանիւթեր կարելի է ունենայ: Եղբօր 30 վայրկեան տեսողութեամբ հետաքրքրական ներկայացումին յաջորդեց հարցում-պատասխանի բաժին մը, որ երկարեցաւ մէկ ժամուան վրայ:

ԵՐԿՐՈՐԴ ՆԻՒԹԸ

Քարոզչական առցանց դասընթացին երկրորդ նիւթը ներկայացուցաւ շաբաթ մը ետք, 17 Յունիսին, մասնակցութեամբ Շրջանային եւ Մեկուսի շրջաններէ 70 քոյրերու եւ եղբայրներու:

Հանդիպումին բացումը կատարեց Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբի ատենապետ եղբ. Գեորգ Յակոբճեան: Ան յիշեցուց դասընթացքին նպատակը, անդրադարձաւ ընդհանրապէս քարոզչութեան կարելորութեան եւ յատկապէս Հ.Մ.Ը.Մ.ին համար քարոզչութեան անհրաժեշտութեան՝ շեշտելով, որ ճիշդ եւ պատշաճ ձեւով լրատուութիւն պատրաստելը եւ զայն հանրութեան ներկայացնելը կենսական է, որպէսզի քարոզչութիւնը ծառայէ իր նպատակին:

Այնուհետեւ, եղբայրը հրաւիրեց օրուան զեկուցաբեր, Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբի անդամ եւ «Ազգակ» օրաթերթի խմբագիր քոյր Նորա Բարսեղեանը, որպէսզի ներկայացնէ իր նիւթը՝ «Թղթակցութիւն պատրաստելու ձեւերը, լեզուական տարրական




օրէնքներ, լրագրողական հիմնական սկզբունքներ»:

Քոյր Նորա Բարսեղեան եւս իր նիւթը ներկայացուց փառլոր փոյնքի ընկերակցութեամբ՝ ծանօթացնելով թղթակցութեան տեսակները, թղթակցութիւն պատրաստելու հիմնական սկզբունքները, կառոյցը, թղթակիցի մը հիմնական յատկանիշները, տպագիր եւ էլեկտրոնային մամուլին մէջ լրատուութիւն կատարելու տարբերութիւնները: Աւարտին, քոյրը մասնակիցներուն ներկայացուց թղթակցութեան նմոշ մը, որուն վրայ կարելի է կառուցել զանազան առիթներու յարմարող թղթակցութիւններ: Դասախօսութիւնը յազեցաւ մամուլէն տրուած օրինակներով, որոնք աւելի եւս ամրապնդեցին ներկայացումը: Չեկուցաբերը շեշտը դրաւ հայերէն լեզուի մաքուր եւ ճիշդ գործածութեան, ինչպէս նաեւ թղթակցութիւններու մէջ Հ.Մ.Ը.Մ.ի վայել բառամթերք եւ գաղափարներ օգտագործելու կարելորութեան վրայ:

Ներկայացումին յաջորդեց հարցում-պատասխանի բաժին մը, որուն ընթացքին տեղի ունեցաւ միտքերու փոխանակում: Ներկայացուցեցան առաջարկներ, եւ մասնակիցները բաժնեկցեցան իրենց մտահոգութիւնները:

(Շար. ը տեսնել էջ 48)





ՉԵՌՔԴ ՎԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԷՆ

Սկրտիչ Սկրտիչեան ԱԹԵՆՔ

Ընկերային ցանցերուն մէջ անունս մի՛ փնտռէք, պարզապէս այդտեղ չկամ: Սկիզբէն մերժած եմ գտնուիլ վաղրի մը մէջ, ուր մարզիկ կրնան գործել կեղծ անուններով, իրենց արտայայտութիւնները կըրնան շարադրել անստոյգ կամ անստուգելի տեղեկութիւններ տարածելով, ի վիճակի են՝ առանց պատասխանատուութիւն կրելու, բարձրաձայն խօսիլ ուրիշներու արժանապատուութիւնը վիրաւորելով, երբեմն ճիշդ ու ճշմարիտ տեղեկութիւններու, բայց նաեւ հասարակ բամբասանքներու, մինչեւ իսկ միտումնաւոր կէս իրականութիւններու կամ բացարձակ սուտերու վրայ հիմնուելով. մարդ ի վիճակի չէ հակակշռելու. մինչեւ որ նետուած սուտին հակազդեցութիւնը իրականանայ, ճշմարտութիւնը ներկայացուի, սուտը արդէն իր անվերադարձ աւերը գործած է: Այսօր մեր հայրենիքի տխուր վիճակը հետեւանքն է այս նորարար միջոցներու տարիներու ընթացքին անհակակշռելի ու անթափանց, կրկնեմ, անպատասխանատու չափազանցեալ գործածութեան:

Վերջին օրերուն բարեմիտ ընկերներ զիս տեղեակ պահեցին այս ձեւի երեւոյթի մը մասին, որուն քննադատութեան առարկան Հ.Մ.Ը.Մ.ն է՝ ակնարկելով այս բացառիկ պատանեկան ու երիտասարդական միութեան համահայկական Ց-րդ մարզախաղերուն անոր մասնակցութեան, քանի անոնք



կազմակերպուած են Հայաստանի ներկայ անմխիթար կացութեան պատասխանատու Հ.Հ. անարժան իշխանութիւններուն կողմէ: Արդարեւ, մարդ չի կրնար պնդել, որ ներկայ իշխանութիւնները ազգային շահերը պաշտպանողի դեր խաղացած ըլլան իրենց աւելի քան հնգամեայ գործունէութեան ընթացքին. հակառակին փաստերը կը վիստան եւ օրէ օր կ'աւելնան. ազգային ուղղութիւն որդեգրած մարդն այլեւս չի կրնար չընդունիլ այս դժբախտ իրականութիւնը: Բայց ի՞նչ կապ ունին այդ իշխանութիւնները համահայկական խաղերուն հետ: Անոնք կը մերժեն համահայկականութիւնը:

Անոնք կը միտին հայութիւնը հաւաքականութեան վերածել մասնիկներու՝ անհատներու:

Այս խաղերուն Հ.Մ.Ը.Մ.ի ներկայութիւնը քննադատողները անխուսափելիօրէն կը բաժնուին երկու խումբի: Առաջինը՝ զիս հետաքրքրող խումբը, սրտցաւ Հ.Մ.Ը.Մ.ականներն են, որոնք կ'ուզեն իրենց հայեցողութեան համահունչ դիրքի



վրայ տեսնել իրենց միութիւնը: Անկախ իրենց տեսակէտի իրաւացիութենէն կամ ոչ, իրենց կարծիքի հրապարակային արտայայտութիւնը որեւէ օգուտ չի կրնար բերել իրենց միութեան, ոչ ալ՝ իրենց դատին: Պարզ է բոլորին համար, որ իրենց հիմնադրութենէն ի վեր համահայկական խաղերը իշխանութիւններու կողմէ չեն կազմակերպուիր, այլ՝ Համահայկական խաղերու Համաշխարհային Կոմիտէին կողմէ, ներկայ դրութեամբ՝ քառամեակը անգամ մը. ներկայ կոմիտէն կը գործէ, առանց ընդմիջումի, 2011-էն ի վեր:

Երկրորդ խումբը կը կազմուի անոնցմէ, որոնք խորքին մէջ չունին տեսակէտ, անտարբեր են, սակայն նուիրուած են ուրիշներու կողմէ տարածուող վատառողջ նպատակներ հետապնդող գաղափարներու տարածման: Անոնք իրենց գրառումներով կը միտին պարզապէս անհամաձայնութիւններ սերմանելու Հ.Մ.Ը.Մ-ի նման կազմակերպ կառույցներու տկարացման՝ անոնց մէջ աստիճանաբար ցանկելով պառակտումի հունտերը: Այս ձեւով է, որ երբեմնի կուռ կազմակերպութիւններ կարճ ժամանակի մէջ նետուեցան ներքին անվերջ պայքարներու յորձանուտին մէջ:

Հարկաւ Հ.Մ.Ը.Մ-ի նման ուժեղ կառույց մը ապակայունացնելը բաւական դժուար գործ է, ատիկա կը վկայէ միութեան աւելի քան հարիւր տարիներու կեանքը: Հիմնուելով Պոլսոյ մէջ, այո՛, Պոլսոյ մէջ, 1918-ին, ան շուտով արմատ նետեց նորանկախ Հայաստանի Ա. Հանրապետութեան մէջ: Պոլիսը մեզի համար Թուրքիա չէր, այլ՝ արեւմտահայութեան մշակութային մայրաքաղաքը: Հետագային, զարգանալով եւ ուռճանալով արեւմտեան Սփիւռքի տարածքին, Հ.Մ.Ը.Մ-ը ամուր պահեց անկախ Հայաստանի ազգային պետականութեան վերածնունդի հաւատքը: Հետեւաբար Հ.Մ.Ը.Մ-ն ու Հ.Մ.Ը.Մ-ականը հայրենասիրական դասերու կարիքը չունին: Կը բաւէ Շաբաթ կամ Կիրակի օր մը այցելել միութեան ակումբ մը, ներկայ ըլլալ անոր աշխարհացրիւ մասնաճիւղե-



րու կազմակերպած ձեռնարկներէն որեւէ մէկուն՝ համոզուելու համար, որ այդ տղաքը դուրսէն ազգային յաւելեալ դաստիարակութեան պէտք չունին. անոնք հիմա կը գոռան՝ «Ձեռքը վա՛ր առ Հ.Մ.Ը.Մ-էն, կ'այրի՛»:

Վերջին երեսնամեակին այդ տղաքը սորված են զանազան իշխանութեան եւ հայրենիքի միջեւ ակներեւ, սկզբունքորէն հիմնական տարբերութիւնը: Ամէնէն պարզը՝ առաջինը միայն այսօրն է, երկրորդը՝ մշտնջենականը: Առաջինը ժամանակաւորն է, երկրորդը՝ յաւիտենականը: Առաջինը կրնայ քուկդ ըլլայ, բայց նաեւ՝ ուրիշներ, երկրորդը միշտ քուկդ է: Առաջինը կը տարուբերի բարիքի ու չարիքի միջեւ, երկրորդը հայրենիք է ու մա՛յր, սիրտ ու միտք:

Այս տարբերութիւնը երեւաց նաեւ երեսուն տարիներ առաջ, երբ ուրիշ իշխանաւոր մը փորձեց յանձնել Արցախը. բարեբախտաբար իր գործակիցները արթուն ըլլալով՝ զինք հեռացուցին իշխանութենէն, եւ ամէն ինչ սկսաւ ընթանալ դէպի առաջ ու վեր: Այս անգամ գործակիցները օտարները եղան՝ շահախնդիրները եւ նոյնիսկ՝ թշնամիները. անոնք մօտեցան «դաւով, հրապոյրով» եւ տիրեցին երկրին: Մեր երկիրը մերը չէ հիմա, ուրիշինն է. պաշտօնապէս զայն ուրիշները դարձնելու վերջին պատրաստութիւնները կը տեսնուին: Այդ պատճառով ալ համահայկական խաղերը կրնան մեզ քնացնել,

բայց նաեւ՝ արթնցնել համատարած թմբիրէն. իսկ Հ.Մ.Ը.Մ-ը միշտ արթուն եղած է: 1918-ը միայն թուական չէ, ան խորհրդանիշ ալ է: Քայլերգն ալ նոյնն է. կրնայ քնացնել ու հաճոյաբոյր ըլլալ, կրնայ նաեւ զգաստացնել ու մղել դէպի փրկութիւն: Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգը «Յառա՛ջ, նահատակ»ն է: Ասիկա իր ճակատին վրայ գըրուած է, բայց նաեւ սիրտերու եւ ուղեղներու մէջ է:

Հ.Մ.Ը.Մ-ը բարձր է ու կը բարձրացնէ. հիմա՛ եւ վաղը, ընդմիշտ:



Հ.Մ.Ը.Մ.Ը Ո՞Չ ՄԷԿ ՉԵՒՈՎ ՄԵՂԱԲՈՐ...

Մերոք Սահակեան
ԵՐՈՒՍԱՂԵՍ



Մէկ չէ, երկու չէ, շատերու դիմատետրի էջերուն կը կարդամ, ոմանց կողմէ սրտցաւ, ուրիշներու կողմէ ալ, առ ի խառնակչութիւն, այն հարցումը, թէ համահայկական խաղերու գծով ի՞նչ է Հ.Մ.Ը.Մ.Ի դիրքորոշումը:

Հարցումը ինքնին անտեղի եւ գրգռիչ է, որովհետեւ համահայկական խաղերու մասնակցութեան գծով Հ.Մ.Ը.Մ.ը պաշտօնական որեւէ հանգամանք չունի ու չէ ունեցած. անոր մասնակցութիւնը եղած է տեղւոյն համայնքներու անուան տակ եւ երբեք՝ Հ.Մ.Ը.Մ.ի:

Երբեք՝ Հ.Մ.Ը.Մ.ի, թէեւ ոչ մէկուն գաղտնիք է, որ այդ մասնակցութեան հսկայական աշխատանքը միշտ ալ մնացած է, ու ամէն տեղ, Հ.Մ.Ը.Մ.ի լայն ուսերուն:

Ու աւելորդ պիտի ըլլայ նշել, թէ հոն ուր որեւէ պատճառով Հ.Մ.Ը.Մ.ը բացակայած է, բացակայած է խնդրոյ առարկայ համայնքը:

Վերջապէս ըսենք ու կրկնութիւն չըլլայ, շատ տեղեր համայնքները ներկայացուած են անմիջական ու սոսկ Հ.Մ.Ը.Մ.ի ուժերով:

Այնուհանդերձ, այս բոլորը ոչ մէկ ձեւով կրնան համահայկական խաղերուն Հ.Մ.Ը.Մ.ի մասնակցութեան կամ բացակայութեան հարցումը մէջտեղ դնել:

Առաւել այդ, եթէ կարելի է ո՛չ մէկ ձեւով Հ.Մ.Ը.Մ.ի եւ Հայաստանի իշխանութիւններ կոչուած խոնթախին միջեւ յարաբերութիւնը այս հարցին կապել:

Այսօր այլեւս որո՞ւ գաղտնիք է, թէ Հայաստան-Արցախի համագգային ներկայ ողբերգական վիճակին հազար ձեւով պատասխանատուն այս խոնթան է, որմէ դժգոհ է նաեւ Հ.Մ.Ը.Մ.ը:

Այսուհանդերձ, անկախ Հ.Մ.Ը.Մ.ի սուլած որոշումէն:

Անկախ մեր ներազգային բաւական նեղ վիճակէն:

Անկախ Արցախի աշխարհի ահաւոր երկունքէն:

Արդեօք իբրեւ Հ.Մ.Ը.Մ. դուն կրնա՞ս կամ պիտի ուզէ՞ր Հայաստանովդ բորբոքող երիտասարդը հեռու պահել նման ձեռնարկէ:

Հեռու պահել, երբ իշխանութիւններէն անկախ գործող Համահայկական խաղերու Համաշխարհային կոմիտէն որոշած է խաղերը կատարել:

Դուն կրնա՞ս Հ.Մ.Ը.Մ.ականի ազգային դաստիարակութիւն ստացած պարման-պարմանուհին տուն պահել, երբ իր նմանը հայոց հողին վրայ կը դայլայլէ:

Սիրելիներ, թէեւ այս օրերուն շատ բան հայ իրականութեան մէջ շփոթի մէջ է:

Թէեւ իրապէս ալ հայ ընտանիքը փոթորկած է:

Թէեւ իրապէս խաղերուն մասնակցութիւնը հայաստանեան ներկայ ապարժէք իշխանութեան որոշ մեծարում է:

Այնուհանդերձ, որեւէ ձեւի ամբաստանութիւն իմաստ չունի:

Հ.Մ.Ը.Մ.ը այս հարցին մէջ մեղք չունի:

Չունի՞ ոչ իսկ որեւէ երկուութիւն:

Իսկ եթէ ունի, այն ալ իր կողմէ իր տղոց ջամբած ազգային դաստիարակութիւնը, հայրենասիրութիւնն է, որ որեւէ իրաւ Հ.Մ.Ը.Մ.ական երիտասարդի մէջ միշտ ալ պիտի յաղթէ:

Անկախ որեւէ հրահանգէ թէ որոշումէ, եթէ ըլլար իսկ այդպիսին, այդ պիտի յաղթէ:

Վերջապէս, վստահ թէ այս գործ օրերուն, Հ.Մ.Ը.Մ. պիտի չուզէր փայլեցնել այս իշխանութիւններուն օրը, այսուհանդերձ, հոնկէ մինչեւ համահայկական խաղերուն հայ երիտասարդի մը մասնակցութեան արգելքը, հեռաւորութիւնը շատ մեծ է:

Ապահով եղէք:
Հ.Մ.Ը.Մ. իր ըսելիքն ու ընելիքը լա՛ւ գիտէ:



ԽՄԲԱՊԵՏԻՄ ԵՂԲ. ԺԻՐԱՅԻ ՍԱՐԳՍԵԱՆԻ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

(ՄԱՀՈՒԱՆ Ա. ՏԱՐԵԼԻՑԻՆ ԱՌԻԹՈՎ)

Յարուք Չեքձեան ՊԵՅՐՈՒԹ

Երկար տարիներ, հաւանաբար շուրջ 20 տարի, մեր ուղղակի կապը կտրուելէն ետք, եղբ. Ժիրայր Սարգիսեան Լիբանան այցելեց 1995-ին, մասնակցելու համար Հ.Մ.-Ը.Մ.Ի Զ. Պատգամաւորական Ընդհանուր Ժողովին: Իբրեւ անակնկալ, պատրաստեցի սկաուտական հին օրերէն նկար մը եւ սկաուտական ատենադպիրի տետրակէս ներկայութեան ստուգումի 1962 թուականի այն էջին պատճէնը, ուր կ'երեւի մեր խումբին անուանացանկը եւ իբրեւ խմբապետ իր ներկայութեան առաջին օրը:

Երբ այս «մասունքները», ինծի համար սովորական ու աննշան իրեր, իրեն յանձնեցի, շատ ուրախացաւ եւ ինծի յայտնեց, որ սկաուտական նման իրերու հաւաքածոյ մը կը պահէ եւ նմանօրինակ իրեր իրեն համար թանկարժէք են: Այնուհետեւ, մինչեւ 2018, մերթ ընդ մերթ իրեն հին օրերէն նկարներ կը ղրկէի: Եղբայր Ժիրայրին մա-



հէն ետք, իր դստեր՝ քոյր Թամարին հետ ցաւակցական ե-նամակագրութեան մէջ հարցուցի այս իրերու հաւաքածոյին մասին, թէ արդեօք տուփի մը մէջ պահած էր զանոնք կամ թէ ինամեալ կերպով ցուցադրած էր, եւ եթէ այդպէս է, խնդրեցի, որ լուսանկարէ ցուցադրութիւնը եւ ինծի ղրկէ:

Քոյր Թամար շուտով ղրկեց իր հօր ու մօր՝ եղբ. Ժիրայրին սկաուտական եւ իր կողակիցին՝ պասքթեպոլի մարզիկուհի քոյր Սրբուկին միութենական կեանքի պատմական իրերու ինամեալ եւ ճարտարօրէն պատրաստուած բաւական տարածուն ցուցադրութիւն-թանգարանին լուսանկարները:

Պատմական այդ իրերը կ'ընդգկէին երկուքին միութենական եւ ազգային գործունէութիւնը ներկայացնող բաժակներ, յուշանուէրներ, պատուոյ գիրեր, շքանշաններ, միութենական զարդասեղներ, դրօշակներ, վկայականներ, նկարներ, Հայաստանի քարտէս եւ այլն: Ահաւասիկ ազգային, միութենական եւ կուսակցական բեղուն գործունէութեան պերճախօս վկայութիւնը:

Վարձքդ կատար՛ր եղբ. Ժիրայր:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ՅՈՒՇԵՐԻՄ- Գ.

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՄՄԱՆԻ ԻՆՔՆԱՇԱՐԺՈՎ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ԱՐԿԱԾԱԽՆԴՐԱԿԱՆ ՄՐՅՈՒՄԸ՝ «ՌԷԼԻ ՓԷՅՓԸՐ»Ը 1976-ԻՆ

Յարութ Չեքիճեան
ՊԵՅՐՈՒԹ

Յ որդանանի մէջ հռչակ շահած էր «Ռէլի փէյփըր» խաղը, որովհետեւ Հիւսէյն թագաւոր, որ արկածախնդրական զանազան մարզախաղերու եւ արագ ինքնաշարժներու սիրահար մըն էր, 1955-ին, գահակալութեան օրէն սկսած էր մասնակցել բլուրներու վրայ կատարուող արագութեան միջազգային մրցումներու: 1956-ին, Լիբանանի մէջ, Ռապիէ-Այն Աար ուէլին առաջնութիւնը շահեցաւ ան^{1,2} եւ 5 անգամ նուաճեց Յորդանանի ժարաչ պատմական քաղաքի Ռըմման բլուրի միջազգային ուէլին առաջնութիւնը: Սակայն, Յորդանանի մէջ տեղական ակմբային մակարդակով եւ հետախուզական արշաւի դրութեամբ այս խաղը ցարդ չէր կիրարկուած: Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ առաջին «Ռէլի փէյփըր» կազմակերպողը:

Վերոնշեալ ուէլիները յստակ քարտէսով, որոշուած ճամբաներու վրայ, ինքնաշարժ վարելու արագութեան եւ ճարտարութեան մրցումներ են, մինչ ուէլի փէյփըրներու պարագային, հանգրուանէ-հանգրուան հանելուկ լուծելով է որ կը յայտնուի յաջորդ կայանը՝ ուղեւորութիւնը, յար եւ նման սկաուտական հետախուզական արշաւներուն, սակայն՝ ինքնաշարժով: Երթեկեկի օրէնքները պէտք է լիուլի կիրարկուին, իսկ առաւելութիւնը կը կայանայ հանելուկը արագ լուծելու եւ քաղաքին կամ շրջանին մէջ գտնուող պատմական, մշակութային, առեւտրական եւ այլզան մարզերու մէջ յայտնի եւ երբեմն սովորական վայրերուն ծանօթ ըլլալուն մէջ եւ քաջատեղեակ շրջանի փողոցներուն, յարմարագոյն ճամբաներով եւ նուազագոյն ժամանակամիջոցին ուղղուելու համար դէպի յաջորդ հանգրուան:

Լիբանանի մէջ, 1960-ական տարիներէն մինչեւ 1975-ի քաղաքացիական պատերազմը, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղը եւ տեղական այլ ակումբներ ու համալսարանական միութիւններ կը կազմակերպէին ուէլի փէյփըրներ, որոնց մասնակցած եմ երկու անգամ՝ իբրեւ վարորդի օգնականներէն մէկը, զինուած քարտէսներով, բառարաններով, զբօսաշրջային գրականութեամբ եւ պիտանի այլ գիրքերով: Այդ բոլոր մրցումներուն առաջին դիրքը կը գրաւէին հայկական խում-



Շիւսէյն թագաւորը իր իւրայատուկ ինքնաշարժով, 1957-ին:

բակները, որոնց մէջ անպարտելի էր բարձրահասակ ու թիկնեղ, մէկ բազուկը անդամահատուած՝ վարորդ Վարդան Խըրլոբեանին «համայնագէտ» խմբակը, իր «Մինի քուփըր» ինքնաշարժով: Վերջին տարիներուն վերսկսած են այս մրցումները՝ լիբանանեան համալսարանական շրջանակին մէջ:

Իբրեւ մարզական մրցակցային նորութիւն, 1976-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի վարչութիւնը որոշեց առաջին անգամ ըլլալով կազմակերպել ուէլի փէյփըրը՝ խանդավառելու համար յատկապէս 200-ի հասնող երիտասարդականի անդամները եւ համայնքը ընդհանրապէս: Այս խաղին ծանօթ միակ փորձառու վարչականին՝ ինծի վստահուեցաւ խաղին մասնագիտական բաժինը՝ պատրաստել խաղին կանոնները, ճշդել հանգրուաններուն վայրերը եւ «հանելուկ» հարցարանները, որ սակայն՝ ծրագիրին համեմատաբար դիւրին եւ փոքր աշխատանքն է: 1972-1979, գործով Յորդանան կը գտնուէի եւ քանի մը տարիներ Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի մեկուսի շրջանի վարչութեան անդամ էի, իբրեւ երիտասարդականի պատասխանատու: Իբրեւ ոչ յորդանանցի, ըստ երեւոյթին աւելի ծանօթ էի Յորդանանի զբօսաշրջային վայրերուն, նաեւ՝ տեղացիին համար սովորական նկատուած վայրերը իւրայատուկ եւ աչքառու էին ինծի նման օտարին:

Առաջին հերթին պէտք էր ապահովել մասնակցել փափաքող նուազագոյնը տասը խումբ-ինքնաշարժ, որուն հիման

վրայ արտոնութիւն ստանալ պատկան մարմիններէն: Այսպիսի մրցումներու հեղինակութիւնն է «Յորդանանի Թագաւորական Ինքնաշարժներու Ակումբ»ը, որ արտոնութիւն տալով՝ իր կարգին տեղեակ կը պահէ երթեւեկի տնօրէնութիւնը եւ ապահովական մարմինները՝ ոստիկանութիւնը եւ այլն: Վարչութիւնը ապահովելէ ետք այս արտոնութիւնը, իր կարգին, պաշտօնապէս տեղեակ պահեց ապահովական մարմինները եւ մասնակիցները ապահովագրեց մէկ օրուան համար:



Լիբանանի 1960-ական տարիներու ախոյեան Վարդան Խլրդեանը եւ իր «Սինի քուլիը» ինքնաշարժին նմանակը:

Երկրորդ աշխատանքն էր ապահովել ծանուցումներ, գարդարելու համար ինքնաշարժները, ակումբը եւ ակումբին թաղամասը, ինչպէս նաեւ ապահովել պարգեւներ՝ առաջին երեք դիրքերը գրաւող խումբերուն համար, ու բոլոր մասնակիցներուն՝ դրօշակներ, «թիշըրթ» շապիկներ, գլխարկներ եւ այլ տեսակի նուէրներ: Նաեւ, վերջապէս, մրցումի աւարտին կազմակերպել խորխոսանք՝ մասնակիցներուն եւ ակումբի անդամներուն եւ համակիրներուն համար:

Պարտադիր կանոն է խաղէն օր մը առաջ, մասնակիցներուն եւ հանգրուաններու պատասխանատուներուն մանրամասնօրէն բացատրել խաղին կանոնները, արժեւորումի կէտերու դրութիւնը, պատիժները, խաղին աշխարհագրական շրջանը եւ յանձնել ինքնաշարժներուն յատուկ կաշուն համարները եւ ծանուցում-գարդարանքները: Պէտք է նշել, որ բջիջային հեռաձայն, «Կուկը քարտէս» ու «Ճի. փի. էս.» գոյութիւն չունէին տակաւին, ու պարտադիր էր նաեւ ապահովել իրաւարար կազմ մը, որ ինքնաշարժով շրջագայելով, հանգրուաններուն միջեւ ստուգէր խաղին ընթացքը:

Որոշուեցաւ խաղը սահմանափակել Ամմանի եւ արուարձաններուն մէջ, առաւելագոյնը՝ ակումբէն հեռու 20 քմ. շառաւիղով, առաւօտեան ժամը 8-էն կէսօրուան 1, շուրջ հինգ ժամ՝ ընդգրկելով 10 հանգրուան, դիւրին հանելուկներով, իւրաքանչիւր հանգրուանի յատկացնելով միջին հաշուով տրամաբանական ու բաւարար շուրջ կէս ժամ: Ունեցանք մաս-

նակցողներու 14 խումբ-ինքնաշարժ, երիտասարդ եւ երէց անդամներով, ու տասը հանգրուաններու պատասխանատու 20 անդամներ՝ որոնք միայն վերջին պահուն տեղեկացան իրենց ճշդուած վայրը: Այս ձեւով շուրջ 70 անդամ՝ ներառեալ մրցակիցները, ուղղակիօրէն մասնակից դարձան այս խաղին, ու վարչութիւնը լրիւ կազմով հետեւեցաւ իրադարձութիւններուն, շրջագայելով նաեւ հանգրուաններուն միջեւ: Պէտք է ըսել, որ գաղտնապահութիւնը մնաց տիրական, եւ սքանչելի աշխատանք տարին մասնաճիւղին վարչութիւնը եւ երիտասարդականի յանձնախումբը:

Հանգրուաններուն հանելուկները պատրաստելէ ետք, գործարանատէր եղբ. Կարպիս Հարմանտայեանին դատեր՝ քոյր Սիլվային հետ անոր գրասենեակի պատճէնահանով բազմագրեցինք 10 հարցարանները՝ 15-ական օրինակով, 150 պահարան՝ հանգրուաններու թիւերով: Հանելուկներէն երկուքը կը յիշեմ. առաջինը՝ պանդուկ «Շէփըրտ»ն էր, որուն հանելուկն էր տաք ջերմաչափ, անգլերէնով՝ hot, Լ տառը, եւ հովիւ մը՝ shepherd: Երկրորդը՝ Ամմանի հարաւային արւարձաններէն Ապու Ալանտայի մէջ գտնուող եւ ակումբէն ուղղակի հասանելի յայտնի հնութիւնը՝ «Եօթը ննջողներուն քարայր»ն էր՝ Ահլը Բահթ, որուն մասին գրուած է Քուրանի 18-րդ գլխուն մէջ՝ Եօթը անձեր իրենց հաւատքին պատճառով հալածանքէ խուսափելու համար 300 տարի պահուցուած եւ քնացած են այդ քարայրին մէջ: Հանելուկը Եօթը քնացողներու գծագրութիւնն էր, գլուխներուն վերեւ «խը՛-խը» գրութեամբ: Իմ թիւը կարծիքովս, այս ամէնէն դիւրին հանելուկն էր, սակայն...

Այդ Ուրբաթ առաւօտը անբեւեակայելի խանդավառ մթնոլորտ մը կը տիրէր Հ.Մ.Ը.Մ-ի ակումբին մէջ՝ մասնակիցներու եւ անդամներու եռուզեռով, դրօշակներով եւ ծանուցումներով գարդարուած ինքնաշարժներով: Խանդավառութիւնը կը տարածւէր ամբողջ թաղամասը եւ ակումբին սրահը, ուրկէ սկիզբ առաւ մրցումը՝ խաղին կանոններուն վե-



Լիբանանի ռէլի փեյքըր մրցումներէն, Սէն ժոզէֆ համալսարանին կազմակերպութեամբ, 2013-ին:




Շ.Մ.Ը.Մ.ի Ամմանի 1976-ի վարչութիւնը Կեդրոնական վարչութեան ատենապետ եղբ. Վարդգէս Տէր Կարապետեանի հետ: Չախէն աջ՝ եղբայրներ Յարութ Չէքիճեան, Վարդգէս Տէր Կարապետեան, Յարութիւն Թալաթիճեան, Ճորճ Տազետեան եւ Ճորճ Աւագեան:

Նստած, Չախէն աջ՝ եղբայրներ Էլի Պեննեան, Սեպուհ Երկաթեան եւ Արշակ Դաւիթեան:

րաքաղը կատարելէ ետք, ու մանաւանդ յիշեցնելով մրցումին աշխարհագրական ծիրը: Այսպէս, իւրաքանչիւր խմբակէ ներկայացուցիչ մը սրահին յետսամասին շարուած, ազդանը-շանին՝ վազելով պիտի յառաջանային եւ խելին սեղանին վրայ շարուած թիւ մէկ պահարանը՝ ուղղուելու համար դէպի առաջին հանգրուան: Այս իրարանցումէն ետք, նկատեցինք, որ տակաւին կը մնար մէկ պահարան... Փամանակ մը ետք, իմացանք որ Յարութին խմբակը առանց պահարանը առնելու ճամբայ ելած էր, առանց գիտնալու թէ ո՞ւր պիտի երթար... Ու հեռաձայնելէ ետք, թէ ո՞ւր պիտի երթան, վերադարձան ակումբ ստանձնելու իրենց պահարանը:

Տրուած ըլլալով որ մասնակիցներուն մէջ փորձառուներ չկային, մրցումը հեզասահ չընթացաւ, եւ որեւէ խումբ անսխալ չաւարտեց տասը հանգրուանները՝ ակումբ հեռաձայնելով ստանալու համար ցուցմունքներ, կամ՝ խախտելով կանոններ, ու այսպիսով կորսնցնելով նիշեր, սակայն առանց կորսնցնելու գեր-խանդավառութիւնը եւ ոգեւորութիւնը, որ մնաց տիրական, նոյնիսկ խաղէն շաբաթներ ետք:

Բարեբախտաբար, առանց ինքնաշարժի արկածի, խումբերը մէկ-մէկ վերադարձան ակումբ՝ իւրաքանչիւրը պատմելով պատահարներուն եւ ընդհանրապէս գաւեշտալի իրավիճակներուն մասին՝



«Շոք էլ Յեփորտ»ի հանելուկը:

խնդուք-պողոտք-գանգատներով հարուստ: Երէց մասնակից խումբերէն մէկուն պատասխանատուն՝ եղբ. Գէորգը ակումբ հասնելուն՝ բարկացկոտ բացազանչեց, թէ կազմակերպիչները մոռցած էին «ՓիՓ-փաֆ» եւ քիթ-բերան ծածկող դիմակներ բաժնելու խումբերուն... Այսպէս, իր խումբը հարցարան-հանելուկ մը սխալ մեկնաբանելով մեկնած էր Ամմանի ճանճերով լեցուն գարշահոտ աղբանոցը, որ կը գտնուէր քաղաքէն դուրս՝ խաղին որոշուած շրջագիծէն շատ հեռու, եւ հեզնօրէն իրենց հետեւած էին նաեւ երկու այլ խումբեր...

Խրախճանքը աներեւակայելի ուրախ մթնոլորտի մէջ տեւեց մինչեւ ուշ գիշեր: Իւրաքանչիւրը պատմեց իր տեսակաւոր արկածախնդրութիւնները, եւ գանգատելով, որ հարցարանները իրթին պատրաստած էի, առանց իմանալու, որ մինչ այդ՝ մեր միջավայրէն եւ մթնոլորտէն հեռու, անմեղ մը գաղտնի սպասարկութեան հետապնդումին կ'ենթարկուէր...

Այսպէս, խումբերէն մէկը չկարենալով մեկնաբանել «ամէնէն դիւրին» հանելուկը՝ «Եօթը ննջողներուն քարայրը», մտած է քանի մը խանութ՝ ցոյց տալով հանելուկ-նկարը, իմանալու համար անոնց կարծիք-մեկնաբանութիւնը... Ու վերջին խանութին մէջ մոռցած են հարցարանը, ուր այդ պահուն կը գտնուէր գաղտնի սպասարկութեան անդամ մը... Իսկ հարցարանը, զոր բազմազրած էինք եղբ. Հարմանտայեանի գրասենեակը, օգտագործած էինք անոր նախկին տեղացի գործընկերոջ անունով այլեւս անպէտք դարձած նամակի թուղթերուն ետեւի էջերը...

Գաղտնի սպասարկութեան «ժրջան» անդամը, կարծելով որ հանելուկը գերեզման-գանձի մը քարտէսն է, տեսնելով նամակաթուղթին վրայի անունը, կը սկսի հետապնդել զայն, ու խեղճ մարդը ուշ գիշերին կը գտնեն, կը ձերբակալեն եւ կը տանին հարցաքննութեան: Հանելուկ-նամակաթուղթէն բոլորովին անտեղեակ ու շուարած՝ ի գուր ան կը բացատրէ, որ այդ նամակաթուղթը կը պատկանէր հին ընկերութեան մը, որ դադարած է գործելէ, յայտնելով Ապու Իպրահիմ Հարմանտայեանի հետ այժմ դադարած գործընկերութեան մասին: Վերջապէս, ուշ գիշերին, բերման կ'ենթարկուի նաեւ Հարմանտայեանը, որուն վկայութիւնը եւ Հ.Մ.Ը.Մ.ի կողմէ ռէլի փէյփրըին համար առնուած արտօնութիւնը ստուգելէ ետք, խեղճ մարդը ազատ կ'արձակեն:

Մինչ բոլոր մասնակիցները անտեղեակ այս կողմնակի անհաճոյ իրադարձութիւններէն, յատկապէս հանելուկը նպարավաճառին քով մոռցող յանցաւոր խումբի անդամները մեկնեցան խանդավառ, վարչութիւնը եւ գայրացած եղբ Կարպիս՝ Ապու Իպրահիմ Հարմանտայեանը, օրուան խանդավառութեան բոլորովին հակառակ աստիճանի անհաճոյ ժամեր անցուցին, աւարտելով այս առաջին ու վերջին ռէլի փէյփրըի երկար օրը:

(Շար. 3)

1. <https://le-monde-edmond.com/hrh-king-husseinojfjordan-petrolhead/>
2. <https://web.archive.org/web/20101206223308/http://www.atcl.org/autosport.aspx?sec=1>

ՎԿԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ Հ.Մ.Ը.Մ.Ի ՖՈՒԹՊՈՒԻ ՓԱՌՄԵՈՐ ԱՆՑԵԱԿԷՆ

«Մարզիկ»ի այս թիւով կը շարունակենք լոյս ընծայել Հ.Մ.Ը.Մ.Ի Հայկի եւ Պէյրութի ֆութպոլի անցեալի «ասպդ»երէն, մարզիչ, վարչական, վաստակաշար Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Ճորճիկ Ռասարկելէնեանի յուշերը (Գ. մաս), որոնք իբրեւ հուսմ ապադն կրնան մեծապէս օգտակար ըլլալ միութեան մարզական պատմութիւնը գրելու կոչուած ասպագայ պատմագիրին:

Յուշերը, մաս առ մաս, 19 բաժինով, առաջին անգամ հրատարակուած են Հայկի «Գանձասար» շաբաթաթերթին մէջ: «Մարզիկ» զանոնք կը վերահրատարակէ միացեալ շարքով (երեք-չորս մաս միասնաբար) եւ համապատասխան պատշաճեցումներով:



«Մ.»

ՖՈՒԹՊՈՒԻ ՄՐՅԱՇԱՐՔԻ ԱՒԱՐՏԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ՝ ՀԱԼԷՊԻ Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՒ ԱՀԼԻԻ ԽՈՒՄԲԵՐՈՒՆ ՄԻՋԵԻ

17 Ապրիլ 1966-ին, Սուրիոյ անկախութեան տարեդարձին առիթով, Ֆուլթալի ֆետերասիոնին կազմակերպած մրցաշարքի աւարտական մրցումին իրարու դէմ պիտի ձակատէին Հայկի Հ.Մ.Ը.Մ.Ի եւ ԱՀԼԻԻ խումբերը:

Երկու խումբերը դաշտ կը ներկայանան բաւական սպասելի ետք: Ֆետերասիոնի պատասխանատուն կը տեղեկացնէ, որ ցարդ կարելի եղած չէ մրցումին իրաւարարները ապահովել:

Հ.Մ.Ը.Մ.Ի վարչութիւնը վերապահութիւն յայտնած էր ԱՀԼԻԻ ակումբի անդամ շարք մը իրաւարարներու նկատմամբ, որովհետեւ անոնց սուլիչը միշտ եղած էր անարդար ու կողմնակալ եւ պատճառ դարձած անխորժ դէպքերու:

Հ.Մ.Ը.Մ.Ի առաջարկը՝ Դամասկոսէն իրաւարարներ հրաւիրելու, ըստ երեւոյթին չէր արդիւնաւորուած: Կ'առաջարկուի Սալէմ Այմաչի անունը, որ դարձեալ ԱՀԼԻԻ ակումբի պատասխանատու անդամ էր, սակայն համեմատաբար միւսներուն՝ աւելի վստահելի կը նկատուէր:

Կը զիմեն Այմաչին, որ կը գտնուէր դաշտին պաշտօնական ամպիոնին բաժինը: Ան նախ կը մերժէ, ապա համամտութիւն կը յայտնէ, երբ կը վստահեցնեն, որ Հ.Մ.Ը.Մ.Ը համաձայն է այս կարգադրութեան:

Ի վերջոյ աւելի քան կէս ժամ ուշացումով մրցումը ընթացք կ'առնէ:

Նախքան մրցումին մասին արտայայ-

տըւիլս, կ'ուզեմ կարեւորութեամբ անդրադառնալ հետեւեալին.-

Ըստ բարի սովորութեան, Հ.Մ.Ը.Մ.Ի խումբը Շաբաթ երեկոնները ակումբին մէջ կ'ունենար իր հերթական հանդիպումները, ներկայութեամբ խումբի պատասխանատուններուն եւ խաղացողներուն: Հոն նախ արժեւորումը կը կատարուէր նախորդ մրցումին, ապա կը խօսուէր յառաջիկայ մրցումին մասին:

Աւարտական այս մրցումի նախօրեակին, խումբի եղբայրներէն մէկը այս կարեւոր ժողովին օգտակար առաջարկ մը ներկայացուց: Նկատի առած որ ԱՀԼԻԻ խումբին յաջողութեան «բանալին» կեդրոնի միջազգային խաղացող մայիսթրօ Ուաէլ Աբքատն էր, եղբայրը առաջարկեց, որ զինք չէզոքացնելու փորձ կատարենք եւ պատրաստակամութիւն յայտնեց այս պատասխանատու պարտականութիւնը ստանձնելու: Երբ զիրը եթէ յաջողութեամբ պսակուէր, յաղթանակի ճամբան մեծ մասամբ հարթուած կ'ըլլար:

Ժողովականները, մանաւանդ մարզիչ եղբայր Աբրահամ Աւրնեանը, առաջարկը ներկայացնող եղբոր լուսաբանական կարգ մը հարցումներ ուղղելէ ետք, բարձր տրամադրութեամբ հրաժեշտ տուին իրարու:

Յաջորդ օր, մրցումէն առաջ, եղբայրները՝ հանգուցեալ Աբրահամ Աւրնեանը, առաջարկը նոյնութեամբ որդեգրելէ ետք, անհրաժեշտ թելադրանքներ եւ ցուցմունքներ կատարեց եւ այս պարտականութիւնը նշեալ եղբոր վստահելէ ետք յաջողութիւն մաղթեց բոլորիս:





Սուրիոյ ֆուսպոլի առաջին եղանակի՝ 1964-1965-ի խախտեան Հ.Մ.Ը.Մ.ի խումբը:

Մրցումին առաջին վայրկեանէն սկսեալ, Հ.Մ.Ը.Մ.ի խումբին այս խաղառոճը յաջողութեան դրական նշաններ ցոյց տուաւ: Տղոց վճռակամութիւնը, ներդաշնակ խաղարկութիւնը, արդիւնաւոր գործակցութիւնը, առաւել՝ նշեալ եղբօր նպատակասլաց խաղը մայէսթրօ Ուաշլը անակնկալի եւ շփոթի մատնեցին: Աճիլի խումբը, մանաւանդ միջազգային այս խաղացողը, որ հարկադրուած կոչտ, անբնական արարքներու դիմեց, իսկ կեդրոնի իրաւարարը քանի մը անգամ սուլիչը գործածեց եւ զինք ազդարարեց, ստիպուած վերջ տուաւ ոչմարզական իր ընթացքին:

Հ.Մ.Ը.Մ.ի ծրագիրը յաջողութեամբ ընթացաւ, ապահով եւ ճիշդ ձեւով գործադրուեցաւ՝ շնորհիւ խումբին բոլոր եղբայրներուն: Իբրեւ արդիւնք, Ա. կիսախաղը ամբողջութեամբ անցաւ Հ.Մ.Ը.Մ.ի խումբին հակակշիռին եւ տիրապետութեան տակ:

Աճիլին յուսահատութեան եւ անձնատուր ըլլալու նշաններ ցոյց տուաւ եւ անկազմակերպ խաղ կիրարկեց, սխալ փոխանցումներ կատարելով եւ յաճախ կոչտ խաղարկութեան դիմելով:

Խաղին 15-րդ վայրկեանին, եղբ. Ճորճիկի նշանակած կողմը յուսահատութիւն եւ ջղագրգռութիւն պատճառեց հակառակորդ խումբին:

Հ.Մ.Ը.Մ.ի աննման տղաքը, կազմակերպուած, շարունակական յարձակումներով պաշարեցին Աճիլի բերդը: Գօգոյին եւ Սամիր Փաքըսին յաջորդական երկու գեղեցիկ կողերը խորտակեցին Աճիլին բերդն ու խումբը, սակայն օգնական իրաւարարը՝ Արէֆ Արիանի իր պարտականութիւնը լաւագոյնս կատարելով խումբը փրկեց այս անգամ «ցունամիէն» եւ իր ձեռքի դրօշակը վեր բարձրացնելով ստիպեց, որ կեդրոնի իրաւարարը ուրախութեամբ ջնջէ նշանակուած երկու գեղեցիկ կողերը:

Հ.Մ.Ը.Մ.ի անզուգական տղաքը անվճատ շարունակեցին իրենց գրոհները եւ ամէն վայրկեան կող նշանակելու առիթ ստեղծեցին, սակայն իրաւարար-

ները միշտ պատրաստ էին Աճիլի խումբին օգնութեան հասնելու:

Փողովորդային առածը կ'ըսէ՝ «Ախր, արիւնը կը քաշէ»:

Անհաւատալի, բայց հարազատ պատկերը այն էր, որ Ա. կիսախաղի ամբողջ տեւողութեան, Հ.Մ.Ը.Մ.ի պաշտպանողական գիծի, կեդրոնի յետսապահ Մորիս Փաքըս մնալուն կերպով կը գտնուէր դաշտին կեդրոնը, իսկ բերդապահ եղբ. Անդրանիկը մեծ քառակուսիին շուրջը կը ձեմէր՝ գարնանային նպատաւոր արեւը վայելելով:

Եւ այսպէս Ա. կիսախաղը վերջ կը գտնէ 1-0 արդիւնքով՝ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ի, ինչ որ չէր ցուցաներ կիսախաղին հարազատ պատկերը, իրաւարարներու պարկեշտ եւ արդար ըլլալու պարագային:

Բ. կիսախաղադի առաջին վայրկեանէն պատկերը շատ յտակ էր. Հ.Մ.Ը.Մ. ինքնավստահ, միշտ վրձուակամ եւ ներդաշնակ խաղարկութեամբ սկսաւ դարձեալ նեղ կացութեան մատնել հակառակորդ խումբը:

Եղբ. Ճորճիկ Սամիրէն ստացած երկար ու ճշգրիտ փոխանցումը Բ. կիսախաղի 10-րդ վայրկեանին, մեծ վարպետութեամբ, կուրծքով հանդարտեցնելէ ետք, գնդակը կայծակի արագութեամբ, շուրջ 30 մեթրէն հարուածեց դէպի Աճիլի բերդը եւ մեծ վարպետութեամբ ցնցեց Աճիլին եւ անոր բերդն ու բերդապահը եւ նշանակեց Հ.Մ.Ը.Մ.ի երկրորդ կողը:

Հ.Մ.Ը.Մ.ականներուն, համակիրներուն եւ խումբի բոլոր անդամներուն ուրախութիւնը, խանդավառութիւնը չափ ու սահման չունէին: Կեդրոնի միջազգային իրաւարար Սալէմ Այմաշ ձեռքի ազդանշանը տալով՝ դէպի դաշտի կեդրոն ուղղեցաւ մրցումը շարունակելու տրամադրութեամբ եւ որոշումով: Յանկարծ կանգ առաւ, երբ Աճիլի կարգ մը խաղացողներ իր ուշադրութեան յանձնեցին նոյնինքն օրուան «հերոս» կողմի իրաւարարին դրօշակը, որ կը ծածանէր: Իրաւարարը ուղղուեցաւ դէպի այն կողմ: Ճորճիկ իբրեւ թէ ձեռքով կասեցուցած էր գնդակը: Շատ բնական էր, որ կեդրոնի իրաւարարը պիտի չմերժէր ընկերոջ առարկութիւնը: Եւ երրորդ անգամ ըլլալով մերժուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի արդար կողը: Դէպքը կը



պատահի ԱՏԻԻ համակիրներու աչքին առջեւ, երբ եղբ. Ճորճիկ կուրծքով կը կասեցնէ գնդակը, իսկ անոնք ոչ մէկ առարկութիւն, բողոք կամ դժգոհութիւն կը յայտնեն: Եղբ. Ճորճիկ գնդակով 30 մեթր յառաջանալէն եւ կողմնաւոր ալ նշանակելէն ետք, վարպետ իրաւարարը կ'արթննայ եւ կը տեսնէ կարծեցեալ սխալը:

Հ.Մ.Լ.Մ.ի համբերատար խմբապետին բողոքէն ետք խաղը կը շարունակուի: Կը պատահի աւելի մեծ գայթակղութիւնը: Կեդրոնի իրաւարարը ամբողջովին իր դիմակը կը պատռէ եւ ձեռքին գործը բացայայտօրէն կը տեսնէ: ԱՏԻԻ խաղացող Եհիա Հափտարը յտակօրէն օՓ-սայտի դիրքի վրայ էր, իրաւարարները սակայն կ'անտեսեն այս մէկը եւ ԱՏԻԻն ոսկեայ ափսէի վրայ կը հրամայեն գողցուած կողմ իբրեւ նուէր: Առարկութիւնը անիմաստ կ'ըլլայ: ԱՏԻն պէտք է ամէն գնով յաղթէր:

Այս ալ ընդունեցինք եւ մրցումը շարունակեցինք: Անտեղի փենալթի մըն ալ տեղի ունեցաւ ի նպաստ ԱՏԻԻն: Մրցումը կանգ առաւ քանի մը վայրկեան, բողոքեցինք, առարկեցինք, սակայն ապարդիւն: Որոշումը գործադրուեցաւ: Հ.Մ.Լ.Մ.ի խոհեմ բերդապահ եղբ. Անդրանիկ կասեցուց հարուածը եւ ձախողեցուց այդ նպատակին իրագործումը: Փենալթին պէտք էր կրկնել, որովհետեւ եղբ. բերդապահը չէր յարգած Ֆուլթայոյի կանոնները: Հոս, առանց առարկելու, կ'որոշուի լքել դաշտը ու հեռանալ, առաջը առնելու համար ծանր հետեւանքներուն, նկատի ունենալով մանաւանդ 1963-ի ամրան, բամպակի մրցաշարքին ընթացքին պատահածը, որ վերջ գտաւ Հ.Մ.Լ.Մ.ի յաղթանակով (3-2) եւ խումբը ծանր պատիժներու ենթարկուեցաւ:

Խումբը լման կազմով, մարզիչին գլխաւորութեամբ, կ'ուղղուի դէպի Հ.Մ.Լ.Մ.ականներ եւ համակիրներ, կ'ողջունէ բոլորը, կը հանդարտեցնէ բորբոքած սրտերը, ապա կ'անցնի հակառակորդ խումբի համակիրներուն կողմ, դարձեալ կ'ողջունէ բոլորը, որոնք յոտնկայս բացազանջութեամբ «ախոյեան, ախոյեան» կը կանչեն եւ բոլուն ծափահարութիւններով կ'արտայայտեն իրենց գնահատանքը:

Այս էր Հ.Մ.Լ.Մ.ի վիճակը: Հ.Մ.Լ.Մ. միշտ կը պայքարէր 14, ոչ թէ 11 խաղացողներու դէմ: Բոլորը քաջ գիտէինք, պատասխանատուներն ալ կը յիշեցնէին ըսելով. «Տղա՛ք, մէկ կամ երկու կողմ նշանակելը մեզի յաղթանակ չ'ապահովէր: Պէտք է գէթ 5-6 կողմ նշանակէք, որպէսզի եթէ կէսը չեղեալ նկատուի, յաղթանական մնանք»:

Դժուար պայմաններու մէջ ապրեցանք, տոկացինք, համբերեցինք, յարատեւ պայքարի դասը, զոր ստացանք այս հրակայ դպրոցէն՝ Հ.Մ.Լ.Մ.էն, մեզ առաջնորդեց բացառիկ արդիւնքներու, յաղթանակներու եւ փայլուն նուաճումներու, որոնց պսակադրումը եղաւ 1965-ի առաջին ախոյեանութեան բաժակին տիրանալու աննախադէպ իրագործումը եւ մանա-



Չախէն աջ, Գստած՝ Անդրանիկ Սիւլիքճեան (խմբապետ) ախոյեանութեան բաժակով, Գոգո Քիլճեան եւ Գրիգոր Սեւալեան:

Ոսրի, ձախէն աջ՝ Յարութ Բաիքճեան (պահեստի բերդապահ), Վահէ Պետրոսեան եւ Գեորգ Աւրեան:

ւանդ 1965-ի «Մումթազ» դասակարգի առաջին ախոյեանութեան գահին վրայ մեր բազմիւր, «Մարաթոնեան» դժուար, տագնապալի պահեր ապրելէ ետք:

Փա՛ռք ու պատի՛ւ Հ.Մ.Լ.Մ.ին: Բի՛ւր յարգանք, երախտագիտութիւն բոլոր անոնց, ի մասնաւորի Հ.Մ.Լ.Մ.ի աննման տղոց, որոնք Հ.Մ.Լ.Մ.ականի բարձր գիտակցութեամբ, վճռակամութեամբ եւ անսակարկ նուիրումով նպաստեցին Հ.Մ.Լ.Մ.ի գոյատեւման եւ հզօրացման՝ արդարացնելով իրենց վրայ դրուած յոյսերն ու սպասումները եւ Հ.Մ.Լ.Մ.ի համայն ընտանիքին հրամայելով պատմական, անմոռանալի նուաճումներ ու փառքի օրեր:

**ՅԱՌԱՋ ԱՆՍԱՍԱՆ,
ՅԱՌԱՋ ԱՆՎԵՀԵՐ
ԴԷՊԻ ՆՈՐ ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ**
Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ի փառաւոր, պանծալի երթը կը շարունակուէր:

Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ի եւ Դանիոյ խումբերուն միջազգային հանդիպումը, Դեկտեմբեր 1965-ին, տեղի կ'ունենայ Հալէպի քաղաքապետարանի դաշտին վրայ, հոծ թիւով

հանդիսականներու ներկայութեան:

Առաջին անգամ ըլլալով միջազգային նման կարեւոր մրցում մը Հալէպի Հ.Մ.Լ.Մ.ի խումբը կը կատարէր Ուրբաթ օրով:

Այս ուժեղ խումբը Սուրիա ժամանած էր Սուրիոյ բանակի խումբին պատասխանատուներուն հրաւէրով՝ երկու մրցում կատարելու Հ.Մ.Լ.Մ.ի եւ Սուրիոյ բանակի Ֆուլթայոյի խումբերուն հետ:

Բանակի խումբին պատասխանատուներու որոշումին համաձայն, առաջին մրցումը տեղի պիտի ունենար Ուրբաթ օր, Հալէպի մէջ:

Սուրիոյ երկու խումբերը թէեւ գաղափար չունէին այս խումբին խաղատճին մասին, բայց գիտէին, որ խումբը իր երկիրի զօրաւորագոյն կազմերէն մէկը կը նկատուէր: Արդիւնքները այդպէս ցոյց կու տային: Այսպէս, անոնք փորձի ընթացքին կը ծանօթանան խումբին կարողութեան եւ ըստ այնմ կը պատրաստուին:

Ուրբաթ օրուան մրցումին առաւօտեան հետաքրքրական դէպք մը կը պատահի:

Այդ օրերուն ես կը պաշտօնավարէի Ազգ. Սահակեան վարժարան, իբրեւ արաբերէն լեզու դասաւանդող ուսուցիչ: Մրցումին օրուան առաւօտը, դադարի պահուն, ուսուցչական կազմով համախմբուած էինք գաւաթ մը սուրճի շուրջ, երբ պաշտօնակիցներէս պրն. Յակոբ Գասապեանը ինծի հարցուց.

- Ճորճիկ, ի՞նչ պիտի ըլլայ այսօրուան մրցումին ճակատագիրը: Առաջին անգամ ըլլալով, ինքնավստահ պատասխանեցի.
- Պիտի յաղթենք, հիմնուելով մեր արձանագրած պատմա-

կան արդիւնքներուն վրայ: Այս պատճառով բոլորիս ինքնավստահութիւնը շեշտուած է, եւ մենք դաշտ պիտի ներկայանանք վճռակամ, բարձր տրամադրութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուլթայլի գանձանակին մէջ նոր, անմոռանալի յաղթանակ մը եւս գետեղելու առաջադրանքով:

Պատասխանս պաշտօնակիցս չհամոզեց: Ան ըսաւ.

- Եթէ դուք այսօր յաղթէք, ես պարտաւոր կ'ըլլամ ուսուցչական լրիւ կազմին համար ֆուլթայլի սեղան մը սարքել: Հակառակ պարագային, դուն պիտի կատարես այդ պարտականութիւնը:

Առաջարկը ընդունեցի:

Կէսօրէ ետք տեղի ունեցաւ պատմական հանդիպումը:

Մրցումին առաջին վայրկեաններէն մեզի եւ փորձառու, իմաստուն մարզիչին յայտնեցին, որ հիւր խումբի յառաջապահ գիծի թիւ 8 եւ 10 խաղացողները չափազանց վտանգաւոր կը թուին:

Եղբայր Աբրահամ Աւրնեան ինծի եւ Գամիշլիէն ժամանած եղբ. Յովսէփ Պասմաճեանին թելադրեց մրցումին ամբողջ տեւողութեան մօտէն հսկել այս զոյգին:

Մարզիչ եղբօր հրահանգը ամենայն լրջութեամբ, բծախնդրութեամբ եւ հետեւողականութեամբ գործադրուեցաւ, եւ տուաւ իր դրական, շահեկան արդիւնքը:

Խումբի եղբայրներս, օգտուելով ստեղծուած նպաստաւոր այս կարգադրութենէն, իրենց սկսած ներդաշնակ եւ յաջորդական, վտանգաւոր յարձակումները շարունակեցին եւ ստացան դրական արդիւնք: Այս առաւելութենէն օգտուելով մեր խաղաոճը զգալիօրէն զարգացաւ: Գործակցութիւնը եւ յարատեւ պայքարելու եղանակը տուին իրենց բարեբեր արդիւնքը:



Շալէպի Շ.Մ.Ը.Մ.ի խումբի աստղերէն, միջնապահ գիծի հերոս, եղբայր Սարգիս Բեռլեան (Նեկրօ):



Շ.Մ.Ը.Մ.ի Շալէպի խումբի ավագ մարզիչ եղբ. Աբրահամ Աւրնեան:

Ա. կիսախաղը վերջ գտաւ Հ.Մ.Ը.Մ.ի յաղթանակով՝ 2-1 արդիւնքով: Առաջին կողը նշանակեց եղբ. Սերոբ Մերտխանեան, զօրաւոր հարուածով ցնցելով հակառակորդին բերդը, իսկ երկրորդ կողը նշանակեց Մորիս Ֆաքըս, որուն 20 մեթրէն ազատ զօրաւոր հարուածը ձեղքեց խաղացողներուն պատը, հասնելով իր նպատակին:

Դաշտ ներկայ գտնւողները իրենց քաջալերանքով, խանդավառ երգերով հարստացուցին միջնո-

րրտը եւ մեծապէս նպաստեցին մեր այս յաջող, չքեղ երթին:

Բ. կիսախաղը դարձեալ եղաւ ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ի խումբին:

Հերոս եղբայրներս բազմապատկեցին իրենց գրոհները եւ վտանգաւոր, կազմակերպուած յառաջխաղացքը ու բազմաթիւ անգամներ վտանգեցին հիւր խումբին բերդը, սակայն վարպետ, արթուն բերդապահ յաջողեցաւ իր բերդը փրկել ստոյգ առիթներէ:

Հ.Մ.Ը.Մ.ի բերդապահն ու յետսպահ գիծի խաղացողները եւ իրենց պարտականութիւնը լաւագոյնս կատարեցին եւ բոլոր յարձակումները ձախողեցուցին, ի մասնաւորի եղբ. մարգիչին կատարած դասաւորումը մեծապէս նպաստեց այս յաղթանակին: Վտանգաւոր մարզիկներուն հսկողութիւնը ստանձնած եղբայրները կատարելապէս կատարեցին իրենց պարտաւորութիւնը եւ արժանացան բոլորին գնահատանքին:

Վերջապէս լուսեցաւ իրաւարարին խաղին աւարտը յուշող ազդանշանը: Ներկաներուն հոգիներն ու սրտերը համակուեցան ուրախութեան եւ անսահման գոհունակութեան զգացումներով: Արդիւնքը 2-1 էր, ի նպաստ Հ.Մ.Ը.Մ.ի խումբին տողոց, որոնք անգամ եւս փաստեցին իրենց զգալի ներկայութիւնը նաեւ միջազգային բեմի վրայ:

Տեղին է յիշել, որ խաղին աւարտէն 5 վայրկեան առաջ, իրաւարարը Հ.Մ.Ը.Մ.ի խումբին շնորհեց փենալթի մը: Խումբի եղբայրներէն մէկը մերժեց մարզիչին որոշումը եւ թոյլ չտուաւ, որ հարուած ուղղէ եղբ. Ճորճիկը, որուն պարտականութիւնն էր յաճախ ուղղել փենալթիի հարուածը:

Այսպէս, գնդակը վրիպեցաւ իր նպատակէն եւ խումբը կորսնցուց բերդը կող մը նշանակելու ոսկի առիթը՝ անհատի մը եսասիրութեան պատճառով:

Փա՛ռք ու պատի՛ւ Հ.Մ.Ը.Մ.ին:

Սէր, երախտագիտութիւն եւ բարձր գնահատանք խումբի եղբայրներուս, որոնք անգամ մը եւս հաստատեցին, որ Հ.Մ.Ը.Մ.ի պանծալի յաղթանակին չքեղ արշաւը կը շարունակուի՝ ի պատիւ բոլոր Հ.Մ.Ը.Մ.ականներու ջանքին, գործակցութեան եւ գոհողութեան:

Աստուծոյ կամքով յաջողեցանք դարձեալ պատմական անմոռանալի նուա-



ճուժմ մը արձանագրել եւ գայն նուիրել հայութեան, ի մասնաւորի՝ Հ.Մ.Ը.Մ-ի ընտանիքին:

Հ.Մ.Ը.Մ.Ը. ՄԱՐԴԱԿԱՅԻՆ ՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՈՒ ԵՒ ԻՏԷԱԼՆԵՐՈՒ ԴԱՐՔՆՈՑ

Ի՞նչ ստացանք այս հսկայ դպրոցէն՝ Հ.Մ.Ը.Մ-էն:

Հ.Մ.Ը.Մ-ը մարզական, սկստական միութիւն մը ըլլալով հանդերձ, է՛ ու կը մնայ՝ մարդկային, ազգային սկզբունքներու, իտէալներու լիբրաւ դարձնողը եւ կը պատրաստէ մարդը, մանաւանդ ճշմարիտ, գիտակից եւ յանձնառու հայ մարդը, որ կը յաջողի քաջութեամբ ու համբերութեամբ դիմադրուել կեանքի ընթացքին իր դէմ զցուած բազում խոչընդոտներն ու դժուարութիւնները եւ յաղթահարել զանոնք, իր երթը շարունակելու մշտանորոգ տեսիլքով:

Հ.Մ.Ը.Մ-ը մեզմէ վերջնականապէս կը վանէ վատ սովորութիւնները, հոգեկան բարոյութիւնը եւ մեր հոգիներուն, միտքերուն եւ էութեան մէջ կը սերմանէ բարին, ազնիւը, «Բարձրացի՛ր-բարձրացուր» նշանաբանին խոր իմաստը եւ ազնիւ նպատակը:

Այս բոլոր նպատակներուն կողքին, Հ.Մ.Ը.Մ-ը մեր մէջ կ'ամրապնդէ քրիստոնէական կուռ հաւատքն ու սէրը:

Հ.Մ.Ը.Մ-ի այս հսկայ դպրոցէն մենք կը սորվինք համբերութիւն, ջանասիրութիւն, կարգապահութիւն, հաւատարմութիւն, ծառայասիրութիւն, անձնագոհութիւն, ընդհանրականը անհատականէն վեր դասելու ազնիւ սկզբունք, որոնց խիստ կարիքը ունի ոեւէ անհատ, որովհետեւ այս բոլորը կը նկատուին օրինակելի կեանքին մնայուն եւ կենսական բանալիները:

Հ.Մ.Ը.Մ-ը մեզի կը սորվեցնէ մեր կեանքի բառարանէն վերջնականապէս վանել յուսահատութիւնը, մեծամտութիւնը, եսասիրութիւնը, որոնք հոգեկան ախտեր են եւ անհատն ու հաւաքականութիւնը կ'առաջնորդեն դէպի ձախողութիւն եւ անբաղձալի վախճան:

Հ.Մ.Ը.Մ-ը մեզի կը սորվեցնէ, որ կեանքը մնայուն պայքար է: Համբերութեամբ, աշխատանքով ու հաւատքով, բայց մանաւանդ ծրագրեալ աշխատանքով անկարելին կրնանք կարելի դարձնել եւ խաղաղ, բարօր կեանք մը ապրիլ:

Հ.Մ.Ը.Մ-ը մեզի կը դաստիարակէ եւ մեր հոգիներուն ու միտքերուն մէջ կը սերմանէ սէր, յարգանք եւ հաւատարմութիւն մեր ծնողներուն, ազգին, Աստուծոյ եւ հայրենիքին: Ան ծանր հարկադրանքի տակ կը դնէ մեզ, որպէսզի բարձր գիտակցութեամբ, բարոյապէս եւ նիւթապէս նպաստենք մեր ազգին ու հայրենիքին՝ մասնակցութիւն բերելով այս նպատակին ծառայող իւրաքանչիւր գործի եւ ծրագրի:

Այս եղած է հսկայ միութեան՝ Հ.Մ.Ը.Մ-ի կոչումը: Ան պիտի շարունակէ իր սրբազան գործը՝ նորահաս սերունդները կերտելով, անոնց միտքը, հոգին ու մարմինը մարզելով եւ գիտակից հայր պատրաստելով:

Ուստի, սիրելի՛ երիտասարդներ,

Համախմբուեցէք Հ.Մ.Ը.Մ-ի շուրջ եւ մաս կազմեցէք անոր առողջ մթնոլորտին եւ ծաւալուն գործունէութեան:

(Շար. 4)

ԳԻՐ ՇՆՈՐՀԱՒՈՐԱՆՔԻ

ՀԱՅ ՈԳԻԻ ՊԱՀԱՊԱՆԸ

95-ամեայ յոբելեար Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան,

Հ.Մ.Ը.Մ-ի համահայկական մեծ ընտանիքին անունով ջերմօրէն կը շնորհաւորենք Համազգային Հայ Կրթական եւ Մշակութային Միութեան 95-ամեայ յոբելեանը:

Հայ մշակոյթի, հայ գիրի եւ գրականութեան ճամբով հայը հայ պահող Համազգայինը անուրանալի դեր ունի ազգային մեր ինքնութեան եւ դիմագիծին պահպանման աշխատանքին մէջ: Իր նուիրեալ անդամներով, հաստատութիւններով եւ կազմակերպական միաւորներով Համազգայինը 95 տարի հայ ոգին վառ պահած է նորահաս սերունդներուն մօտ:

Համազգայինը ո՛չ միայն տարածած է մեր անցեալի հոգեմտաւոր արժէքները, այլեւ՝ ստեղծած է նորերը, տեսաբար հարստացնելով մշակոյթի մեր գանձարանը:

Համազգայինի լուսաւոր հիմնադիրներուն՝ Լեւոն Շանթերու, Նիկոլ Աղբալեաններու, Համօ Օհանջանեաններու եւ անոնց արժանաւոր յաջորդներուն ազգապահպան աշխատանքով Սփիւքի օտար ափերուն ծաղկած են հայ երգն ու պարը, գրականութիւնն ու գեղարուեստը, թատրոնն ու մշակոյթի այլ կալամները:

Հայաստանի վերանկախացումէն ետք, Համազգայինը եղած է մշակութային կամուրջ՝ հայութեան երկու հատուածները իրարու կապող, իրարու ծանօթացնող եւ իրարու հարստացնող: Հայրենի մշակութային գործիչներ Համազգայինի կառոյցներու ճամբով հայրենիքի շունչն ու ոգին փոխանցած են Սփիւք, փոխարէնը՝ Սփիւքի հայրենակարօտ ու հայրենատենչ զգացումներու արձագանգը հանդիսանալով հայրենիքի մէջ:

Իր դարադարձի տօնակատարութենէն հինգ տարի առաջ, Համազգայինին կը մաղթենք յարատեւ վերելք եւ նորանոր յաջողութիւններ հայ մշակութային արժէքներու տարածման եւ հարստացման առաքելութեան մէջ:

Վարձքը կատար 95-ամեայ պատուաբեր պատմութիւն կերտած բոլոր նուիրեալներուն, բարի երթ այդ պատմութեան մնայուն ուղեւորներուն՝ այսօրւան եւ վաղուան հաւատաւոր Համազգայնականներուն:

Հ.Մ.Ը.Մ.Ի
ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐՅԱՍԻ ՄԱՍՆԱԾԻՒՂԻ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԲԱՆԱԿՈՒՄԸ



Թղթակից ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Հակառակ 12 Գեկտեմբեր 2022-ին ի վեր պարտադրուած շրջափակման դժուարին պայմաններուն, Արցախի Մեկուսի շրջանը կը շարունակէ միութենական իր աշխոյժ գործունէութիւնը՝ ներքին ու արտաքին զանազան ձեռնարկներով, որոնց մէկ մասին անդրադարձած էինք «Մարզիկ» ի մեր նախորդ թիւերով (թիւ 428, 429): Ստորեւ՝ լրացուցիչ ակնարկ մը վերջին շրջանի աշխատանքներուն մասին:

ՕՐ 1

2 Յուլիս 2023-ին մեկնարկեց Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի մասնաճիւղի սկստուաների խմբապետական բանակումը:

ՕՐ 2

Առաւօտեան կայացաւ բանակումի բացման հանդիսաւոր արարողութիւնը: Շուրջ 20 աստիճանաւոր սկստուաներ մեկնարկեցին բանակային խտացեալ դասընթացներ:

Այդ օրը պատահական չկայացաւ բանակումի բացման արարողութիւնը: Այդ օր Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի վարչութեան անդամ Արտակ Իշխանեանի ծննդեան

30-ամեակն էր, ով չինայելով ամենաթանկը՝ անմահացաւ 44-օրեայ պատերազմում:

Արտակ Իշխանեանի յիշատակին խոնարհուելու համար Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի վարչութիւնը, սկստուաները եւ Հ.Յ.Դ. Արցախի Երիտասարդական Միութիւնը այցելեցին նրա ծննդավայր, որտեղ երեք արի-արեւոյշներ տուեցին Հ.Մ.Ը.Մ.ականի իրենց երգումը:

Միջոցաւմանը յաջորդեց վոլիպոլ եւ կրակային մրցոյթ՝ նուիրուած Արտակ Իշխանեանի անմար յիշատակին:

ՕՐ 3

Սկստուաները շարունակեցին բանակային կեանքը՝ շարային պատրաստութիւն, դասախօսութիւն՝ ընդհանուր ռազմավարութեան մասին, խմբային աշխատանքներ, հոգեւոր սնունդ, կրակային պատրաստութիւն եւ բազմազան այլ գործեր հարստացրին առօրեան:

Երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.Ի հիւրընկալ սկստուաները Հ.Յ.Դ. Արցախի Երիտասարդական Միութեան վարչութեան անդամներին ընդունեցին խարուկահանդէսի շուրջ:

ՕՐ 4

Բանակման աշխատանքները իրենց աւարտին հասան սկստուական յազեցած ծրագրերով եւ անմոռանալի խարուկահանդէսով:

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄ

Շաբաթ մը ետք, սկստուաները հաւաքեցին քննարկելու անցած բանակումը եւ ապագայ ծրագրերը: Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի վարչութեան կողմից քոյրեր Վիքթորիա Մկրտչեանը, Աննա Գաբրիէլեանը եւ Արիաննա Սարումեանը պարզեւատրուեցին շնորհակալագրով՝ բանակմանն աշխոյժ գործունէութիւն ծաւալելու համար:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՄԱՐՑԱԽՆԵԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ



Յուլիսի 23-28-ը Ստեփանակերտի «Կարկառ» ճամբարի տարածքում կայացավ Հ.Մ.Ը.Մ.Ի համաարցախեան երկրորդ բանակումը: Համաարցախեան առաջին բանակումը կազմակերպուել է մասնաճիւղի բացման տարուայ ընթացքում՝ 2019 թ.: Դրանից յետոյ քորոնա վիրուսի, պատերազմի պատճառով աշխատանքները յետաձգուել են:

Հ.Մ.Ը.Մ.Ի Արցախի մասնաճիւղի ատենապետ եղբ. Դաւիթ Գրիգորեանի խօսքով՝ այս պայմաններում բանակումի կազմակերպումը մեծ մարտահրաւէր է, սակայն առողջ դաստիարակութիւնը, կրթութիւնը չպէտք է սուտօեն՝

անկախ պայմաններից: «Նախքան բանակումը 25 հոգանոց խմբապետական կազմին պատրաստելու աշխատանքներ են ընթացել: Բանակումին Ստեփանակերտի դպրոցներից 4-ական տղայ ու աղջիկ ենք ընդգրկել, նախատեսում էինք 96 հոգի նորագիր ու խմբապետական կազմ, բայց առաջին օրը 125 հոգի մասնակիցներ կային: Երկու օր յետոյ մօտ 40-ը լքեցին ճամբարը՝ դժուար պայմանների, հարազատների կարօտի պատճառով, այժմ 100 մասնակից կայ», - ասում է նա:

- Հ.Մ.Ը.Մ.Ի նպատակը միտքն ու մարմինը մարզելն է, մեր ճամբարները շէնքերում չեն լինում, կազմակերպ-

ւում են վրանային պայմաններում, բնութեան գրկում, - նշում է ճամբարի պետ Անդրանիկ Չառուչեանը:

- Խանգարող հանգամանքներ կային, բայց կարողացանք դրանք յաղթահարել: Ժամանակի սղութեան ու տեղատարափ անձրեւների պատճառով որոշ նախատեսուած ծրագրեր չկարողացանք իրագործել: Տարբեր դպրոցների աշակերտների տարբեր խմբերում ընդգրկեցինք, կարողացանք համախումբել, ծանօթացնել իրար հետ, - յաւելում է ճամբարի պետը:

Բանակումին ֆինանսապէս աջակցել է Արցախի կրթութեան, գիտութեան, մշակոյթի եւ սպորտի նախարարութիւնը, ծախսերի մի մասն էլ հոգացել է Հ.Մ.Ը.Մ.Ի Կենտրոնական Վարչութիւնը:

Բանակումի սկիզբը ազդարարւում էր առաւօտեան ժամը 7-ին, այնուհետեւ





նախավարժանք, վրանների ստուգում, մաքրում, դասախօսություններ, մարզական մրցոյթներ, ժամանցային խաղեր: Նպատակը պատանիներին գործնականում սկստուական աշխատանքներին ծանօթացնելն է, սկստուական նոր խմբեր պատրաստելը եւ բնութեանն աւելի մօտ դարձնելը:

Ինչպէս նշում են կազմակերպիչները,

ամենամեծ խնդիրը սննդի հետ էր կապուած, որի պատճառով ստիպուած մի շաբաթ յետաձգել են ծրագիրը՝ տեղական բանջարեղէնի սեզոնին հասնելու համար: Նաեւ բանակավայրն են Ստեփանակերտից մօտիկ վայր ընտրել, որպէսզի հնարաւոր լինի սնունդը հասցնել, նաեւ հիւանդանոցին մօտ լինեն: Բանակումին մասնակցում էին 11-12 տարեկան պատանիներ: Նրանք նշում են, որ այս օրերի ընթացքում աւելի կարգապահ, կազմակերպուած են դարձել, աւելի լաւ են սկսել ճանաչել բնութիւնը, ու բանակումը կը մնայ որպէս լուսաւոր դրուագ:

Բանակումի փակման արարողութեան ժամանակ մասնակիցները հանդէս են եկել սպորտային, գեղարուեստական ելոյթներով, ակտիվութիւն ցուցաբերած սկստուները պարգեւատրուել են պատուգրերով ու շնորհակալագրերով, իսկ երեկոն եզրափակուել է խարոյկի շուրջ հաճելի ժամանցով:



Թղթակից
ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Մէրն առ հայրենիք կիսատ չի լինում. կա՛մ սիրում են, կա՛մ ոչ: Հայրենիքի յարատեւման համար մեր հայորդիները մըշտապէս ստիպուած են եղել պատերազմել թշնամու դէմ: Այդ իսկ պատճառով ոչ ոք գիտի խաղաղութեան գինն այնքան լաւ, որքան որ մենք: Ինչպէս Արցախի հերոս Ալէն Մարգարեանն է ասել. «Պատերազմն աշխարհի ամենաբարձրաճաշակ սիրահարն է. այն միշտ տանում է լաւագոյններին»: Այդ լաւագոյններից էր նաեւ Արտակ Իշխանեանը:

Յուլիսի 3-ին լրացել է Դաշնակցական, Հ.Յ.Դ. ԱՅՄ-ի երկարամեայ անդամ, Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի Մեկուսի վարչութեան անդամ եղբ. Արտակ Իշխանեանի ծննդեան 30-ամեակը:

Հ.Յ.Դ. Արցախի Երիտասարդական եւ Պատանեկան Միութեան անդամները, Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի սկստուները իրենց մասնակցութիւնն են ունեցել Արտակ Իշխանեանի ծննդավայր Աշան գիւղում կազմակերպուած յուշ-ցերեկոյթին:



Թղթակից
ԹԻՖԼԻՍ

28 Մայիսի կէսօրէ առաջ ժամը 11-ին, Թիֆլիսի «Յովհաննէս Թումանեանի տուն» կենտրոնից մեկնարկեց աւանդական քայլերթ՝ նուիրուած Սայաթ Նովայի յիշատակին: Քայլերթի մասնակիցները կարմիր վարդերով անցան քաղաքի կենտրոնական փողոցներով՝ ի



ՅՈՒՇ-ՅԵՐԵԿՈՅԹ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՆԱՀԱՏԱԿ ԵՂԲ. ԱՐՏԱԿ ԻՇԽԱՆԵԱՆՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Հ.Յ.Դ. ԱԵՄ-ի Կենտրոնական Վարչութեան անունից ելոյթ է ունեցել Տիրուհի Գասպարեանը, Հ.Յ.Դ. Արցախի Պատանեկան Միութեան անդամները հանդէս են եկել երաժշտական կատարմամբ, իսկ Հ.Յ.Դ. ԱԵՄ-ի անդամ Մարթա Չիլինգարեանն արտասանել է իր հեղինակած բանաստեղծութիւնը՝ նուիրւած Արտակ Իշխանեանի յիշատակին։ Միջոցառման ընթացքում տեղի է

ունեցել սկաուտների երգման արարողութիւնը, որից յետոյ Հ.Յ.Դ. Արցախի Երիտասարդական Միութեան նախաձեռնութեամբ Աշանի դպրոցում կազմակերպուել է Արտակ Իշխանեանի ծննդեան օրուայ առթիւ հրաձգութեան մրցոյթ։ Հ.Յ.Դ. Արցախի Պատանեկան Միութեան, Հ.Մ.Ը.Մ-ի Արցախի միաւորի անդամներից ու Աշան գիւղի դպրոցականներից լաւագոյն արդիւնքներ

գրանցած մասնակիցները պարգեւատրուել են պատուոգրերով։ Օրն ամփոփուել է Արտակ Իշխանեանի նահատակման վայրում, որտեղ ընկերները ծաղիկներ են խոնարհել ու յարգանքի տուրք մատուցել նրա յիշատակին։

ԱԲԱՆԴԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԹ ԵՒ ՍԿԱՌԻՏԱԿԱՆ ԽՈՍՏՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ՝ ԹԻՖԼԻՍԻ ՄԷՋ

նշան Սայաթ Նովայի մեծութեան, անմահութեան եւ արդիականութեան։ Քայլերթը աւարտուեց Սուրբ Գէորգ եկեղեցում։

Յաւարտ կիրակնօրեայ Սուրբ Պատարագի, Թիֆլիսի Սուրբ Գէորգ Առաջնորդանիստ եկեղեցու բակում, մեծ գուսանի շիրիմի մօտ, Վիրահայոց Թեմի Առաջնորդ Կիրակոս Վրդ. Դաւթեանի նախագահութեամբ եւ հոգեւոր դասի մասնակցութեամբ կատարուեց հոգեհանգստեան կարգ եւ կարմիր վարդեր խոնարհուեցին ժողովրդական անմահ երգիչի շիրիմին։

**ԽՈՍՏՄԱՆ
ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆ**

Շաբաթ մը ետք, 3 Յունիսին, Սուրբ



Գէորգ Առաջնորդանիստ եկեղեցու բակում անցկացուեց սկաուտական խոստման արարողութիւն։ Հ.Մ.Ը.Մ-ի Թիֆլիսի սկաուտական շաբերը համալրուեցին եւս 30 նոր անդամով։

Եւս 30 պատանի միացաւ Հ.Մ.Ը.Մ-ի աշխարհասփիւռ ընտանիքին, հրապարակայնօրէն խոստանալով լինել հաւա-



տարիմ Աստծուն, ծառայել ազգին, հայրենիքին եւ միշտ օգնել ուրիշին։

Խոստման արարողութեանը ներկայ գտնուեց Վիրահայոց Թեմի Առաջնորդ Կիրակոս Վրդ. Դաւթեանը։ Նա շնորհաւորեց երեխաներին եւ մաղթեց, որ հաւատարիմ լինեն իրենց խոստմանը։



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 46-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԵՒ ՓԱՌԱՏՕՆԻ ԵԶՐԱՓԱԿՈՒՄ



Թղթակից ԼՈՍ ԱՆՃԵԼՍԸ

Երկար ամիսներ մարզական ոգիով պայքարել է ետք, Կիրակի, 9 Յուլիս 2023-ի կէս գիշերին, յաղթական աւարտին հասան Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 46-րդ մարզախաղերը, պատուոյ նախագահութեամբ՝ ազգային բարերար տէր եւ տիկին Ճէք եւ Զարիկ Եուրէճեաններուն: Նաւասարդեան երիտասարդական այս մար-

զախաղերուն եզրափակիչ շաբաթավերջը եղաւ իւրայատուկ, տպաւորիչ, համախմբող եւ յուսադրիչ: Անիկա շրջանի հայութիւնը համախմբեց Birmingham Community Charter High School-ի շրջափակին մէջ, ուր ներկաները վերապրեցան հայութեան անցեալի փառահեղ պատմութիւնը, վայելեցին հայկական եւ ազգային տոհմիկ երաժշտութիւնը, ականատեսը եղան մեր երիտասարդութեան յաղթանակներուն:

Ներկաները գոհունակութեամբ հե-

տեւեցան Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտական եւ մարզական խումբերու շքերթին ու ախոյեանական բաժակներու յանձնումին:

Այս բոլորին հարազատ թարգմանը հանդիսացաւ Նաւասարդեան մարզախաղերու յաղթանակի տողանցքը, որ տեղի ունեցաւ Շաբաթ, 8 Յուլիսի երեկոյեան, Birmingham Community Charter High School-ի մարզադաշտին վրայ, մեծ թիւով Հ.Մ.Ը.Մ-ականներու, ծնողներու, համակիրներու եւ զանազան կազմակերպութիւններու ներկայացուցիչներու մասնակցութեամբ:

«ՀՐԱՇՔ» ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՄԵՏԱԼՆԵՐՈՒ ԅԱՆՁՆՈՒՄԸ

Նախքան տողանցքը տեղի ունեցաւ «Հրաշք» բաժանմունքի մետալներու յանձնումը՝ Թեմի Առաջնորդ Թորգոմ Եպս. Տօնոյեանի, պատուոյ նախագահներու, «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»ներու եւ Շրջանային Վարչութեան անդամներու ներկայութեամբ, երբ Սրբազան հայրը օրհնեց «Հրաշք»ի մարզիկները եւ ծնողները, բարձր գնահատեց «Հրաշք» բաժանմունքի պատասխանատուները եւ





անոնց գործունեությունը: Ապա, Ազգային Առաջնորդարանին կողմէ կատարեց 10,000 տոլարի սրտաբուխ նուիրատուություն, որ պիտի նպաստէ «Հրաշք» բաժանմունքի աշխատանքներուն:

Օրուան խօսնակն էր Փասսատինայի «Ազատամարտ» մասնաճիւղի անդամներէն քոյր Ալիք Մարսէլեան, որ հայերէնով եւ անգլերէնով ձեռնհասօրէն վարեց յայտագիրը:

ՆԵՐԿԱՆԵՐԸ

Ժամը 6-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու մասնաճիւղերու խմբապետներու առաջնորդութեամբ՝ մարզադաշտ ներկայացան եւ պատուոյ հարթակին վրայ իրենց տեղերը գրաւեցին Թեմի Առաջնորդ Թորգոմ Եպս. Տօնոյեան, Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 46-րդ մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկին Ճէք եւ Զարիկ Եուրէճեանները, «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական» եղբ. Մանուէլ Մարսէլեան եւ Շըրլանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքեան:

Փակման հանդիսութեան ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչու-

թեան անդամ եղբ. Արմանտ Քիլիճեան, Հ.Մ.Ը.Մ-ի 45-րդ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկին Արա եւ Ալին Չաղլասեաններ եւ Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Ռազմիկ Ա. Քհնյ. Խաչատուրեան: Ներկայ էին նաեւ Հ.Մ.Ը.Մ-ի անցեալի պատուոյ նախագահներ, «Տիպար Հ.Մ.Ը.Մ-ական»ներ, Հ.Մ.Ը.Մ-ի համակիրներ, հովանաւորներ, նուիրատուներ ու ծնողներ:

ԴՐՕՇԱԿԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Խմբապետուհի քոյր Շարլին Կիւզէլեան արտօնութիւն խնդրեց Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքեանէն՝ սկսելու հանդիսութիւնը: Դրական պատասխան ստանալէ ետք, ան հրահանգեց դրօշակի արարողութեամբ սկսելու հանդիսութիւնը: Ազգային երգերու խանդավառ երաժշտութեամբ մարզադաշտ ներկայացաւ Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբը, մեծ ոգեւորու-

թիւն ստեղծելով ներկաներուն մօտ:

Ներկաները աւելի ոգեւորուեցան, երբ ինքնավստահ քալուածքով Հ.Մ.Ը.Մ-ի դրօշակակիրներու խումբը ներկայացաւ մարզադաշտ՝ իր հետ բերելով Մ. Նահանգներու, Հայաստանի, Արցախի, Գալիֆօրնիոյ, Նեւատայի, Հ.Մ.Ը.Մ-ի եւ Նաւասարդեանի դրօշները: Ապա, գեղեցիկ տեսարան մը կազմելով մարզադաշտին վրայ՝ պատուի կանգնեցան եւ քարացած ունկնդրեցին Մ. Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ-ի քայլերգները, Հ.Մ.Ը.Մ-ի շեփորախումբին կատարողութեամբ: Ապա, անոնք յարգանքով գետեղեցին դրօշները մարզադաշտին վրայ գեղեցկօրէն յարդարուած բեմին կողքը:

Յայտագիրը սկսաւ մէկ վայրկեան յոտնկայս լուրթեամբ՝ յարգելով յիշատակը մեզմէ յաւէտ բաժնուած Հ.Մ.Ը.Մ-ականներուն եւ մասնաւորաբար վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ-ական, Նաւասարդեան մարզախաղերու յղթնակի պարահանդէսի յանձնախումբի ատե-



նպատակ էր. Սթիվ Արթինեանի, որուն անակնկալ մահը ցնցեց Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքը:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Շրջանային Վարչութեան պատգամը փոխանցեց ատենապետ եղբ. Յակոբ Թիւֆէնքճեան, որ ողջունելէ ետք ներկաները՝ ուրախութեամբ ըսաւ. «105 տարիներ առաջ ծնունդ առած Հ.Մ.Ը.Մ-ը իր գոյութեան ամբողջ ընթացքին աշխարհի չորս ծագերուն եղաւ հայութեան ազգային ինքնութիւնը փոխանցող մեծ ամբողջը: Այսօր, միասնաբար կը սօսենք Նաւասարդեան մարզախաղերու եւ Փառատօնի 46-րդ յաղթանակի օրը: Հ.Մ.Ը.Մ-ը եղած է մշտավառ ջանք սփռուած հայրենասիրական եւ հայրենիքի համար: Հ.Մ.Ը.Մ-ը եզակի դեր ունի մեր ժողովուրդի կեանքին մէջ, դեր մը՝ որ չսահմանափակուեցաւ միայն մարզական կեանքին մէջ, այլ ներառեց հայ կեանքի ընկերային, կրթական, սկստական եւ մշակութային պահանջատիրութեան մարզերը»:

«ՏԻՊԱՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ 2023»Ը

Ապա բեմ հրաւիրուեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Նաւասարդեան 46-րդ մարզախաղերու «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբ. Մանուէլ Մարսէլեանը՝ ստանձնելու «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական 2023» տիտղոսը հաստատող յուշատախտակը՝ առ ի գնահատանք իր միութենական նուիրումին եւ անսակարկ գործունէութեան: Եղբ. Յակոբ Թիւֆէնքճեան բարձր գնահատեց

տեց «Տիպար Հ.Մ.Ը.Մ.ական» եղբոր ներդրումը՝ հաստատելով. «Եղբ. Մանուէլը վաստակաշատ Հ.Մ.Ը.Մ.ական եղած է. ան ունի տասնամեակներու վրայ երկարող նուիրում մեր այս մեծ կազմակերպութեան մէջ: Ան իր նուիրեալ գործունէութեամբ եւ գիտակցութեամբ ծառայած է այս միութեան եւ ստանձնած է բազմաթիւ պաշտօններ»:

Եղբ. Մանուէլ Մարսէլեան երկու լեզուով երախտագիտական իր պատգամը փոխանցեց՝ ըսելով. «Յատուկ շնորհակալութիւն իմ սիրելի ընտանիքիս, որուն տարիներու ընթացքին սէրն ու քաջալերանքը օգնեց ինծի աւելի եռանդով աշխատել այս հրաշալի կազմակերպութեան համար: Վերջապէս, իմ խորին շնորհակալութիւնը կ'ուզեմ յայտնել Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան, որ ինծի շնորհեց Տիպար Հ.Մ.Ը.Մ.ականի տիտղոսը»:

ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ՊԱՏՈՒՈՅ ՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ

Այնուհետեւ, երկարաշունչ ծափող-ջոյններով տէր եւ տիկին Ճէք եւ Զարիկ Ետրէճեանները առաջնորդուեցան բեմ, ուր դիմաւորուեցան Հ.Մ.Ը.Մ-ի 46-րդ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահ տէր եւ տիկին Արա եւ Ալին Զաղլասեաններու կողմէ, որոնցմէ պաշտօնապէս ստանձնեցին Հ.Մ.Ը.Մ-ի 46-րդ Նաւասարդեան մարզախաղերու պատուոյ նախագահութիւնը:

Եղբ. Յակոբ Թիւֆէնքճեան Հ.Մ.Ը.Մ-ի մեծ ընտանիքին կողմէ շնորհակալութեան զոյգը եւ բարձր գնահատեց անոնց ազգասիրութեան եւ նուիրումի ոգին՝ շեշտելով. «Տէր եւ տիկին Ճէք եւ Զարիկ Ետրէճեանները մնայուն դրոշմ ձգած են համայն հայ գաղութին վրայ, իրենց սիրալոյսով նուիրումով, ուրիշներուն օգնելով եւ մարդասիրա-



կան ծառայութիւններով: Եուրէճեան ամոլին հիմնական նպատակը եղած է հայ երիտասարդութեան սատար հանդիսանալ եւ բարելաւել անոր կեանքը»:

Ստանձնելով իր պատասխանատուութիւնը՝ Ճէք Եուրէճեան նախ իր եւ տիկնոջ անունով երախտագիտութիւն յայտնեց Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին, ապա փոխանցեց իր սրտի խօսքը՝ յիշելով իր գայլիկութեան օրերը Երուսաղէմի մէջ՝ ըսելով. «Հ.Մ.Ը.Մ.ը շատ մեծ դեր ունեցած է մեր կեանքին ընթացքին՝ առաջնորդելով մեզ դէպի ճիշդ ճանապարհ եւ օժանդակելով բոլոր անոնց, որոնք օգնութեան կարիքը ունեցած են: Եթէ ձեզի ծանօթ է, իմ ամէնէն մեծ ուրախութիւնս է աշխատիլ երիտասարդներու, ուսանողներու եւ ձեզի նման սկառաւներու հետ»: Ան նաեւ շնորհակալութիւններ արտայայտեց բոլոր ծնողները, որոնք եկած են քաջախելու եւ նեցուկ կանգնելու իրենց զաւակներուն ու մեծապէս զնահատեց Հ.Մ.Ը.Մ.ի բացառիկ գործունէութիւնը ամբողջ աշխարհի ցամաքամասերուն վրայ:

ԱՌԱՋՆՈՐԴ ԹՈՐԳՈՄ ՍՐԲԱԶԱՆԻՆ ՊԱՏԳԱՄԸ

Հայրական իր օրհնութիւնները փոխանցեց Թեմի Առաջնորդ Թորգոմ Եպս. Տօնոյան, որ բարձր գնահատեց եւ խրախուսեց Հ.Մ.Ը.Մ.ի օրհնեալ գործունէութիւնը հայ ժողովուրդի զաւակներուն կեանքին մէջ՝ ընդգծելով. «Խօսիլ Հ.Մ.Ը.Մ.ի մասին կը նշանակէ խօսիլ մեր ժողովուրդի երիտասարդութեան մասին: Խօսիլ Հ.Մ.Ը.Մ.ի մասին կը նշանակէ խօսիլ մեր ժողովուրդի վաղւան առողջ առաջնորդին ու գիտակից ղեկավարին մասին, խօսիլ Հ.Մ.Ը.Մ.ի մասին կը նշանակէ խօսիլ ապահովութեան մասին, գոր անիկա իր միութեան օրհնեալ երդիքէն ներս կը շնորհէ մեր ազգի ամենամատղաշ ու դողող սերունդներուն: Խօսիլ Հ.Մ.Ը.Մ.ի մասին կը նշանակէ խօսիլ Հայաստանի ամբողջականութեան մասին, Արցախէն սկսեալ մինչեւ Արեւմտեան Հայաստան եւ մինչեւ Կիլիկիա»:

Աւարտելով իր խօսքը՝ Առաջնորդը ըսաւ. «Հ.Մ.Ը.Մ.ի զանազան մակար-

Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ 46-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ՝

ԱՌԱՋՆՈՐԴ ԹՈՐԳՈՄ ԵՊՍ. ՏՕՆՈՅԵԱՆԻ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԽՕՍՔԸ

Քրիստոնէական ջերմ սիրով եւ ազգային հպարտութեամբ կ'ողջունենք Արեւմտեան Մ. Նահանգներու հայութեան կեանքին մէջ շարժուն ներկայութիւն դարձած Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը, 2023 տարեշրջանի Նախասարդեան 46-րդ մարզախաղերուն ընդառաջ:

Այս ուրախ առիթով մեր նայուածքը կը բարձրացնենք երկիւք, Ամենակալ Աստուծոյ խնդրելով, որ քարմ ու մատաղ ընձիւղներով եւ նորընծայ ու փափուկ շարքերով աճեցնէ ազգային այս միութիւնը, որուն իւրաքանչիւր անդամը հարազատ մասնիկ մըն է մեր ժողովուրդի անցեալէն, տաքուկ շունչ մը՝ անոր ներկայէն եւ հուրիւրան տեսիլք մը՝ բացառած ազգի ապագային վրայ:

Աւելին. մենք քաջաբար կը հաւատանք, որ «կակուղ քաթիկ»ներէն մինչեւ խմբապետական եւ վարչական բարձրադիր պաշտօններու հասած Հ.Մ.Ը.Մ.ական մեր քոյրերն ու եղբայրները, ինչպէս երէկ, նոյնպէս ալ այսօր եւ յատկապէս վաղը՝ հրաւիրուած են մեր ազգի կեանքը ղեկավարելու եւ ժողովրդանուր ու եկեղեցաշէն կեանքով ապրող օրինակելի ապագայ հայ ընտանիքներու սիւները դառնալու, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ.ը առաջին հերթին կը ձեւաւորէ հայ-քրիստոնէայ մարդուն ազգային, հայրենանուր նկարագիրն ու աշխարհ նոր մտած փոքրիկը՝ մանկութենէն իսկ կրթելու Աստուածաշնչեան պատուերին համաձայն, մանրաքայլ «գայլիկ»ներն ու «արծուիկ»ները կը թրծէ հայկական ոգով, անոնց դեռատի միտքն ու մտաղաշ կարողութիւնները կը մշակէ բազմակողմանիօրէն, յանուն նոր սերունդներու վաղուան ազգակերտ ու հայանպաստ խիզախութեանց եւ հոգեիմացական ամենաշքեղ թոյլներու:

Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու Շրջանի Նախասարդեան մարզախաղերը իրենց հաւաքական մթնոլորտով ու ոգեկան ամրութեամբ ամէն տարի կը ջերմացնեն համայնքային մեր կեանքը: Շաբաթավերջ մը ամբողջ, տարբեր տարիքի հայեր վարակիչ խանդավառութեամբ տոգորւած, մեր շուրջ աւելի տեսանելի կը դառնան իրենց աշխատանքներով եւ արձանագրած յաջողութիւններով՝ այսպիսով 105 տարեկան մեծանուն այս միութեան վարկը, պատիւն ու կշիռը սանդղակ մը աւելի՛ բարձրացնելով եւ հայ կեանքէն, եւ հիւրընկալ այս երկրի բազմազգեան համերաշխութեան շրջագիծէն ներս, Հ.Մ.Ը.Մ.ի «Բարձրացիր-բարձրացուր» նշանախօսքին հետ աւելի վեր բռնելով նաեւ համայն հայութեան, Հայաստան-Արցախ եւ Սփիւքի ազգային հպարտութիւնը, ուրեմն եւ արդար է մեզի Հ.Մ.Ը.Մ.աբար խկոյն եւեթ գոչել. «Պատուի՛ առէք. կակուղ քաթիկներու նոր շարքեր կու գան»:





**Հ.Մ.Ը.Մ.Ի ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ
46-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒՆ ԱՌԻԹՈՎ՝**

**Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ
ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ
ԵՂՔ. ՅԱԿՈՔ ԹԻԳԵՆԿՆԿՆԵԱՆԻ ԽՕՍՔԸ**

Քարճրաշնորհ Սրբազան Հայր,
Յարգելի Կեդրոնական վարչութեան
ներկայացուցիչ եղբ. Արմանտ Քիլիճեան:

Քարի եկած էք սիրելի քոյրեր, եղ-
բայրներ եւ համայն Հ.Մ.Ը.Մ.ի ընտանիք:
105 տարիներ առաջ ծնունդ առած
Հ.Մ.Ը.Մ.ը իր գոյութեան ամբողջ ընթաց-
քին աշխարհի չորս ծագերուն եղաւ հա-
յութեան ազգային ինքնութիւն փոխան-
ցող մեծ ամբողջ օտար ափերուն, հայկա-
կան կեանքի ծառայութեան եւ վերակեն-
դանացման ի խնդիր գործող կառոյցը:



Այսօր, միասանաբար կը տօնենք Նա-
ւասարդեան մարզախաղերու եւ փառատօնի 46-րդ յաղթանակի տօնը:

Հ.Մ.Ը.Մ.ի եղած է մշտավառ ջանք սփիւռքահայութեան եւ հայրենիքի
համար: Մենք կոչուած ենք առաջնորդուելու ամուր հոգիով եւ հաւատքով,
որպէսզի կարենանք մեր յոյսերը իրականութիւն դարձնել եւ մեր դէմ ցըց-
ւած բոլոր մարտահրաւերները դիմագրաւել:

Հ.Մ.Ը.Մ.ը եզակի դեր ունի մեր ժողովուրդի կեանքին մէջ, դեր մը՝ որ
չսահմանափակուեցաւ միայն մարզական կեանքին մէջ, այլ ներառեց հայ
կեանքի ընկերային, կրթական, սկաուտական, մշակութային եւ պահան-
ջատիրութեան մարզերը:

Հ.Մ.Ը.Մ.ը եղաւ այս օտար ափերուն վրայ գերազանցող ուժը եւ ազդե-
ցութիւնը կերտող եւ հայեցի դաստիարակութեամբ զինուած հայ երիտա-
սարդութիւն պատրաստող միութիւնը:

Մենք միասին պիտի կերտենք մեր ազգի լուսաւոր ապագան:

Ամրապնդենք մեր ծառայութիւնը, հաւաքական բարոյականի տէրերը
ըլլանք եւ հետեւինք մեր ազնիւ ու պարկեշտ դեկավարներու օրինակին՝
միշտ բարձր պահելով Հ.Մ.Ը.Մ.ի նշանաբանը՝ «Քարճրացի՛ր-բարճրա-
ցուր»ը:

դակներու գործունէութեան կեանքէն
ներս, ամէնէն զգլխիչը կը մնայ ինձի, որ-
պէս՝ Առաջնորդ Արեւմեան Թեմի եւ Հայ
հոգեւոր սպասաւոր, անոր «Հրաշք»ին
ծնունդը՝ յատուկ ուշադրութեան կա-
րօտ մանուկներուն համար: Հ.Մ.Ը.Մ.ը
չատ աւելի մեծցաւ, շատ աւելի ամբող-
ջական դարձաւ, շատ աւելի ազգային
ու քրիստոնէական դարձաւ շնորհիւ
այն տեսիլքին, որ տարբեր կարողու-
թիւն ունեցող մանուկներ, երեխաներ

համախմբուին միասին եւ անոնք
«Հրաշք» կոչուին եւ Հ.Մ.Ը.Մ.ը հրաշք
գործէ Աստուծոյ զօրութեամբ մեր ժո-
ղովուրդի ու գաղութի կեանքէն ներս:
Կեցցէ՛ Հ.Մ.Ը.Մ.ը, ազատ եւ անկախ
միացեալ Հայաստանը, Ամէն»:

**ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԻՆ ՊԱՏԳԱՄԸ
Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վար-
չութեան կողմէ շնորհաւորական պատ-**



գամ փոխանցեց եղբ. Արմանտ Քիլիճ-
եան: Ան նախ շնորհաւորեց Շրջանային
Վարչութիւնը, մասնաճիւղերը եւ Շրջա-
նային յանձնախումբերը, որոնք Նաւա-
սարդեան 46-րդ մարզախաղերը յաջո-
ղութեամբ իրենց աւարտին հասցուցին:
Ան շնորհակալութիւն յայտնեց նաեւ
մարզիկներուն եւ սկաուտներուն,
որոնք իրենց մարզախաղերուն եւ աշ-
խատանքներուն մէջ Հ.Մ.Ը.Մ.ը միշտ
բարճր կը պահեն:

ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ ՏՈՂԱՆՑԲԸ

Փոխանցուած տպաւորիչ պատգամ-
ներէն ետք տեղի ունեցաւ հանդիսու-
թեան գլխաւոր առանցքը հանդիսացող
եւ այնքան սպասուած տողանցքը: Հ.Մ.-
Ը.Մ.ի շեփորախումբին եղանակներով
ոգեւորուած՝ յաջորդաբար մարզադաշտ
ներկայացան Հ.Մ.Ը.Մ.ի «Հրաշք»ի
հրաշքները, որոնց հետեւեցան մասնա-
ճիւղերը՝ իրենց սկաուտական, մարզա-
կան եւ ծնողական յանձնախումբերով,
վարչութիւններու գլխաւորութեամբ:
Վերջապէս դաշտ մուտք գործեցին հա-
մա-Հ.Մ.Ը.Մ.ական 12-րդ բանակումին
մասնակցող սկաուտները: Անոնք տո-
ղանցեցին հպարտ եւ ինքնավստահ ու
հրճուանքով բարեւեցին ներկաները եւ
գրաւեցին իրենց տեղերը մարզադաշ-
տին վրայ:

Իւրաքանչիւր տողանցող մասնա-
ճիւղի տեղեկութիւնները կը ցուցադ-
րուէին բեմին վրայ գետեղուած արդիա-
կան պաստառներուն վրայ: Այս տարի
կը գուզադիպէր «Հրաշք» բաժանմուն-
քի 5-րդ, Քրեսենթա Հովիտի «Շանթ»
մասնաճիւղի 30-րդ, Սան Տիէկոյի «Սե-



լան» մասնաճիւղի 40-րդ, Կլենտէյլի «Արարատ» մասնաճիւղի 45-րդ, Ֆրեզնոյի «Սասուն» մասնաճիւղի 50-րդ եւ Լոս Անճելըսի մասնաճիւղի 55-րդ տարեդարձներուն:

ՅԱՂԹԱՆԱԿԻ ԲԱԺԱԿՆԵՐՈՒ ՅԱՆՁՆՈՒՄԸ ԵՒ ՓԱՌԱՏՕՆԸ

Մարզական մրցումներու յաղթանակի բաժակներու յանձնումը կատարուեցաւ օր մը ետք, Կիրակի, 9 Յուլիսին, Main Gym-ին դիմացը գտնուող, յատուկ կերպով պատրաստուած յաղթանակի բեմին վրայ, ուր յաղթող խումբե-

րը եւ մարզիկները հպարտութեամբ ստանձնեցին իրենց բաժակները եւ մետալները:

Նոյն օրը, Գալիֆորնիա նահանգի Ծերակոյտի անդամ Էնթրի Փորթանթինօ այցելեց փառատունին վայրը եւ իր շնորհաւորութիւնները յայտնեց Հ.Մ.Ը.Մ-ի Շրջանային Վարչութեան՝ այս տարի եւս Նաւասարդեան մարզախաղերը եւ փառատունը յաջողութեամբ իրականացնելուն համար:

Նաւասարդեան եռօրեայ փառատունը շարունակուեցաւ 7-9 Յուլիս, նոյն վարժարանի շրջափակին մէջ:

Այս տարի եւս Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղերուն կողմէ սպասարկուեցան փառատունին համադրած ճաշերու կրպակները, որոնց հասոյթը տրամադրուեցաւ մասնաճիւղերու հոգածութեան յանձնուած մարզական եւ սկստական շարքերու կարիքներուն: Իսկ անոնց առընթեր առեւտրական կրպակները աւելի եւս ձոխացուցին փառատունը:

Նաւասարդեան խրախճանքի յայտագիրը ձեռնհասօրէն վարեց Լոս Անճելըսի մասնաճիւղի վարչական անդամներէն քոյր Թալին Աբանեան: Ներկաները վայելեցին շրջանի սիրուած արուեստագէտներուն՝ Տիգրան Ասատրեանի, Սարինա Քրոսի, Կրէկ Հոշարեանի եւ իր նուագախումբին, Անտրէի, Վաչէ Ամարեանի, Ժողէֆ Գրիգորեանի, Վարդան Թայմազեանի, Մեր Յովոյի եւ Քրիստինէ Պէպէլեանի հրամցուեցած երգերը: Աւարտին, յեղափոխական երգերու մեկնաբան Գօգօ Թիւթիւնճեան փունջ մը երգերով խանդավառեց ներկաները, եւ ձեռնարկը իր աւարտին հասաւ նոյնքան տպաւորիչ հրավառութեամբ:

ՆԱԲԱՍԱՐԳԵԱՆ 46-ՐԴ ՄԱՐԶԱԽԱՂԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՍԱԻՈՐՄԱՆ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ՓԻՆԿ-ՓՈՆԿ

- Ա. «Արարատ» մասնաճիւղ
- Բ. «Շանթ» մասնաճիւղ

ԹԵԹԵՒ ԱԹԼԷԹ

- Ա. «Կարս» մասնաճիւղ
- Բ. Լոս Անճելըսի մասնաճիւղ
- Գ. «Արարատ» մասնաճիւղ

ԹԵՆԻՍ

- Ա. «Արարատ» մասնաճիւղ
- Բ. «Անի» մասնաճիւղ
- Գ. «Կարս» մասնաճիւղ

ԼՈՂ

- Ա. «Անի» մասնաճիւղ
- Բ. «Մասիս» մասնաճիւղ

Գ. «Սիփան» մասնաճիւղ

ՎՈՒԹՊՈՒ

- Ա. «Արարատ» մասնաճիւղ
- Բ. «Մասիս» մասնաճիւղ
- Գ. «Ազատամարտ» մասնաճիւղ

ՖՈՒԹՊՈՒ

- Ա. «Մասիս» մասնաճիւղ
- Բ. «Արարատ» մասնաճիւղ
- Գ. Լոս Անճելըսի մասնաճիւղ

ՊԱՍՔԵԹՊՈՒ

- Ա. «Արարատ» մասնաճիւղ
- Բ. «Շանթ» մասնաճիւղ
- Գ. «Մասիս» մասնաճիւղ



Տիգրան Ասատրեանի, Սարինա Քրոսի, Կրէկ Հոշարեանի եւ իր նուագախումբին, Անտրէի, Վաչէ Ամարեանի, Ժողէֆ Գրիգորեանի, Վարդան Թայմազեանի, Մեր Յովոյի եւ Քրիստինէ Պէպէլեանի հրամցուեցած երգերը: Աւարտին, յեղափոխական երգերու մեկնաբան Գօգօ Թիւթիւնճեան փունջ մը երգերով խանդավառեց ներկաները, եւ ձեռնարկը իր աւարտին հասաւ նոյնքան տպաւորիչ հրավառութեամբ:



Շողիկ Ազարիկեան
ՍՈՆԹԻՎԱԼ

Կազմակերպութեամբ Հ.Յ.Դ. «Միհրան Փափազեան» եւ «Սարգիս Զէյթլեան» կոմիտէի ղեկավարութեամբ, «Արմէն Գարօ» Ուսանողական Միութեան եւ Հ.Մ.Ը.Մ.- «Կամք» մասնաճիւղի վարչութեան, մասնակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի սկաուտական եւ մարզական խումբերուն, Հ.Մ.Ը.Մ.-ի Լաւալի մասնաճիւղի սկաուտական եւ մարզական խումբերուն, ՀՅՄ-ի «Սօսէ» եւ «Շուշի» մասնաճիւղերու, Համազգայինի Քէյպէքի «Սանահին» մասնաճիւղի անդամներուն, Հ.Յ.Դ. Պատանեկան Միութեան եւ Երիտասարդացի անդամներուն եւ յոյն սկաուտներու փաղանգին, Կիրակի, 28 Մայիս 2023-ին տեղի ունեցաւ Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 105-րդ տարեդարձին նուիրուած տողանցքը, որ սկիզբ առաւ Լ'Acadie պողոտայէն: Տողանցքը առաջնորդեց Հ.Մ.Ը.Մ.- «Կամք»-ի եւ Հ.Մ.Ը.Մ.-ի Լաւալի մասնաճիւղերու միացեալ շեփորախումբը, որուն եղանակներուն կը ղուով տողանցեցին Հ.Յ.Դ. «Միհրան Փափազեան» կոմիտէի անդամները, Հ.Մ.Ը.Մ.-ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչները, Հ.Մ.Ը.Մ.-ի Գանատայի Շրջանային Սկաուտ. Խորհուրդը, Հ.Մ.Ը.Մ.- «Կամք»-ի եւ Հ.Մ.Ը.Մ.- Լաւալի գոյգ վարչութիւններու կազմերը, քոյր միութիւններու ներկայացուցիչները, սկաուտական եւ մարզական խորհուրդներու կազմերը, սկաուտական եւ մարզական



«ԲՈՒՈՐԱՆՈՒԷՐ ՄՐՏՈՎ ԿԸ ԶՕՐԱԿՅԻՆՔ Հ.Մ.Ը.Մ.-«ՀՐԱՇՔ»Ի ՀՐԱՇՔ ԱՌԱՔԵԼՈՒԹԵԱՆ»

ԸՍԱԻ ԱՐԵՒՄՏԵԱՆ Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԹՈՐԳՈՍ ԵՊՍ. ՏՅՆՈՅԵԱՆ

2023-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու «ՀՐԱՇՔ» բաժանմունքը կը բոլորէ իր հիմնադրութեան հնգամեակը: Այս առիթով, Թեմի Առաջնորդ Թորգոմ Եպս. Տօնոյեան, Թեմի ծաւալած մարդասիրական առաքելութեան ծիրէն ներս, տասը հազար տոլար (\$10,000) նուիրեց Հ.Մ.Ը.Մ.-«ՀՐԱՇՔ»-ի պատասխանատուներուն, առ ի գնահատանք անոնց քրիստոնէական, մարդասիրական եւ ժողովրդանուէր գործունէութեան:

Յայտնենք, որ Հ.Մ.Ը.Մ.-«ՀՐԱՇՔ» մէկ երդիքի տակ կը համախմբէ տարբեր կարողութիւններով օժտուած մանուկներ եւ անոնց կը մատուցէ տեսակ-տեսակ ծառայութիւններ, զանոնք արժանացնելով եզակի գուրգուրանքի եւ խնամքի, որոնց այնքա՛ն կարիքը ունին այս փոքրիկները:

Յատկապէս այս իմաստով արժեւորելով տարուած աշխատանքն ու ցուցաբերուած ուշադրութիւնը այս խումբի տղոց ու աղջիկներուն նկատմամբ, Թորգոմ Եպս. Հ.Մ.Ը.Մ.-«ՀՐԱՇՔ»-ի առաքելութիւնը նկատեց «հրաշք» եւ ամբողջական զօրակցութիւն յայտնեց այս փոքրիկները խնամող ձեռքերուն եւ անոնց համար ի գործ դրուած մարդասիրական հիասրահն ճիգերուն:



ՄԱՅԻՍ 28-Ի ՅԱՂԹ-ԱՆԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏՈՂԱՆՑՔ

խումբերը, ինչպես նաև յոյն սկաուտներու փաղանգ մը:

Այս տարուան տողանցքը իւրայատուկ կը թուէր ըլլալ, որովհետեւ քորոնայի համաճարակէն ետք առաջին անգամն էր, որ այսքան մեծաթիւ մասնակիցներ ունէր:

Տողանցող խումբերը կանգ առին Ս. Յակոբ եկեղեցւոյ բակը, ուր դրօշակի արարողութեան ընթացքին շեփորախումբը նուազեց քայլերգները, դեկավարութեամբ եղբ. Գօգօ Թաթոյեանի:

Դրօշակի արարողութենէն ետք, օրուան հանդիսավար Սարին Բաբախեան հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի վարչութեան ատենապետ եղբ. Լէոն Արապեանը, որպէսզի փոխանցէ վարչութեան խօսքը: Եղբայրը ըսաւ, որ «Առաջին անկախութիւնը առիթ տուաւ մեր ժողովուրդին հայրենիք ունենալու եւ իբրեւ ազգ գոյատեւելու, առանց անոր կարելի չէր երկրորդ անկախու-

թիւնը ունենալ»:

Վարչութեան խօսքէն ետք հրաւիրուեցաւ Հ.Յ.Դ. «Միհրան Փափագեան» կոմիտէութեան ներկայացուցիչ Արա Գաթարոյեան, փոխանցելու գոյգ կոմիտէութիւններու խօսքը: Ան անդրադարձաւ Հայաստանի ներկայ իրավիճակին եւ վստահեցուց, որ այս մէկը ժամանակաւոր է եւ մենք պարտաւոր ենք միասնական ուժերով պայքարիլ արդարութեան համար, շարունակելու մեր պայերէն ժառանգած անկախութիւնը պահպանել եւ կերտել նոր յաղթանակներ:

Հրաւիրուեցաւ Գանատայի Թեմի Առաջնորդ Բաբգէն Արք. Չարեանը, որպէսզի տայ իր հայրական օրհնութիւնը:



Ան եւս անդրադարձաւ 1918-ի Հերոսական ճակատամարտերուն եւ իր խրախուսիչ խօսքերով քաջալերեց բոլորը զինուիլ ազգային գիտակցութեամբ, որպէսզի այս անգամ եւս կարենանք յաղթական դուրս գալ Հայաստանի մէջ տիրող ոչ հայրենանպաստ իրավիճակէն:

Առաջնորդ Սրբազան Հօր խօսքէն ետք սկսաւ ճաշի սպասարկութիւնը՝ պատրաստուած Հ.Մ.Ը.Մ.-«Կամք» մասնաճիւղի Սկաուտ. Խորհուրդին կողմէ: Այդ ընթացքին հայրենասիրական երգերով մթնոլորտը ձոխացուցին DJ Կարօն, Սեդօ Մամիոյեանն ու Սաբօ Թաշճեանը իր նուազախումբով:

Ներկաները ոգեւորուած ու խանդավառ տպաւորութիւններով լրացուց իրենց տունները վերադարձան՝ անգամ մը եւս ամրապնդելով իրենց ուխտը, թէ հաւատարիմ պիտի մնան իրենց հայրենիքին ու միշտ զօրակցին Հայաստանին:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԿԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԿԱՈՒՏԱԿԱՆ 12-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԸ



Հ.Մ.Ը.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Սկաուտական Խորհուրդ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ

ՀՄԸՄ-ի Հարաւային Ամերիկայի սկաուտական 12-րդ բանակումը տեղի ունեցաւ Մենտոսա նահանգի Սան Ռաֆայէլ շրջանը, մասնակցութեամբ ՀՄԸՄ-ի «Արարատ» (Պուէնոս Այրէս), «Արագած» (Գորտոպա) եւ «Կամբ» (Մոնթէվիտէօ) սկաուտական խումբերուն, Շրջանային Սկաուտական Խորհուրդին եւ Շրջանային խմբապետին, ընդհանուրը՝ 174 բանակողներ:



Հարաւային Ամերիկայի մակարդակով բանակումները սովորաբար կը կատարուին երեք տարի անգամ մը, սակայն քորոնայի համաճարակին պատճառով, այս բանակումը կատարուեցաւ նախորդէն հինգ տարի ետք: Բանակումին նշանաբանն էր՝ «Միացեալ շրջան, հզօր հայրենիք»: Բանակումը ունեցաւ իր խորհրդանշանը՝ լուին (գաղափարը «Արարատ» խումբէն քոյր Սոֆիա Պարլեթանի, դժագրութիւնը եղբ. Էգեկէլ Հայացանեանի) եւ պաշտօնական երգը (երաժշտութիւնը եւ բառերը եղբ. Ալպերթօ Աքսարլեանի, կատարողութիւն

«Նոր Արաքս» նուագախումբի, մեկնաբանութիւն երգիչ Ալեխանարո Չիբեանի):

Այս բանակումով Հարաւային Ամերիկայի շրջանը կը նշէր իր ստեղծման 35-ամեակը: Բանակումը կը նպատակադրէր ամրացնել շրջանի պատանիներուն եւ երիտասարդներուն միջեւ կապը եւ թափ տալ երեք մասնաճիւղերու սկստական խումբերու գործունէութեան: Հետեւաբար, հոգեկան ուրախութիւն էր տեսնել սկստական գեղեցիկ ստեղծագործութիւններ, Հ.Մ.Ը.Մ.ական հաճելի մթնոլորտ եւ սերտուած ու ճոխ յայտագիր:

Ուշագրաւ էին բանակումին պատրաստուած ձեռային աշխատանքները եւ ժամանցի զանազան խաղերը: Գայլիկ-արծուիկ եւ արի-արեւոյշ խումբերը Աթուէլ գետին վրայ հաւաքական նաւարկութիւն կատարեցին (rafting): Այլ խումբերու անդամներ անհատաբար նաւարկեցին (kayak): Բանակողները այցելեցին Սան Ռաֆայէլի Չաղլասեան գինետունը, ուր գինետան հիմնադիրը՝ Խուան Չաղլասեան անձամբ դիմաւորեց եւ առաջնորդեց գիրենք:

Բոլոր խումբերը Շրջանային Վարչութեան կողմէ պատրաստուած դասախօսութիւններ եւ զրոյցներ ունեցան: Ինքնին խումբերը առաւելաբար կեդրոնացան Հայաստանի շուրջ: Բանակողներուն այցելեց Հարաւային Ամերիկայի Հայ Դատի գրասենեակի պատասխանատու Արամ Մուրատեան, որ երէց-պարմանուհիներու փաղանգին հետ զրոյց մը ունեցաւ Հայ Դատի մերօրեայ հասկա-



ցողութեան եւ Արցախի հարցին շուրջ:

Բանակումին աւարտեցաւ «Վկայեալ» կարգի Առաջնորդներու պատրաստութեան դասընթացքին զնահատման գործընթացը: Դասընթացքին տեսական բաժինը ընթացք առաւ Ապրիլ 2022-ին

եւ գործնական բաժինը կատարուեցաւ բանակումին: Այսպէս, հետեւեալ 21 քոյրերն ու եղբայրները արժանացան սկստական «Վկայեալ» կարգին.- Ալմա Թորոսեան, Ֆլորենսիա Պոխճալեան, Մարալ Մորսէսեան, Սոֆիա Քէչեան, Սոֆիա Թորգոմեան, Սոլ Աքսարլեան, Միքայէլլա Կրասօ, Ջոէ Քէչեան, Գանտելա Աքսարլեան, Մելինա Ջանիքեան, Անուշ Տոլմաճեան, Գարինէ Տէր Մարգարեան, Գաթալինա Սաքալեան, Վալերիա Մորիքոնի, Կարինէ Չորպաճեան, Նունէ Պոյաճեան, Փամելա Կրասօ, Կապրիէլ Պարսամեան, Արիէլ Վենթրիսէ Կոսքարեան, Սանթիալո Թոփալեան եւ Լաուրէանօ Թորոսեան:

Բանակումի փակման հանդիսութեան մրցանակներ յանձնուեցան ամէնէն կուկիկ վրանը ունեցողներուն (ամէնօրեայ քննութիւններէ ետք), եւ իւրաքանչիւր մասնաճիւղէ ընտրուած սկստուներու,





որոնք բանակումին ամբողջ տեւողութեան ջանացին հայերէն խօսիլ եւ հայ լեզուի օգտագործման նպաստել:

Փակման արարողութեան խօսքեր արտասանեցին բանակումի երեք շրջաններու պատասխանատուներ՝ քոյրեր Անոյշ Տէր Յակոբեան, Նիքոլ Աւագ-

եան եւ եղբայր Միքայէլ Տէմիրեան: Անոնք շնորհաւորեցին սկաուտները քորոնայի համաճարակէն ետք կազմակերպւած առաջին բանակումին յաջողութեան եւ ութը օրերու ընթացքին ունեցած հիանալի յարաբերութեան համար: Հ.Մ.Ը.Մ-ի Պուէնոս Այրէս մասնա-

ճիւղի վարչութեան անդամ եղբարաֆֆի Զարուկեան, իբրեւ հիւրընկալ շրջանի ներկայացուցիչ, շնորհակալութիւն յայտնեց բոլոր մասնակցողներուն եւ բանակումը ծրագրողներուն: Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամ եղբար Սամանեան, Հաւատարիմ մնալով իր նախորդներուն, իր խօսքերով շեշտեց մեր պատասխանատուութիւնը եւ ամէնօրեայ պարտաւորութիւնը Հայաստանի եւ Արցախի հանդէպ: Աւարտին, եզրափակիչ խօսքը արտասանեց Շրջանայինի եւ բանակումի խմբապետ եղբար Մարիանո Տօնիկեան: Եղբայրը շնորհակալութիւն յայտնեց իւրապատուկ անդամներու, որոնք կարողացան իրականացնել այս յաջող եւ հիանալի հանդիպումը: Ան յատկապէս շնորհաւորեց սկաուտ պատասխանատուները, որոնք ամբողջ տարին կ'աշխատին, որպէսզի շրջանը հետզհետէ բարձրանայ:

Հ.Մ.Ը.Մ.՝ ՄԻԱՑԱԾ ՇՐՋԱՆ ՄԸ, ՀԶՕՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՄԸ ՀԱՄԱՐ

Հ.Մ.Ը.Մ-ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Սկաուտական Խորհուրդ ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ

2 021-2023 երկամեակի սկաուտական շրջանային խումբերու ղեկավարներու երկրորդ ընդհանուր ժողովը եւ մասնաճիւղերու խմբապետներու ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ-ի Պուէնոս Այրէսի կեդրոնատեղիին մէջ:

Ժողովին ներկայ գտնուեցան «Արագած» (Գորտոպա) եւ «Արարատ» (Պուէնոս Այրէս) խումբերու խմբապետներն ու փոխ խմբապետները, (Մոնթէվիտոյի) «Կամք» խումբէն ներկայացուցիչներ, Շրջանային Սկաուտական Խորհուրդի անդամներ, Շրջանային խմբապետը եւ Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ մը:

Դրօշակի արարողութենէն ետք, միջնորոտը ջերմացներու նպատակով կատարուեցաւ խաղ մը:

Ժողովը սկսաւ 2022 տարեշրջանի Շրջանային եւ սկաուտական խումբերու ընդհանուր իրավիճակի քննութեամբ, որ



ընդգրկեց խումբերու վիճակի վերլուծութիւն եւ Շրջանայինի նպատակներու եւ աշխատանքներու գնահատում: Ժողովը կեդրոնացաւ Շրջանային բանակումի շուրջ, որ տեղի ունեցաւ Սան Ռաֆայէլ, Մենտոսա նահանգին մէջ, եւ որուն մասնակցեցան 174 սկաուտներ, զանազան տարիքներով (բանակումին մասին տեսնել էջ 36):

Ճաշէն ետք, քոյր Սիլվանա Սաաթեան եւ եղբար Ակուսթին Անալեան դարձնեցին

սընթացք մը կատարեցին առաջնորդելու շուրջ, խմբապետներու եւ փոխ խմբապետներու դերերու մասին, նաեւ այն աշխատանքներու մասին, որոնք պէտք է կատարուին Շրջանային Սկաուտական Խորհուրդին կողմէ:

Դասընթացքին աւարտին նկատի առնուեցան 2023-ի նպատակները (ծրագրուած խումբերու կողմէ), որոնք կը բովանդակեն պատրաստութիւններ, յատուկ դասընթացքներ, որոնք պէտք է կատարուին միասնաբար (Շրջանային Սկաուտական Խորհուրդը եւ Շրջանային Մարզական Խորհուրդը), որդեգրելի նոր մեթոտներ, նիւթեր, երգարաններ եւ շրջանային նոր հանդիպումներու ծրագրերներ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԱՐԱԿԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՆԱԲԱՍԱՐԴԵԱՆ 24-ՐԴ ԽԱՂԵՐԸ

Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութիւն ՊՈՒԷՆՈՍ ԱՅՐԵՍ

Երկու տարուան ընդմիջումէ ետք, Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի շրջանի Նաւասարդեան 24-րդ խաղերը տեղի ունեցան Պուէնոս Այրէսի մէջ, Արժանիին, մասնակցութեամբ 500 մարզիկ-մարզիկուհիներու: Շրջանի երեք մասնաճիւղերու՝ Պուէնոս Այրէսի, Գորտոպայի եւ Մոնթէվիտոյի մասնաճիւղերու կողքին, խաղերուն մասնակցեցան ուղեկից միութիւններէ եւ քոյր համայնքներէ մարզիկ-մարզիկուհիներ:

Կիրարկուեցան հետեւեալ խաղերը-Փուլթալ, Փուլթալ (տղաք եւ աղջիկներ), հէնտալ (աղջիկներ), վոլիպոլ (տղաք եւ աղջիկներ), թենիս, փինկփոնկ, պասքեթպոլ եւ գեղարուեստական չմուշկ: Յիշուած խաղերէն ոմանք առաջին անգամ ըլլալով կատարուեցան, օրինակ՝ աղջկանց Փուլթալը, որուն մասնակցեցան շուրջ քառասուն մարզիկուհիներ:

Հիւրընկալ Պուէնոս Այրէսի մասնաճիւղը Հ.Մ.Ը.Մ.Ի մարզադաշտին մէջ համեղ նախաճաշով մը ընդունեց քաղաք ժամանած բոլոր մարզիկները: Մինչ այդ, մարզական պատասխանատուները հաւաքուեցան խաղերու յայտագիրները համակարգելու համար:

Մարզական նախապատրաստութիւնները կատարելէ ետք, Նաւասարդեան 24-րդ խաղերուն պաշտօնական բացումը կատարելու նպատակով, բոլոր պատուիրակութիւնները փոխադրուեցան Հ.Մ.Ը.Մ.Ի կեդրոնատեղի, որ կը գտնուի Փալերմօ թաղամաս, «Արմենիա» փողոց 1366, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան ակումբի շէնքին մէջ:

Բացման հանդիսութիւնը տեղի ունեցաւ «Արմենիա» թատերասրահին մէջ, երեկոյեան ժամը 9-ին: Հանդիսութիւնը սկսաւ խաղերու մասնակից պատուիրակութիւններու տողանցքով: Պուէնոս Այրէսի մասնաճիւղի ատենապետ եղբ. Օրասիօ Թերզեան արտասանեց բարի գալուստի խօսք եւ շեշտեց դարձեալ հաւաքուելու կարեւորութիւնը ո՛չ միայն Հ.Մ.Ը.Մ.Ի, այլեւ շրջանի հայութեան համար:

Ապա, «Retumba Malambo» խումբը ներկայացուց գեղարուեստական ճոխ յայտագիր:

Բացման հանդիսութեան աւարտին, ըստ Նաւասարդեան խաղերու սովորութեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան փոխ ատենապետ եղբ. Բաֆֆի Չորպաճեան պաշտօնապէս յայտնեց Նաւասարդեան 24-րդ խաղերուն բացումը եւ ըսաւ.





«Անգամ մը ես հայրութիւնը մեզ կը մղէ մարտահրաւէրի մը, դիմադրելու նոր դժուար շրջան մը: Հայաստանը կրկին պատերազմի դրան մօտ է: Սահմանները խախտած են, քանդուած, նիւթական վնասներ արձանագրուած, հայրենակիցներ գոհ դարձած: Աշխարհի ուշադրութիւնը ուրիշ կողմ է, աւելի ճիշդը՝ ուշադրութիւնը անտեսական շահերու վրայ է, ինչ որ մեզ կը ձգէ անորոշ վիճակի մէջ: Այդ պատճառով մենք ճիշդ կեցուածք պէտք է ունենանք, պահպանելով մեր մշակույթն ու սովորութիւնները, ցոյց տալով որ կանգուն ենք, միշտ պիտի լլլանք, երբ Հայաստանը եւ պայմանները մեզմէ այդ կը պահանջեն»:

Շարունակելով, եղբ. Չորպաճեան ըսաւ. «Իբրեւ այս շրջանի գլխաւոր հե-

րոսներ, աւելի քան երբեք, մենք մեզի լսել տանք, կողք-կողքի լլլանք, իւրաքանչիւր կանչ կամ երգ մեր թշնամիին ականջը թող հասնի իբրեւ նշան, որ մենք կանք, պիտի լլլանք եւ պիտի շարունակենք աւելի բարձր պոռայ, դժբախտութիւնը մեզի աւելի աճելու ուժ պիտի տայ: Մենք ենք մեր ներկային գլխաւոր պատասխանատուները»:

Հանդիսութիւնը աւարտելէ ետք, բոլոր մասնակցողները միասին ընթրեցին մարգաղաշտին մէջ:

Յաջորդ օր, Հ.Մ.Ը.Մ-ի Պոլէնոս Այրէսի մարգաղաշտին վրայ սկսան մըրցումները: Երեկոյեան կազմակերպուեցաւ պատասխանատուներու ընթրիք, որուն ներկայ 50-է աւելի ղեկավարները արտայայտեցին շնորհակալական իրենց

խօսքերը եւ շեշտեցին նման հանդիպումներու կարեւորութիւնը, մանաւանդ Սփիւռքի Հ.Մ.Ը.Մ-ի եւ մասնաւորապէս Հարաւային Ամերիկայի շրջանին մէջ: Ընթրիքի ընթացքին յարգանքի տուրք մատուցուեցաւ Կեդրոնական Վարչութեան հանգուցեալ եղբայր Արմանոս Թորգոմեանի յիշատակին, որ Օգոստոս 2021-ին, երիտասարդ տարիքին, մեզմէ յաւէտ հեռացաւ իր դրոշմը եւ հետքը ձգելով Հ.Մ.Ը.Մ-ի մէջ, ո՛չ միայն շրջանային մակարդակով, այլեւ՝ համաշխարհային: Իբրեւ գնահատանք իր յիշատակին, յուշանուէր մը յանձնուեցաւ ընտանիքին եւ իւրաքանչիւր մասնաճիւղին :

Երրորդ օրը մարգական մըրցումները շարունակուեցան մինչեւ երեկոյեան





ուշ ժամեր: Օրը պիտի փակուէր խրախճանքով, որ սակայն ջնջուեցաւ Ազրպէյճանի կողմէ Արցախի դէմ կատարուած նոր յարձակումի պատճառով: Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ համայն աշխարհի մէջ յայտարարուեցաւ քառասնօրեայ սուգ, ի յարգանս Արցախի մէջ զոհուած զինուորներուն եւ քաղաքացիներուն:

Չորրորդ օրը տեղի ունեցաւ Նաւասարդեան խաղերուն փակումը՝ մասնակցութեամբ աւելի քան 600 հանդիսականներու: Հանդիսութեան ընթացքին տեղի ունեցաւ մրցանակաբաշխում: Գորտոպայի եւ Պուէնոս Այրէսի մասնաճիւղերու գեղարուեստական չմուշկի խումբերը հրամցուցին հիանալի ներկայացումներ:

Փակման խօսքով հանդէս եկաւ Հ.Մ.-Լ.Մ.ի Հարաւային Ամերիկայի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Վիսէնթէ Յովասափեան: Հ.Մ.-Լ.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատգամը փոխանցեց եղբ. Գարրոս Սէֆէրեան:


Շրջանային մարզական յաջող ձեռնարկ մը ըլլալէ աւելի, Նաւասարդեան խաղերը վերջին տարիներուն դարձած են մշակութային եւ ընկերային կարեւոր ձեռնարկներ: Այս առիթով, աշխատանք կատարուեցաւ Հ.Մ.-Լ.Մ.ի Պուէնոս Այրէսի մասնաճիւղի երիտասարդական ենթայանձնախումբին հետ, որ յանձն առաւ մարզական յայտագիրէն դուրս տարբեր գործունէութիւններու կազմակերպումը:

Հ.Մ.-Լ.Մ.ի Հարաւային Ամերիկայի

շրջանին բնորոշ են հայութեան, եղբայրութեան, երջանկութեան եւ գուրգուրանքի բարձր արժէքները: Իւրաքանչիւր հանդիպումին նախկինէն աւելի բարձրացնել անդամները, անոնց մէջ նորոգելով Հ.Մ.-Լ.Մ.ի գաղափարները բարձր պահելու խոստումը, քոյրերու եւ եղբայրներու միջեւ կապերը ամրապնդելու անհրաժեշտութիւնը եւ առանց խտրութեան բոլորին հետ ըլլալու կարեւորութիւնը:

Նաւասարդեան 24-րդ խաղերը ծառայեցին իրենց նպատակին եւ Հ.Մ.-Լ.Մ.ի Հարաւային Ամերիկայի ընտանիքը այս խաղերով մեծցաւ ու զօրացաւ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՎԵՍԹԵՐՈՍԻ ՄԱՄՆԱԾԻԴԻՆ ԵՐԿՕՐԵԱՅ ՍԵՄԻՆԱՐ-ԲԱՆԱԿՈՒՄԸ

Թղթակից ՎԵՍԹԵՐՈՍ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Վեսթերոսի Մեկուսի Շրջանի սկաուտական պատասխանատու կազմին, 26 եւ 27 Մայիս 2023-ին, Վեսթերոսի «Tunby Scoutgard» սկաուտական կեդրոնին մէջ տեղի ունեցաւ Հայաստանի Առաջին Հանրապետութեան հիմնադրութեան տօնին նուիրուած երկօրեայ սեմինար-բանակում:

Սեմինար-բանակումը ընդգրկեց մարզական, դաստիարակչական եւ կազմակերպական այլազան յայտագիրներ:

Առաջին օրը, սկաուտները սեմինար-բանակումին վայրը հաւաքուելով, երեկոյեան ժամը 7.30-ին, դրօշակի արարողութեամբ ձեռնարկը պաշտօնապէս բացուած յայտարարեցին: Ապա, իրենց ընթրիքէն ետք անցան օրուան առաջին օրակարգին, որն էր՝ սկաուտական գիտելիքներու նիւթով դասախո-



սուծիւն մը՝ պահակութեան մասին: Այնուհետեւ տեղի ունեցաւ կրակվառ, երգի ուսուցում եւ գեղարուեստական յայտագիր:

Սկաուտները ամփոփելով ձեռնարկին առաջին օրը, մարեցին բանակումին կրակը եւ գիշերեցին բանակավայրին մէջ:

Երկրորդ օրը սկաուտները զարթնեցան առաւօտեան կանուխ, շատ աւելի ոգեւորուած եւ եռանդուն: Առաւօտեան ժամը 7.30-ին անոնք իրենց օրը սկսան մարզանքով, որմէ ետք ունեցան նախաճաշ, ապա անցան կարգապահական փորձերու եւ վարժութիւններու: Տեղի ունեցաւ դաստիարակչական դասախօսութիւն՝ 1918 Մայիս 28-ի Հայաստանի Հանրապետութեան կերտած առաջին անկախութեան մասին, որմէ ետք Մայիսեան յղթանակի շունչով սկաուտները սորվեցան «Սարդարապատ» յղթերգը:

Օրը շարունակուեցաւ հետաքրքրական խաղերով, ճաշով եւ կարճ դադարներով: Սկաուտները մասնակցեցան մէկ այլ դաստիարակչական դասախօսութեան, այս անգամ նիւթ ունենալով՝ Հ.Մ.Ը.Մ.Ի հիմնադրութիւնը, պատմական կարեւոր դէմքեր եւ դէպքեր:

Հասնելով ընդհանուր յայտագիրի աւարտին, սկաուտները իրենց օրը ամփոփեցին գիտելիքներու վերաքաղով, որմէ ետք տեղի ունեցաւ աստիճանատուցութիւն: Թեկնածուներ ստացան նոր պաշտօններ եւ պարտականութիւններ, ապա կէսօրէ ետք ժամը 3-ին, դարձեալ դրօշակի արարողութեամբ, սեմինար-բանակումը պաշտօնապէս փակուած յայտարարուեցաւ:





Հ.Մ.Ը.Մ.Ի ՊԱՏՈՒԱԲԵՐ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ ԼԻՔԱՆԱՆԻ ՀԵԾԵԼԱՐՇԱԲԻ ԵՒ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԱՏՈՅԵԱՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Կիրակի, 18 Յունիս 2023-ին, Լիբանանի հեծելարչաւի ֆետերասիոնին հովանաւորութեամբ, Տպպայայի «Մարինա» շրջանին մէջ տեղի ունեցաւ այս տարեշրջանի «Թանիոս Միր»-ի անուան առաջին մրցաշարքը, որուն իր մասնակցութիւնը բերաւ Հ.Մ.Ը.Մ.-ի հեծելարչաւի խումբը: «Մասթրը» եւ «էլիթ» դասակարգերուն մէջ, Հ.Մ.Ը.Մ.-ի մարզիկները հանդիսացան երրորդ:

Ամիս մը ետք, 16 Յուլիս 2023-ին, Քորնիշ Նահրի վրայ տեղի ունեցաւ հեծելարչաւի Ժամացոյցի դէմ Լիբանանի ախոյեանութեան մրցաշարքը, որուն ընթացքին «Մասթրը» դասակարգին մէջ առաջին հանդիսացաւ եւ Լիբանանի ախոյեան դարձաւ Հ.Մ.Ը.Մ.-ական եղբայր Քէչիշեան:

Փինկ-Փոնկ

Հեծելարչաւին անցնելով փինկ-փոնկ, Կիրակի, 16 Յուլիս 2023-ին, Մոն Լա Սալի մէջ տեղի ունեցաւ փինկ-փոնկի Պէյրութի ախոյեանութեան մրցաշարքը, որուն՝ տղոց ու աղջկանց անհատական մրցումներուն առաջին հանդիսացան Հ.Մ.Ը.Մ.-ական մարզիկներ Ալէքս Տարազի եւ Լոուի Եահնիեան՝ դառնալով մայրաքաղաքի ախոյեաններ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐՈՒՄԱՂԵՄԻ ՄԵԿՈՒՄԻ ՇՐՋԱՆԻ ԱՆԴԱՄԱԿԱՆ 78-ՐԴ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

21 Ապրիլ 2023-ին, Հ.Մ.Ը.Մ.-ի Երուսաղէմի Մեկուսի Շրջանի ակումբի սրահին մէջ գումարուեցաւ տեղւոյն մասնաճիւղին անդամական 78-րդ Ընդհանուր Ժողովը, որուն մասնակցեցաւ Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայր Ֆէտի Խաթակ Գազանճեան:

Ընդհանուր Ժողովը ընտրեց Մեկուսի Շրջանի 2023-2024 տարեշրջանի եօթը անդամներէ բաղկացած

վարչական հետեւեալ կազմը՝ քոյր Թամար Կիրակոսեան, եղբայրներ Վազգէն Տէմիրճեան, Ճան Տէմիրճեան, Րաֆֆի Եզեկէլեան, Գէորդ Թաշճեան, Պենո Մինասեան եւ Աբո Կիրակոսեան:

Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչին խրախուսական եւ շնորհաւորական խօսքերէն ետք, Ընդհանուր Ժողովը աւարտեցաւ «Յառաջ նահատակ» քայլերդի երգեցողութեամբ:



Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԻ 23-ՐԴ ՆԵՐԿԱՅԱԳՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Թղթակից ՀԱԼԷՊ

ՀՄԸՄԻ Սուրիոյ Շրջանի 23-րդ Ներկայացուցչական ժողովը գումարուեցաւ Կիրակի, 11 Յունիս 2023-ի առաւօտեան ժամը 10-ին, «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» սրահին մէջ:

Ժողովին իրենց մասնակցութիւնը բերին 22 լիազօր ներկայացուցիչներ եւ 13 խորհրդակցական ձայնով մասնակիցներ: Ներկայ էին ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօշկերեան, պատկան մարմինի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեան, ընթացաւարտ Շրջանային Վարչութեան անդամներ, Շրջանային Սկստու. Խորհուրդի եւ խմբապետութեան, Հալէպի, Գամիշլիի, Լաթաքիոյ, Դամասկոսի եւ Քեսապի մասնաճիւղերու, Շրջանային Վարչութեան յանձնախումբերու, Համագգայինի Սուրիոյ Շրջանային

Վարչութեան եւ Սուրիահայ Օգնութեան Խաչի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչներ:

Ժողովին բացումը կատարուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Ներկաները մէկ վայրկեան յոտնկայս լուծեամբ յարգեցին յիշատակը Սուրիոյ եւ Արցախի ՀՄԸՄ-ական նահատակներուն, յատկապէս հրամանատար Բաֆֆի Պչաքճեանին, որուն նահատակութեան յիշատակի օրն էր 11 Յունիսը:

ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Աւետիս Տէրվիշեան բացման խօսքով բարի գալուստ մաղթեց Ժողովի մասնակիցներուն եւ հեզասահ ընթացք՝ Ներկայացուցչական ժողովին: Ան շնորհակալական խօսք ուղղեց Կեդրոնական Վարչութեան եւ պատկան մարմինին, որոնք նեցուկ կանգնեցան Շրջանային Վարչութեան աշխատանքներուն:

Ժողովին ընթերցուեցան մասնաճիւղերու վարչութիւններուն ամփոփ տեղեկագիրները, ապա՝ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը:

Ժողովը քննութեան ենթարկեց ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան անցնող երկու տարիներու գործունէութիւնը եւ «Յոյժ գնահատելի» արժեւորեց զայն:

Յատուկ օրակարգով ժողովը վաւերացուց ՀՄԸՄ-ի Սուրիոյ Շրջանի ներքին ծրագիր-կանոնագիրի առաջարկուած բարեփոխումները:

Ընթերցուեցաւ Կեդրոնական Վարչութեան քառամեայ գործունէութեան ամփոփ տեղեկագիրը:



Առաջարկներ ներկայացուցեցան յառաջիկայ Շրջանային Վարչութեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովին:

Ժողովին այցելեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Եպս. Ազգարեան: Ան հեզասահ ընթացք մաղթեց ժողովին եւ ուժ, կորով եւ ծով համբերութիւն՝ ժողովականներուն, որ պէտք ձեռք-ձեռքի տալով կարողանանք մեր ազգին եւ ժողովուրդին ազգային, եկեղեցական, մարզական եւ մշակութային գործունէութեան նաւը թիավարել եւ հասնիլ բարւօք լուծումներու:

Մակար Եպս. գնահատեց ընթացաւարտ Շրջանային Վարչութիւնը եւ յաջողութիւն մաղթեց նորընտիր Շրջանային Վարչութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօզկերեան գնահատեց Շրջանային Վարչութեան անցնող երկու տարուան աշխատանքը: Եղբայրը դրուատեց Սուրիոյ հինգ մասնաճիւղերուն, Տէրիքի սկստական կորիզին եւ Շրջանային Սկստու. Խորհուրդին ծառայութիւնները եւ մաղթեց, որ բոլորը գործակցաբար յառաջ տանին միութեան առաքելութիւնը:

Աւարտին, պատկան մարմինի ներկայացուցիչ Վրէժ Եագուպեան խօսք առնելով իր կարգին գնահատեց ընթացաւարտ Շրջանային Վարչութիւնը եւ զօրակցութիւն յայտնելով մաղթեց, որ նորընտիր Շրջանային Վարչութիւնը նոր ճրգտումներով եւ տեսլականով շարունակէ միութեան առաքելութիւնը:

Իր աշխատանքներու աւարտին, Ներկայացուցչական Ժո-



ղովը յառաջիկայ երկամեայ նստաշրջանի նոր Շրջանային Վարչութիւնը ընտրեց հետեւեալ կազմով.- եղբայրներ Յարութ Օգճեան, Յովիկ Սիւլահեան, Կարօ Մահսէրէճեան, Կարօ Ապաճեան, Աբիկ Խաչոյեան, քոյրեր Նայիրի Ազարիկեան, Անի Մինասեան, եղբայրներ Յարութ Գաբրիէլեան (Լաթաքիա), Յակոբ Հանէշեան (Քեսապ), Միհրան Տիգրանեան (Գամիշլի) եւ Պօղոս Խաճարեան (Դամասկոս):

Այնուհետեւ ընտրութիւն կատարուեցաւ Սուրիոյ Շրջանի պատգամաւորներու եւ փոխ պատգամաւորներու, որոնք իրենց մասնակցութիւնը պիտի բերեն Հ.Մ.Ը.Մ.ի Պատգամաւորական 13-րդ Ընդհանուր Ժողովին, Հայաստանի մէջ: Ժողովը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

Ս. ԱՍՏՈՒԾԱԾԻՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ԱՒԱՆԴԱԿԱՆ ՏՈՂԱՆՅՔ ՔԵՍԱՊԻ ՄԷՋ

Թղթակից ԲԵՍԱՊ

Հովանաւորութեամբ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Մակար Եպս. Ազգարեանի, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութեան, Կիրակի, 13 Օգոստոս 2023-ին, Ս. Աստուածածինի Վերափոխման տօնին առիթով, յետ Սուրբ եւ Անմահ Պատարագի, Քեսապի մէջ տեղի ունեցաւ սկստական աւանդական տողանցք, մասնակցութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի, Հայկպի, Լաթաքիոյ եւ Քեսապի մասնաճիւղերու շեփորախումբերուն եւ սկստական կազմերուն:

Տողանցքը սկիզբ առաւ Քեսապի Ս. Աստուածածին եկեղեցիէն, մասնակցութեամբ Առաջնորդ Սրբազան Հօր,

Մանուկ Վրդ. Պրիխանեանի, Քեսապի հոգեւոր տեսուչ Անդրանիկ Վրդ. Քիւրիւմեանի, Ազգային Վարչութեան անդամ Արմէն Գասպարեանի, Քեսապի Հայ Աւետարանական համայնքի հոգե-

ւոր հովիւ պատուելի Շանթ Ակիշեանի, Քեսապի պետական աւագանիին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Մանուկ Քէօզկերեանի, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչու-



թեան, Շրջանային ըՄ-կառուտ. Խորհուրդին եւ մասնաճիւղերու վարչութիւններուն:



Համալիրէն ներս տեղի ունեցաւ պաշտօնական հաւաք, որուն ներկայ գտնուեցաւ Սուրբիոյ Հայ Աւետարանական համայնքի վերապատուելի դոկտ. Յարութիւն Սեփմեան:

Համայնքապետ Յարութիւն Սեփմեան, Յարութիւն Սեփմեանի Սկառուտ. Խորհուրդի անդամ քոյր Լիլիթ Փայասեան:

Արաբերէն լեզուով խօսք արտասանեց եղբ. Մինաս Պալեան: Հայերէն լեզուով խօսք արտասանեց Հ.Մ.-Ը.Մ-ի Սուրբիոյ Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Յովիկ Սիւլահեան:

Շեփորախումբերը հնչեցուցին Սուրբիոյ եւ Հայաստանի քայլերգները, ինչպէս նաեւ հայրենասիրական երգեր:

Այնուհետեւ, իր սրտի խօսքը փոխանցեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Աստուածածինի Վերափոխման տօնի աւանդական տողանցքին առիթով ան գնահատեց Հ.Մ.-Ը.Մ-ի մեծ ընտանիքը, որ Քեսապի մէջ տարիներու աւանդութիւնը պահպանելու տէր կը կանգնի մեր ազգային արժէքներուն:

Հ.Մ.Ը.Մ.ՈՎ ԱՊՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ ՄԸ

(ԵՂԲ. ՍԹԻՒ ԱՐԹԻՆԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ)

17 Յունիս 2023-ին, Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանը խոր կսկիծով կորսնցուց բազմավաստակ Հ.Մ.Ը.Մ-ական, միութեան «Արտակարգ» շքանշանակիր եղբ. Սթիւ Արթինեանը, որուն նուիրեալ ծառայութիւնները պիտի յիշուին շատ երկար:

Եղբ. Սթիւ Արթինեան ծնած է Պէյրութ: 1966-ին, երբ ան 6 տարեկան էր, ընտանիքը կը տեղափոխուի Յունաստան եւ ապա՝ 1970-ին կը հաստատուի Միացեալ Նահանգներ, ըՄ-փրինկֆրիտ Մասաչուսէթս, ուր հայկական փոքր գաղութ մը գոյութիւն ունէր արդէն: Երեք տարի Արեւելեան շրջանի մէջ ապրելէ ետք, եղբ. Սթիւ եւ ընտանիքը կը տեղափոխուին Կլենտէյլ, Գալիֆորնիա, ուր ան գործօն մասնակցութիւն կը բերէ Մ. Աստուածածին եկեղեցւոյ մէջ:

Եղբ. Սթիւ կը վարէ Marketing-ի փոխ նախագահի պաշտօնը ընկերութեան մը մէջ, որ կը գործէ Գանատայի եւ Մ. Նահանգներու մէջ:

Իբրեւ սկառուտ, եղբ. Սթիւ ութ տարեկանին անդամակցած է Հ.Մ.Ը.Մ-ի Յունաստանի մասնաճիւղին: Մ. Նահանգներ տեղափոխուելէ առաջ, ան մասնակցած է սկառուտական գանազան աշխատանքներու:

1973-ին ան ադամակցած է Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան, իսկ 1978-ին մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ-ի Լոս Անճելըսի մասնաճիւղի ընկերային յանձնախումբին եւ ապա ստանձնած է նոյն յանձնախումբին ատենապետի պաշտօնը: Այդ օրերուն Լոս Անճելըսի մասնաճիւղի ընկերային յանձնախումբը ունէր աւելի քան 60 գործօն անդամներ:

Եղբ. Սթիւ երկար տարիներ ծառայած է իբրեւ մասնաճիւղի վարչութեան անդամ եւ 5 տարի իբրեւ մասնաճիւղի ատենապետ: Այնուհետեւ, ան 5 շրջան ընտրուած է Շրջանային Վարչութեան անդամ: 2007-2010 եղած է Շրջանային Վարչու-

թեան ատենապետ: Եղբ. Սթիւ մօտէն հսկեց Շրջանային Վարչութեան կեդրոնի եւ «Գէորդ Անտոնեան» սրահի շինարարական աշխատանքներուն: Սրահին բացումը կատարուեցաւ 2009-ին, Իկլլ Ռաքի մէջ:

2007-ին, եղբ. Սթիւի հետեւողական ջանքերուն շնորհիւ կարելի եղաւ իրականացնել Հ.Մ.Ը.Մ-ի Թեքուլյա բանակավայրին սեփականութիւնը՝ 105 հազար քառակուսի մեթր բանակավայր Ֆրէյժըր Փարքի մէջ:

2019-ին, «Հ.Մ.Ը.Մ-ի Օր»-ուան տօնակատարութեան ընթացքին, եղբ. Սթիւ Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութեան



ՄԱՀԱԶԳ

Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական Վարչութիւնը կը գումբէ Հ.Մ.Ը.Մ-ի Արեւմտեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան նախկին ատենապետ, վաստակաշատ միութենական եւ «Արտակարգ» շքանշանակիր՝

ԵՂԲ. ՍԹԻՒ ԱՐԹԻՆԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Շաբաթ, 17 Յունիս 2023-ին, Լոս Անճելըս, Միացեալ Նահանգներ:

կողմէ արժանացաւ «Արտակարգ» պատուանշանի, իբրեւ գնահատանք Հ.Մ.Ը.Մ.ականի իր բեղուն վաստակին եւ երկարամեայ ծառայութիւններուն:

2019-ին եւ 2022-ին ան բծախնդրորէն ստանձնեց Նաւասարդեան 44-րդ եւ 45-րդ մարզախաղերու Յաղթանակի Պարահանդէսի յանձնախումբի ատենապետի պաշտօնը: Վերջին շրջանին ան կը վարէր Նաւասարդեան 46-րդ մարզախաղերու յաղթանակի պարահանդէսի ատենապետի պաշտօնը, սակայն անակնկալ եւ վաղաժամ մահը կիսատ ձգեց իր աշխատանքն ու ծրագիրները, ցնցելով Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը:

2015-ին, Հայոց Յեղասպանութեան 100-ամեակին, եղբ. Սթիւ ստանձնեց «Արդարութեան քայլարշաւ»ի Marketing-ի յանձնախումբին ատենապետութեան պաշտօնը: 2018-ին ան ստանձնեց Լոս Անճելըսի մասնաճիւղին հիմնադրութեան 50-ամեակի տօնակատարութեան յանձնախումբին ատենապետութիւնը:

2012-ին, եղբ. Սթիւ ստանձնեց Մ. Նահանգներու Հայ Դատի յանձնախումբի թեկնածուի ատենապետութեան պաշտօնը: Ան երկու շրջան ծառայած է իբրեւ Ազգային Առաջնորդարանի հանրային կապերու յանձնախումբի համանախագահ: Ծառայած է նաեւ ՀՕՄ-ի եւ բազմաթիւ այլ կազմակերպութիւններու յանձնախումբերուն մէջ: Եղած է ատենապետ Հայ Դատի յանձնախումբի Շ3 խորհուրդին, հսկելով յանձնախումբին կալուածներուն եւ դաստիարակչական ծրագիրներուն:



Եղբ. Սթիւ միշտ պատրաստ եղած է կամաւոր ծառայութեան: Ան կը հաւատար, որ Հ.Մ.Ը.Մ.ի ուժը իր «կամաւոր բանակ»ին մէջն է: Եղբ. Սթիւի համար շատ կարեւոր էր կարողութիւններու բազմազանութիւնը եւ դրական անը միութեան մէջ:

Խորազգաց ցաւակցութիւններ իր այրիին՝ Իվէթին, ընտանեկան պարագաներուն եւ երկար տարիներ իրեն գործակից Հ.Մ.Ը.Մ.ական քոյրերուն եւ եղբայրներուն: Հողը թեթեւ գայ վրան:

ԵՂԲ. ՄՈՎՍԷՍ ԱՂԱՄԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

(ՅԱՆՈՒՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ԽՕՄՔ՝ ԵՂԲՕՐ ՎԵՐՋԻՆ ՀՐԱԺԵՇՏԻՆ)

Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի մասնաճիւղը եւ Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ ընտանիքը սրտի խոր կակիծ մը ունին: Մեծ ցաւ մը կը պատէ բոլորը, որովհետեւ մեզմէ յաւէտ բաժնրւած է տասնեակ տարիներու ծառայութիւն ունեցող, վաստակաշատ նուիրեալ եղբայր Մովսէս Աղամեանը:

Կը դժուարանանք եղբ. Մովսէս Աղամեանի երախտաշատ, հայանուէր եւ ազգանուէր ծառայութիւնն ու վաստակը ամփոփել սեղմ տողերու մէջ:

Այնուամենայնիւ, կու գանք յիշեցնելու, թէ եղբ. Մովսէս Աղամեան ծնած է 1950-ին: Մանուկ հասակէն ան մեծ սէր ունեցած է մարզանքի հանդէպ, մանաւանդ՝ ֆուլթպոլի: Սկիզբը խաղացած է կրտսերներու, ապա պատանիներու եւ երիտասարդական խումբերու հետ, իսկ վերջապահութեան մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի երէց տղոց խումբին, որուն յաղթանակները մեծ խանդավառութիւն ստեղծած են Գամիշլիի հայ գաղութէն ներս:

Եղբ. Մովսէսը ո՛չ միայն ֆուլթպոլ խաղացած է, այլեւ՝ մարզական կեանքի աւարտին եւ անոր յաջորդող տարիներու




րուն մաս կազմած է Հ.Մ.Ը.Մ.ի իրերայաջորդ վարչութիւններու կազմերուն: Երկար տարիներ եղած է մարզական ընդհանուր պատասխանատու, իր նուիրական գործունէութեամբ հարազատ թարգմանը հանդիսանալով միութեան «Բարձրացիր-բարձրացուր» նշանաբանին, իր հաւատարիմ եւ աշխոյժ գործունէութեամբ դառնալով վարակիչ գեղեցիկ օրինակ մը իր շքրջապատին, զաւակներուն եւ կրտսեր եղբայրներուն, որոնք ներկայիս կը ծառայեն մեր ազգային-եկեղեցական կազմերէն ներս: Եղբ. Մովսէս նաեւ օգտակար դարձած է Հ.Մ.Ը.Մ.ի Հայէպի մասնաճիւղի ֆուլթպոլի խումբին՝ զայն օժտելով Գամիշլիի որակեալ ֆուլթպոլիստներով, որոնք մասնակցած են Սուրիոյ ֆուլթպոլի առաջնութեան:

Նկատի առնելով իր երկար տարիներու նուիրեալ գործունէութիւնը եւ անսակարկ զոհաբերութիւնը, Հ.Մ.Ը.Մ.ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը զինք պարգեւատրած է «Ծառայութեան» շքանշանով:

Հողը թեթեւ, խունկ, ծաղիկ ու աղօթք շիրիմիդ շա՛տ սիրելի եղբ. Մովսէս Աղամեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ՔԱՐՈԶԶԱԿԱՆ ՔԱՏՐԵՐՈՒ...

(Շարունակուած 11-րդ էջէն)



ԵՐՐՈՐԳ ՆԻՒԹԸ

Յաջորդ շաբաթ, 24 Յունիսին, քարոզչական առցանց դասընթացքին մասնակիցները ծանօթացան տեղեկատուական-քարոզչական աշխարհի կարեւոր միջոցներէն մէկուն՝ հարցազրոյց վարելու ձեւերուն եւ հիմնական սկզբունքներուն: Քրիստ Խրոյեան մասնագիտական մօտեցումով եւ փառլոր փոյնթով ներկայացուց հարցազրոյցի մը նախապատրաստութեան հանգրուանը, հարցումներ մշակելու եւ ուղղելու ձեւերը, ապա՝ կատարուած հարցազրոյցը արտագրելու, խմբագրելու եւ վերնագրելու եղանակը: Ան նաեւ նշեց հարցազրոյցներ հրատարակելու ձեւերը՝ ուղղակի հարցում-պատասխանի եւ կամ պատմողական գրութիւններով:

Նիւթին ներկայացման յաջորդեց աշխոյժ քննարկում:

ՉՈՐՐՈՐԳ ՆԻՒԹԸ

Ամսուան մը վրայ երկարած չորս հանդիպումներէ ետք, Շաբաթ, 1 Յուլիսին աւարտեցաւ քարոզչական քատրերու պատրաստութեան նպատակով Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան քարոզչական յանձնախումբին կազմակերպած առցանց դասընթացքը, մասնակցութեամբ միութեան աշխարհասփիւռ կառոյցի աւելի քան



50 ներկայացուցիչներու:

Սեմինարին չորրորդ եւ վերջին հանդիպումին բացումը կատարեց եւ ներկաները ողջունեց քարոզչական յանձնախումբի անդամ քոյր Նորա Բարսեղեան: Օրուան գեկուցաբերն էր եղբ. Գեորգ Յակոբճեան: Ան ներկայացուց «Ընկերային ցանցերու աշխարհը եւ հոն տեղադրուելիք նիւթերու եւ նկարներու ընտրութիւնը» նիւթը:

Եղբ. Յակոբճեան նախ պարզեց ընկերային ցանցերու առնչուած վիճակագրական տուեալներ, որոնք իբրեւ գիտական հիմք ծառայեցին իր նիւթին յաջորդող հանգրուաններուն: Վիճակագրական տուեալներուն առնչութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի քարոզչական աշխատանքներուն հետ վերլուծելէ ետք, եղբ. Յակոբճեան ճշդեց ընկերային ցանցերու գործածութեան ռազմավարական ուղղութիւնները՝ կեդրոնանալով յստակ նպատակներ որդեգրելու, զանոնք իրականացնելու յստակ ծրագիր մշակելու, մարդուժ տրամադրելու եւ քիրախային զանգուածներ նկատի ունենալու կարեւորութեան վրայ: Ապա, ան շեշտեց Հ.Մ.Ը.Մ.ի նպատակներուն, անդամներուն եւ համակիր զանգուածին ծառայող ընկերային ցանցերու ճիշդ հարթակներ ընտրելու, հայալեզու եւ բազմալեզու բովանդակութիւն եւ մարտավարութիւն զարգացնելու, ցանցերուն cyber անվտանգութիւնը ապահովելու, արխիւ պահելու, միութեան հանրաճանաչութեան եւ հեղինակութեան ամրապնդման գծով բժախնդիր մօտեցում ցուցաբերելու անհրաժեշտութիւնը:

Ռազմավարական ընդհանուր ուղղութիւններ ճշդելէ ետք, եղբ. Յակոբճեան օրինակներով եւ գործնական մատնանշումներով անդրադարձաւ ընկերային ցանցերու վրայ ազդեցիկ եւ գրաւիչ քարոզչութիւն եւ հաղորդակցութիւն կատարելու հանգրուաններուն, օրէնքներուն, բովանդակային ոլորտներուն, ձեւերուն, նրբութիւններուն եւ հմտութիւններուն: Աւարտին, ան պատասխանեց սեմինարի մասնակիցներու հարցումներուն:

«ԵՂՔ. ԺԻՐԱՅԻՐ ՍԱՐԳԻՍԵԱՆ ՖՈՆԾ»ԻՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ



Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Ժիրայր Սարգիսեանի յիշատակին, եղբոր անունը կրող ֆոնդին կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները.-

Արմանո եւ Թամար Քիլիճեան	
(Սան Ֆրանսիսքո)	5000 \$
Մարալ Թարիզեան (Մոնթրէալ)	4000 \$
Մատլէն Թարիզեան (Մոնթրէալ)	1000 \$
Ատոմ եւ Սելլա Թոնճուկեան (Մոնթրէ Սերենո)	1000 \$
Ճ. եւ Ռ. Տապալաղեան (Փասատենա)	1000 \$
Ալին եւ Շոն Աղապալեան (Օրինտա)	1000 \$
Վիզէն եւ Նանօր Էքմէքճեան	
(Սան Ֆրանսիսքո)	1000 \$
Հիլտի Սարգիսեան (Եունթվիլի)	1000 \$
Արփիար եւ Թամար Սարգիսեան	
(Պեվըրլի Հիլզ)	1000 \$
Հ.Մ.Ը.Մ.Ի «Մասիս» մասնաճիւղ	
(Գոնոկա Փարք)	1000 \$
Հայկ եւ Մարի Քիլիճեան (Հիլսպուրկ)	1000 \$
Շահինեան ընտանիք (Սան Ֆրանսիսքո)	1000 \$
Անժել Ալլանճեան (Սան Մարթօ)	500 \$
Ադէլ եւ Ռիմա Ենիգոմճեան (Մոնթրէ Սերենո)	500 \$
Պետիկեան ընտանիք (Կլեմոնտլլ)	500 \$
Արա Գալֆայեան (Կլեմոնտլլ)	500 \$
Վիզէն եւ Նոնօ Արէլեան (Թուսթին)	500 \$
Սեւակ եւ Թամար Սարգիսեան (Փասիֆիքա)	500 \$
Մարալ եւ Հրայր Լէոն (Լա Գրետենթա)	500 \$
Հրայր եւ Սիլվա Սարգիսեան	
(Սան Ֆրանսիսքո)	300 \$
Վիզէն եւ Տոբին Տազետեան (Օրէնճ)	250 \$
Համազգայինի Սան Ֆրանսիսքոյի	
մասնաճիւղ (Սան Ֆրանսիսքո)	250 \$
Շահէ եւ Անի Ենիգոմճեան (Լոս Կարոս)	250 \$
Էմիլ եւ Ատելինա Մաղաքեան (Փլեզէնթ Հիլ)	200 \$
Աշխէն եւ Արմէն Սեղրակեան (Պրին Մար)	200 \$
Ռոստ եւ Անի Շահինեան (Լոս Անճելլոս)	200 \$
Քամալ եւ Ճէսիքա Նասսար (Միլպրէօ)	200 \$
Տիգրան եւ Լենա Տէր Ակոբեան (Լաֆայէթ)	200 \$
Արմինէ եւ Էտուարտ Ժամկոչեան	
(Ուոլմաթ Քրիք)	200 \$
Սահակ եւ Հեղնար Պալեան (Կրանատա Հիլզ)	200 \$
Երանուհի Կարապետեան (Ճէքսոն)	200 \$
Արլէն Պասմաճեան եւ Աթթիլօ Ճափիքա	
(Սան Պրուիս)	200 \$
Լենա եւ Վահէ Մանուկեան (Լոս Ալթոս Հիլզ)	
	200 \$
Վանա եւ Վարանդ Եպիփոնեան (Գանատա)	150 \$

Միմոն եւ Սիլվա Տէմիրճեան (Գանատա)	150 \$
Նելլի Շրիքեան	
(Սան Մարթօ)	150 \$
Վարուժան Սերոբեան	
(Գանատա)	150 \$
Վարուժան եւ Թաթիանա Մարտիրոսեան ընտանիք	
(Սան Ռաֆայէլ)	100 \$
Մարոն եւ Գարօլին Արիստակէսեան (Սան Պրուիս)	100 \$
Չենոբ եւ Անի Այանեան (Սան Ֆրանսիսքո)	100 \$
Յակոբ եւ Մարալ Նազարեան (Գանատա)	100 \$
Անի Տուզճեան (Սան Տիէլօ)	100 \$
Անի եւ Յասմիկ Կրեկորեան (Փլեզէնթ Հիլ)	100 \$
Շարլ եւ Օֆելիա Մենգիկեան (Ուոլմաթ Քրիք)	100 \$
Չարուհի Օլմասաքեան (Լա Քրետենթա)	100 \$
Արաքսի Տէրունեան (Փասիֆիքա)	100 \$
Լուսի Գասպարեան (Սան Հոզէ)	100 \$
Հարթիկ եւ Արշօ Աւետեան (Սան Գարլոս)	100 \$
Անահիտ եւ Հայկ Չաքքալեան (Սանթա Գլարա)	100 \$
Յէտի Խաժակ Գազանճեան (Շուէտ)	50 \$

Հ.Մ.Ը.Մ.Ի «ENDOWMENT FUND»ԻՆ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՆՈՒԻՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ եղբ. Ժիրայր Սարգիսեանի յիշատակին, միութեան «Endowment Fund»ին կատարուած են հետեւեալ նուիրատուութիւնները.-

Վիզէն եւ Նոնօ Արէլեան	10.000 \$
Արմանո Քիլիճեան	1000 \$
Ռազմիկ Փանոսեան	500 \$
Ճորճ Գոլյումճեան	200 \$

«ՄԱՐԶԻԿ»ԻՆ ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Եղբ. Վաչէ Տէմիրճեան (Աւստրալիա)
1000 աւս. տոլար

Հ.Մ.Գ.Մ. HOMENETMEN



#FueraAzerbaiyanDeArmenia

